


T. Tolson 1978

Puapū

3

1978



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Ս. ՓԱՆՈՍԵԱՆ	Ազատաներու կռիւնչին տակ . . .
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Զիտք
» »	Անսպասելի
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ	Առաջին նատարանը . . .
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	Ընդունել գիւ . . .
ԼԵՌ ԿԱՄՍԱՐ	«Իշաբար շարուած ողորմի»
Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Գարնան հետ
» »	Կէս գիշերային պտոյտ
» »	Անվերադարձ պտոյտ
» »	Տոզանգի
Ա. ՀԱՅԿԱԶ	Երկրորդ անգամ արդարադատութեան պալատին մէջ
Ս. ՊԵՔԵԹ	Սպասելով Կոտոյին
Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Անկարողութեան գրականութիւնը
Լ. ՄԿՐՏԶԵԱՆ	«Կոնախնի» հանդէսի դերը
Ն. ԶԱՐԵՆՆԻՍԵԱՆ	Արդի գրականութիւնը կը հարցադրէ լեզուն եւ արտայայտութեան կազմակերպիւնը
* * *	Մ. Պէշիկպաշեանի սերը
Մ. ՊԵՇԻԿՊԱՇԷԱՆ	Յետին հառաչներ
Վ. ԹԵՔԵԱՆ	Կ. Արմենեանի «Մարմին եւ արիւն» հատորը
Կ. ԱՐՄԵՆԵԱՆ	Կռչում
Է. ՍԱՐԱՃԵԱՆ	«Պէպէք»ի բեմադրութիւնը
* * *	Նշմարներ

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԺԵ. ՁԱՐԻ. ԹԻԻ Յ

Մ Ա Ր Տ

1 9 7 8

Գ Է Յ Ը Ո Ւ Թ

Ս. Փ Ա Ն Ո Ս Ե Ա Ն

ԱԳՈՒԱՒՆԵՐՈՒ ԿՈՒՆՉԻՆ ՏԱԿ...

Ա.

Աննպատ իր դերին դողը սիրտին մէջ՝ Աքսոր Զանազանեան կը բարձրանար գրացիներուն տունին տասը մաս առաքիճանէն, հնամաշ տախտակներուն ճրճոտոցը վեր ճամբելով: Զտեսաւ հետաքրքրութենէ մզուած ազլիկան զլուխը փոքրիկ լուսամուտին մթութեան ետին, ուրիշ փախուստ պիտի տար նոյնքան հապճեպօրէն: Իայց իր միաբնի առջեւ ունէր, երկու օր առաջ տեսած Սիրունին ախրազէմ ժպիտը: Աշխատանքէն տուն կը վերադառնար, երբ դտաւ ազլիկը ելարանին զլուխը, փայտեայ սլանին կռթնած: Վերջալոյսին շողքը բոտորած էր անոր հմայիչ դէմքը: Ինք բռնեց ազլիկան աչքերը, որ իրեն կը նայէին. ակնթարթ նայուածք...: Ոտքը կտխ ձգեց ու նայեցաւ շուրջը:

— Որո՞ւ կը սպասես, Սիրուն ջա՛ն...

Զբաշուեցաւ ջան ըսելէն. անոր հետ ծանօթութիւնը կու գար կնոջ ողջութեան օրերէն: Աշխէնին հետ մտերիմներ էին. իրը՝ եղբայրական ըզգացում մըն էր Սիրունին հանդէպ: Կնոջ մահէն ետք եզաւ անիկա ցանկութիւն...: Ինք կորսնցուցած էր դեռատի կինը, ան՝ այն բունը, որով կը փաստուէր ազլիկայ մը անբժուութիւնը՝ ամուսնութեան զիշերը...: Եւ Սիրուն, որ կը դողար իր շուքէն, չմերժեց նետուած թաշկիրնակը:

— Մէկը տեսնելու դնաց քեռակինս. ուշացա՛ւ...

Աքսոր օգտուեցաւ պահէն,

— Գրա՞նս, Սիրուն ջա՛ն, Աշխէնս. կ'ըսէր՝ ունենայի՛ր աղբար մը, Սիրունը հարս կը բերէի տունը...

Ազլիկը կարմրեցաւ. կարմիրը ատու-քայեց այտերը, հասաւ մինչեւ ականջածայր ու հոն դարձաւ-եզաւ կարմիր կակաչ,

— Ախարար մը ունենա՛ր, չէ՛ր ըսեր անանկ, — եւ Սիրուն կախեց դը-
լուխը կուրծքին, որ նեղ կու դար յուղումին :

— Աշխէնը չկա՛յ. իր մահէն ետք՝ ե՛ս եմ իր աղբարը . . .

Սիրուն չպատասխանեց ու ետ դարձաւ փախաւ ներս : Աքսոր Զանա-
ղանեան քաղեց մէկ քանի քայլ ճամբան, որ դէմ կ'առնէր իր բնակարանին .
«մի՞թէ նետած քարը դպա՛ւ աղջկան սիրտին» : Երբ ելաւ իր տան սանդխա-
մատերէն, իրեն այնպէս թուեցաւ, թէ կը լսէր աղջկան հեկեկոցը ներաշ-
խարհին մէկ անկիւնէն : Նայեցաւ փայտորմէն կախուած Աշխէնի հարսա-
նեկան նկարին : Կը ժպտէին անոր աչքերը, այնպէս՝ ինչպէս կենդանու-
թեանը կը ժպտէր Աշխէն : Սիրտը լեցուեցաւ . նայուածքը պղտորեցաւ, մէ-
կը սեղմեց կոկորդը, որ անկարող եղաւ թուքը կլլել : Պահե՛ց կնոջ սուղը,
ահա՛ վեց ամիս . կրնա՛ր պահել տակաւին տարիներ . . . Բայց, ահա կը յի-
չէր Աշխէնին մերձ ի մահ ըրած առաջարկը, — «Սուգէդ կ'ելլես վեց ամի-
սէն եւ կը կատարես իղձս . . .» :

Վեց ամիսը լրացած էր երէկ . դիչերը երազին եկաւ կինը . . . եւ Աք-
սոր Զանաղանեան կը բարձրանար գրացիներուն տունը, համաձայն Աշխէ-
նին տուած խոստումին : Կիրակի երեկոյ էր . տաք ամառ . կռնակի վրայ բաց
էին թողուած դուռ ու լուսամուտ . հոս-հոն կը սկսէին սգըրտալ քէմփին
մէջ ճրագները : Աքսոր դեռ աստիճաններուն գլուխը չհասած՝ կանչեց .

— Տո՛ւնն էք, զբացի Սերոր :

— Տո՛ւնն ենք, հրամէ՛, եկուր ներս, — եղաւ քեռակին Սրբուհին
պատասխան հրաւերը, միևնույնի վրայէն բարձրանալով էրկանը՝ Սերոր
աղբարին հետ :

Հրամցուցին զբացի հիւրը, որ նստի աիւանին վրայ : Աքսոր նստեցաւ
տիւանին մէկ անկիւնը՝ խելօք մանչուկի մը նման, ձեռքերը դրած ծունկե-
րուն, աչքը յառած՝ կից սենեակին բաց դրան, որուն ետին լսել կարծեց ի-
րարանցման իլրտում մը :

— Բարո՛վ եկար, — կրկնեց քեռակինը :

— Է՛, հրամէ՛ր ես, պարո՛ն Աքսոր, բարի ըլլայ դա՛ւլ, ի՞նչ կայ-
չկայ դուրսը, — Սերոր աղբար կը կրկնէր իր սովորական եւ անմիտ խօս-
քը, որ ասացուածքի նիւթ էր եղած ծանօթներու միջեւ :

— Բարի՛ տեսանք . ամէն բան նոյնն է դուրսը . նորութիւնը ձեր մօտ
կ'ըլլայ, — Աքսոր Զանաղանեանին միտքը սար ու ձոր ինկած չէր . այլ՝ կը
դառնար ինքն իր վրայ, հոյի պէս : Կը սպասէր, թէ ահա, կու դար Սիրու-
նը, կը թօթուէր ձեռքը ու կը նստէր աիւանին միւս անկիւնը եւ ինք անկա-
րող կ'ըլլար բացուիլ անոր ներկայութեան :

Բ .

Քեռի-քեռակինը կը նմանէին խակ քաղուած պտուղներու, որ նետ-
ւերով մառանին մէկ անկիւնը, ոչ-կենսատու եւ անարեւ մթնոլորտի մը մէջ
կը հասունանան ու կը փլխին, ժամանակէն առաջ եւ աուն-տեղ չեն դառնար
— Աստուծոյ հրամանով կը մնան անզաւակ — կը վերածուին գիրար ամ-
բողջացնող պտուած երկու աղքատ էակներու : Կարկտուք եւ պատահական
բեռնակրութիւն կը բառնան տնային կարիքները իրենց ուսին . կ'ապրին ու
չեն մեռնիր եւ մէկ-մէկ Կիրակիները կը բացուին, երբ Սիրուն կ'այցելէ գի-
րենք ու կը մնայ մինչեւ իրիկուն : «Անման հրապոյր մը ունի իրենց եղբօր

աղջիկը. շա՛ա է զեղեցիկ. յոյսերն ալ զեղեցիկ են ու փայլուն...»: Իսկ աղջկայ մը աղուորութիւնը կը նմանի նաւի վրայ բեռցուած ապրանքի. ծո՞վը փոթորկոս՝ ալեկոծ ու բախաին ձգուած նաւը խաղալիք, ամէն վայրկեան վտանդի՛ ենթակայ...: Կրաւորական զլաստութիւն մը ունէր Սիրուն. հազիւ գտած էր իր լիութիւնը տասնըվեցին մէջ, երբ դասատու վարժապետը, որուն անցեալը ծանօթ չէր որբանոցի անօրէնութեան, սկսաւ դարպասել աղջկան: Սպնտո ժողիաները Սիրունին կը մատնէին արբուեքէն անցըր, որմէ կը յառաջանային անրոց հրդեհներ կողերուն մէջ: Վարժապետը փորձառու կը թուէր ըլլալ նման հրդեհներ հրահրելու՝ աչքը ոչ-րաց աղջկաներու մօտ: Եւ Սիրուն հաւատաց քիչ ըսուած խորհրդաւոր բառերուն: Զեռքի շփումներուն, նայուածքին, ակնարկութիւններուն յանձնեց սիրտը, որ այլեւս հանգիստ չունէր: Կնոջական բնազդը սկսաւ հիւսել երազի, կարօտանքի եւ ցանկութեանց դունեղ հոգեվիճակ մը՝ սարգոստայնի անտես թելերով: Օր մըն ալ, երբ կ'երթար վարժապետին խօսքը, իրբեւ թէ շարագրութեան տետրերը վերցնելու, թելազրանքի վրայ, ճանչցաւ այր մարդը, որ սէր հոլովեց եւ տուաւ բազում խոստումներ: Գիտցաւ, թէ կը կորսնցնէր իր ամենաթանկ եւ միակ հարստութիւնը: Զէր կրնար բողոքել, արատ-յայտուիլ ուրիշներու՝ իրեն հեռ պատահածին շուրջ: Մարդը իր վարժապետն էր, զոր կը սիրէր այլեւս: Շարունակեց այցելութիւնները, այն յոյսով, թէ մօտիկ ապագային վարժապետը զինք պիտի հանէր որբանոցէն ու պսակուէր հետը...: Սէրը կոյր է, կ'ըսեն. սէրը չէր կրնար կոյր ըլլալ, իրենք եղան կոյր եւ իրենց վերջին հանգիպումը, երկու ամիսներու կարօտէն ետք, աննպաստ վայրի մը մէջ՝ բացաւ դադանիքը, դայթակղեցնելով ամբողջ որբանոցը... Փախաւ մարդը եւ Սիրուն մնաց տեղն ու տեղը ոչնչացած, կատարուած իրողութեան ամբողջ նուաստութիւնը զիրկին մէջ: Եւ այդպէս ալ չհասկցաւ, թէ վարժապետին խոստումները իրա՞ւ էին, թէ կեղծաւոր: Արտաքսուեցաւ որբանոցէն Սիրուն եւ զրկուեցաւ քէմփ, իր քեռիին տունը...: Բերուեցաւ հոն Կիրակի օր մը, իրբեւ թէ այցելութեան, սովորականին պէս. ու հոն մնաց զիշերը, յաջորդ շաբթուան եօթ օրը, շաբաթներ, ամիս մը, երկու՝ եւ ահա լման տարի մը: Քեռի-քեռակինը, սկիւրբի օրերը կրցան պատրուակներ յօրինել՝ որբուհի քրոջ աղջկան քէմփ մնալը արդարացնելու, դուռ-դրացի կիներու հարց ու փորձին կուրծք տալով: Տղայ-տէր մայրեր հեռաքրքրուած էին Սիրունին զեղեցիկութեամբ: Քէմփին մէջ սկսաւ հիւսուիլ աղջկան դովքը, — «Հո՛ւրի-փէրիի կը նմանի Սերոր աղբարենց Սիրունը. չուսես-չխմես՝ իրեն նայիս... ամմա՛, ի՞նչ գիտնաս, աղջկան դէմքէն արուն-արցունքը անպակաս կը տեսնես», — կ'ըսէին: Իսկ քեռի-քեռկին ախ ու վախով գլուխը բարձին կը դնէին: Մէկ-երկու շաբաթէն, աղջկան մեղքը, մաքրանկեղուած ապրանքի պէս՝ քէմփ բերուեցաւ որբ ընկեր-ընկերուհիներու միջոցով...

Շրջապատը մէկէն փոխուեցաւ: Սիրունին դովքը հիւսողները սկսան աչք-ունքով ցոյց տալ աղջիկը. դատնացան անոր զեղեցիկութեան տակ թաղուած վիրաւորանքէն: Ուրիշներ հետապնդեցին Սիրունը, երբ դատն գինք փողոցը պոտահամար. երիտասարդներ՝ խճաքարի պէս խօսք նետեցին տունէն ներս... Զարդ ու փշուր ընելով աղջկան մէջ այն ամէն ինչը, որ դիւրաբեկ զլայնութիւն կը կոչուէր: Մարդիկ գէշ էին, անպատկառ, քինախնդիր. ժողովուրդին դատաստանը՝ աններող, երկրէն բերուած բարքերու խստութեամբ: Սերոր աղբարենց Սիրունը չկրցաւ այլեւս գլուխը դուրս հանել լուսամուտէն իսկ. քէմփի մէջ վիտացող ճանճերու պէս, կը թռէին-կու դա-

յին խայթող միջատները վատարանող կրներու լեզուին: Իր սղբերգութեան մէջ, Սիրուն կը փայտայէր, սակայն յո՛րսը, թէ ահա կը տեսնուէր պարոնը, որ պիտի գար փախցնէր զինք, — «Անտոիկ բերդին մէջ արդեալօրէն տած իր սիրելի գշխուհին»: Ի վերջոյ քեռի-քեռակիներն ալ կը սպասէին նման դէպքի մը, իրենց դժբախտութեան լեզին քաղցրացնել ուզելու յոյսով... Տարին անցա՛ծ էր. ո՛չ եկող եղաւ եւ ոչ ալ հարցնող: Միակ միւրթարութիւնը այն էր, որ անմիջական զրոյցուհի Աշխէնը կապեց մտերմութեան ոսկեղջիթան իր եւ Սիրունի մէջքին. հարազատ քոյրերու պէս եղան եւ գազանիքը լեզու դառաւ երկու պարմանուհիներուն միջեւ:

Գ.

Երբ նստեցաւ տիւանին մէկ անկիւնը, ոտքով-ձեռքով Աքսոր ինկաւ դողդոցի մէջ: Ինքնազուլի խնդարակուռ ջրադրգոութիւն էր դուցէ եղածը: Սերոս աղբարն եւ քոյր Սրբուհին կը նայէին իրեն վշտակցող մարդոց աչքերով: Ա՛յդ էր պատճառը, որ անոնք տուն տխուր դէմք, տունն ներս ցաւակցութեան խորհուրդը, սրմէ ծնունդ կ'առնէին օ՛Փ-օՓի պղպղակներ... Աշխէնին վաղահաս մահուընէն հազիւ վեց ամիս անցած էր:

— Ափսո՛ս եղաւ Աշխէնին, պարո՛ն Աքսոր. մեռնելիք կին չէր. մի-նակ դուլի մնացիր, — քեռակիներն էր, որ աւելցուց, — խեղճս կու գար կ'ըսէր, երբ մեր Սիրունը դեռ որբանոցն էր, հա՛, կ'ըսէր՝ Սրբուհի մայրիկ. Աքսորս, այսօր կէսօրին տուն պիտի չդայ. ազա՛տ եմ, բան-գործ ունիս՝ օդնե՛մ: Եւ զօտով ձեռքէս կ'առնէր աւելը. կ'առէր, կը սրբէր շորս պուճախը. յաճախ կերակուրս ինք կ'եփէր... Երբ յրանար-սրձնէր, կու գար-կը նստէր դիմացս, թէ՛ «Սրբուհի մայրիկ. բա՛ն մը պատմէ, լսենք. դուն շատ բան տեսած կ'ըլլաս...»:

Սերոս աղբար կը յիշէր այդ բոլորը այսօրուան պէս:

— Հոգի՛ աղջիկ էր Աշխէնը. կը ժպտէր անմեղ աղջկայ պէս: Հայրիկ, կ'ըսէր. բնույնս ծովք ինկեր է, երբ կը տեսնէր զիս մինտէրիս վրայ երկարած՝ միտքերու ծօփն ինկեր եմ: Է՛հ, պարո՛ն Աքսոր. ի՞նչ կրընայի պատասխանել: Մեր քաջածը շուները չեն քաշեր: Ես կը լսէի. Աշխէնս թեւէս կը քաշէր, թէ՛ «Հայրիկ, ելի՛ր պարենք. փա՛ւճ բան է աշխարհը», կ'ըսէր:

Աքսոր մտիկ կու տար զրոյցիներուն լաւ խօսքերուն՝ իր Աշխէնին մասին. եւ յուզումը կը բարձրանար խաչափողէն վեր. կը մխացնէր կոկորդը: Աչքերը կը պղտորէին: Իսկ ինք եկած էր ուրիշ հարցի համար: Դրացիները կը շեղեցնէին ճամբան: Պէ՛տք էր սիրտը բանար: Ինք կը դիտակցէր, թէ Ֆրիդլէքստայն միջուկութիւն մըն էր, բաց-ճակատ, միջոհատակ, թուխ, սև աշխատանքի տէր մէկը, որուն համար ժողովուրդը պիտի ըսէր՝ «մի՛ նայիր դէմքին. տե՛ս ձեռքին կապած ոսկէ ապարանջանը»: Սիրունը՝ սիրուն էր իր անունին պէս. հմայիչ աչքերով, բարակիրան, դեղադէմ, որուն համար կ'ըսէ հեքիաթը՝ «Մի՛ ուտեր, մի՛ խմեր, երեսին մտի՛կ տուր»: Բայց, մէկէն ետ ըրաւ ամէն մտածուրդում. ըսաւ բոլորովին անկախ պահէն.

— Աշխէնս երբ դնաց՝ քսանը չկար. ես ալ կը մտնեմ երեսունիս մէջ...: Զեպէ՛ ի՞նչ պահեմ. խօսք եմ տուած իրեն. պիտի կատարեմ: Վաղը կը թմբի վեց ամիսը Աշխէնին երթարուն: Ոգորմածը վերջին շունչը տալէն ստաջ ըսաւ ինձի՛ — Աքսոր, ջանս. անխճուած կ'ըլլայ դերեզմանս,

եթէ վերջին իղձս չկատարես. շեմ ուղեր, որ մինակ գլուխ մնաս. մե՛ղք ես գուն. եփող-թափողի պէտք պիտի ունենաս. իսկ ես պիտի չըլլամ, պիտեմ. սեւ ցաւը կը տանի զիս անդիլի աշխարհը, որ ո՛վ գիտէ ի՞նչ է — սկսաւ գթուար շնչել — իմ վրաս սուգ կը պահես վեց ամիս միայն. ո՛չ օր մը պահաս եւ ո՛չ՝ օր մը աւելի... — Տո՛ւր ձեռքդ, — ըսաւ, — պի՛նդ բռնէ, հոգիս. գուն մեղաւոր չես շուտ մեկնելու համար. պերեզմանիս վրայ քաշել կու տաս տաշուած մարմար քար, որ փաստուի անմեղութիւնս. վրան զրել կու տաս սեւտառ՝ Աստ հանգչի — շանչը կը հասնէր — եւ վեց ամիսը լրացած՝ կ'երթաս-կ'ուզես իր ձեռքը... Երբ ան հեռոյ ըլլայ, իմ տեղս, ես կ'ապրիմ իրմով քու սէ՛շն. թէ չէ՛ խոտի կը սոսայ հողիս, քարն ու գիրը իմաստ չեն ունենար, — ըսաւ ու հանդաւ թեւերուս վրայ: Աքսոր ցնցեց ինքզինք. կարծէք, նոր միայն կը հանդէ՛ք Աշխէն իր ձեռքերուն վրայ:

— Պարոն Աքսոր, Աշխէնս անուն չառա՞ւ, — քեռակին Սրբուհիին հետաքրքրութիւնը երկասյրի բնոյթի հետեւանք կը թուէր, — սրքան որ կըրցայ հասկնալ, Աշխէն ուղած է քու լաւութիւնդ. մեղա՛յ, մեղա՛յ քեզ, Աստուած. ի՞նչ կ'ըսեմ ես. հա, կ'ըսէի, թէ Աշխէն քու լաւդ մտածեր է. սուրբ աղջիկ էր. ախո՛ս, որ շուտ ցնաց եւ քեզ առանձին թողուց: Երկասասարգ ես... եթէ անունը տուաւ, բռնէ. երթանք ուզենք աղջիկը...

— Խե՛ղք բանի չի հասնիր, — միջամտեց Սերոբ աղբար, ափը տանելով ակրա՛ջ կզակին խճողուած մտղերուն, — կիները ետասէր են եւ սատանայ. մեռած օրերնին իսկ երգում կ'առնեն մարդէն, որ ուրիշ մէկը չառնէ. իրենց հո՛ղը, որ էրիկը շունի կեանք պիտի քաշէ: Աշխէնը բացատրութիւն կը սեպուի. իրեն պէս հազարին մէկը չ'ըլլար: Սո՛ւրբ էր, սո՛ւրբ Աշխէնը...

— Լռէ՛, մարդ. գուն ալ բան էր որ ըսիր. իբր թէ ետասէր, պէ՛շ մարդ չկայ. կինը ողջուց՝ աչքը գուրսերը. որ մեռա՞ւ պի՛նդ կը բռնէ կնիկին ձեռքէն, թէ քեզ հետս կը տանիմ, հաւատք չունիմ վրադ՝ ուրիշ մարդու կ'երթաս: Սո՛ւտ եմ, պարոն Աքսոր. գո՛ւն խօսէ...

— Ձե՛մ փորձած, որ պիտնամ, — ուղեց կատակել Աքսոր:

— Խեղճ սղայէն ի՞նչ կ'ուզես, որ փակար ճիտին. գուն ինձի մտիկ սուր, հանրմ. սո՛ր կինը պիտի ուզէր սղջ-սղջ թաղուել էրկան կուշտին. հը՞. Աղա՛մ խարեց Եւան, թէ Եւան էր, որ խարեց Աստուած եւ Աղամ...

— Մեղա՛յ, մեղա՛յ քեզ, Աստուած. գուն այս կոտորաշտին խելքի բերես...: Տղա՛յ. քու զոված մարդը անզգամ չէ՞ր, որ կը մտնէր խեղճ աղջկայ մեղքին...: — հոս, քեռակին Սրբուհիին գրոց, որ շատ էր թափանցիկ խօսքը. լեց: Աւ ծնկաչոք՝ մօտեցաւ Աքսորին, ծխտխտ հրամցնելով անոր. ապա վառեց լուցիկին, որուն լոյսին մէջէն գիտեց հիւրին գէմքը, կոահումներու հետքեր փնտռելով հոն: Բնաղդական էր մղումը իր մէջ, երբ գոչեց, — աղջի՛, Սիրո՛ւն, սուսճ մը չեփե՞ս փետայ պարոն Աքսորին. պիտե՞ս, պարոն Աքսոր, որ ես եւ Սերոբը մերը կը սեպէինք Աշխէնը, հարազատ աղջկայ պէս էր մեղի համար:

— Դէ՛, լռէ՛ ալլես եւ թող, որ պարոն Աքսոր թմմէ իր ըսելիքը:

— Ճիշդ ես, Սերոբ աղբար. այսօր եկած եմ, որ թմմեմ ըսելիքս: Երէկ գիշեր Աշխէն եկաւ երազիս. հագած էր իր հարսանեկան շորերը. ինք շղարչի պէս թափանցիկ էր. գէմքը տառապած կ'երեւէր. խոր-խոր նայեցաւ ինձի. «Շնորհակալ եմ քորին ու զիրին համար. Կատարեր ես խոստումը. բայց, երրորդ իղձս կը մնայ անկատար...» Ա՛լ բան չըսաւ. ետ դարձաւ եւ անյայտ եղաւ: Արթնցայ. կէս գիշեր էր եւ տունը խաւարով պատած: Առաջին անգամ գլացի, որ առանձին եմ տանս մէջ...

— Ի՞նչ էր երրորդ իղձը :

Աքսոր Զանազանեան նայուածքը յառեց Սերոբ ազբարի դէմքին :

— Իր իղձն էր, որ դամ խնդրեմ ձեր Սիրունին ձեռքը... Մէկը չու-
նէի՝ դար խնդրէր. ծանօթ-աղղական, բոլորը դնելու է մէկ ասպրակի մէջ՝
ծանր քարի հետ, բերանը կապելով նետելու է ծով : Խօսքերնին մէկ ըրեր
էին կարծէք... Աւելորդ-պակաս ըսի-ըսուներ... Բարկացայ, թքեցի վը-
րանին եւ ահա՛ ես եմ, որ կը յայտնեմ ձեր Աշխէնին իղձը. իմ կողմէս՝ կը
ցանկամ, որ Սիրունը բեռ չմնայ ձեր ուսերուն... :

— Զէ՛. ինչո՞ւ բեռ պիտի ըլլայ. իր եղունգը չարժողները կ'երթան
տուն-տեղ կ'ըլլան. մեր Սիրունին ի՞նչ է եղեր, — քեռակին Սրբուհին ելաւ
տեղէն. կը թուէր, թէ նստած էր փուշերու վրայ եւ չզերանալով ինչ ընելը,
դնաց դէպի ճրագը. բարձր ու ցած բրաւ լոյսը : Ճրագին շողքը բացաւ կըն-
ճիւններ անոր մտահոգ դէմքին :

Սերոբ ազբարը մնաց լուռ : Ան հասկցաւ դրացիին միտքը եւ ներսը
առաւ բարկութիւնը, որ յարձակիլ կ'ուզէր կնոջ անտեղի առարկութեան
դէմ : Այնուհետեւ արեց քար լուսթիւն սենեակին մէջ : Սերոբ ազբարին եւ
քեռակին Սրբուհին դէմքերը հազան աղչախառն մտահոգութիւն՝ չկարե-
նալ կողմնորոշուելով : «Աքսոր դիտէ՞ր միթէ Սիրունին դիտուն եկածը. Աշ-
խէն խօսած չէ՞ր իրեն եւ ինչո՞ւ անպայման Սիրունը յանձնարարած էր.
եթէ իրենց աղջկան հետ պատահած չըլլար այդ դժբախտութիւնը, Աշխէն
պիտի ուզէ՞ր յիշատակել Սիրունին անունը, իրբեւ յարմար թեկնածու այրի
մնացած մարդուն : Աքսոր անուղղակի ակնարկութիւն չըրա՞մ միթէ, երբ ը-
սաւ, թէ չի ցանկար Սիրունին բեռ մնալը իրենց ուսին... » :

Եւ այս մտմտուքը լռելեայն դնաց-դտաւ աղջիկը, որ սուրճ եփելով
էր գրադած : Ան չէր լսած իր անունին տրտելը, բայց յաջորդած լուսթիւնը
զլացնել ատաւ իրեն, որ խօստկութիւնը իր շուրջը դարձած էր : Այդպէս
էր եղած միշտ. քեռակինը կը զրկէր զինք սուրճ եփելու եւ ահա կը սկսէին
չչնկոցները կողքի սենեակին մէջ, որմէ յետոյ յանկարծ կը տրէր սիրտ
քայքայող լուսթիւն մը : Կը սկսէր լալ ինքն իր բախտին դէմ ծառանալով :
Երկու անգամ փոխել ստիպուեցաւ բաժակատակերը : Զեռքերը կը դողդոջա-
յին, երբ կը տանէր մատուցարանով սուրճը : Աչքերը խոնարհեց վար : որ
չնկատէին լացին հետքերը : Առաջին բաժակը երկարեց հիւրին — երկու օր
առաջ ի՞նչ ըսել կ'ուզէր, երբ դիտել տուաւ, թէ կնոջ մահէն ետք ինք կը
դառնար անոր եղբայրը. ինծի համար՞ եկած է միթէ — ենթադրական վա-
խը կարճեց ձեռքը, որ չկրցաւ հասցնել բաժակը Աքսորի երկարող ափին :
Ու մէկէն սուրճի դաւաթը մնաց պարտպին մէջ ու շրջուեցաւ հիւրին սը-
րունքներուն վրայ՝ խեղդուկ ճիչ մը խլելով աղջկան սիրտէն, — ա՛հ... :

— Խէ՛ր է, — դռեց Սրբուհի քեռակինը եւ ակամայ բռնեց փէշը ու
անոր ճոթով փորձել ուղեց սրբել սուրճին հետքերը. բայց անմիջապէս վը-
րայ տուաւ, — ի՞նչ ես կեցեր փէտի պէս, աղջի Սիրուն. վաղէ թացոտ լաթ
բեր, որբէ պարոն Աքսորին փանթալոնը. մե՛ղք եղաւ. վաղը հանէ, բեր լը-
ւամ, պարոն Աքսոր... Սիրունը լաւ արդուկել դիտէ. ոսկի ձեռքեր ունի... :

Մինչեւ աղջկան թացոտ լաթ բերելը, Աքսոր Զանազանեան կրկնել
ուղեց խնդրանքը ու ժպտելով ըսաւ .

— Վնա՞ս չունի, Սրբուհի քոյրի՛կ. ես կրնամ արդուկիչին տալ. մեծ
դործ մը չէ. միայն դուք ան ըսէք, թէ ե՞րբ կրնամ պատասխան առնել :
Գիտցէք, թէ որ չէ է պատասխանը, Աշխէնիս հողին խաղաղ պիտի չըլ-
լայ... :

— Քեռակինը վաղը կու սայ մեր պատասխանը, — յարեց Սերոբ աղբար :

— Քա՛, դուն ալ ի՞նչ կը վաղես, ա՛յ մարդ. մենք, որ հա ենք ըսեր, զանի հաստատողը կամ մերժողը զիտէ վերջին հաս կամ չէն : Դուն մերն ես, պարոն Աքսոր. ամմա՛, սասանկ բաներ ժամանակ կ'ուղեն. ուտելիք հաց կամ ուրիշ բան չէ, որ սանք տանին ուտեն... Ես ինչ գիտնամ. ինքքս գլուխս չէ. վաչը, միւս օր կը մտածենք, քեզի պատասխան կու տանք...

«Շրեւցաւ Սիրուն՝ թաց լաթ մը ձեռքին», — Անցուց միտքէն Աքսոր եւ երկարեց ձեռքը՝ լաթը ընդունելու համար, — Ես, ինքս կը սրբեմ, Սիրուն. դուն հանգիստ ըրէ եւ անհող կաց :

Սոսլաժի պէս Սիրուն չլսեց, կարծէք, այլ ծնկեց մէկ ոտքով Աքսորին առջեւ ու սկսաւ արագ-արագ սրբել սուրճի հեաքերուն տեղերը, մասներուն դողը յանձնած լաթին : Դէմքը բանջար կարած էր ամօթէն եւ ցոյց տուած անճարակութենէն : Ոսկեայ փոքրիկ վրախաչը կը ճօճէր դնդուած կուրծքերուն միջեւ : Աքսոր կը նայէր անոր վրայ ինկած ճարագաչողքին եւ իրեն կը թուէր, որ իր բախտը կախուած էր այդ ճօճքէն... Մէկէն խից լաթը աղջկան ձեռքէն : Սիրաբ բուխ էր. չկրցաւ տանիլ Սիրունին անօդնական նուաստացումը, որ դս՛ի կերպարանքով կ'երեւէր իրեն :

— Թո՛ղ, Սիրուն ջան, թո՛ղ, որ ես ինքս մաքրեմ իմ անճարակութեանս մեղքը, — եւ ժպտեցաւ աղջկան աչքերուն մէջ :

Սիրուն, որ իր սեւ բախտին բերումով միշտ փախուստ կու տար, քեռիէն զատ բոլոր այլ մարդերէն, չկրցաւ կողմնորոշուիլ. մնա՞ր, թէ կորչէր աչքէ հեռու : Զինք փրկեց քեռին, երբ յանձնարարեց երթալ նոր սուրճ մը եփել. քանի որ առաջինը չարը խափանած էր, երկրորդը անպայման բարին պիտի բերէր՝ Սրբուհի հանրմի ըսածին եթէ մտիկ տար մարդ : Այդպէս սով ան քիչ մը համեմ խառնեց սեղմ խօսակցութեան...

Դ.

— Նայի՛մ աղջիկը ի՞նչ կ'ընէ, — ըսելով՝ քեռակինը հասաւ Սիրունին, որ սուրճը դրած էր կրակին վրայ : Կաղօճախին յանձնելով դադանապահ շեշաբ բառերուն՝ անսպասելիօրէն ըսաւ, — վա՛ղը պիտի երթամ տեսնեմ պարոնդ. լսածիս համաձայն, ներս առնուեր է կրկին. կռնակ ունի եղեր դուրսը : Նայի՛մ, ինչպէ՞ս է. մարդու տեսք ունի՞, տէր պիտի կանգնի՞ ըրածին, թէ՞ ոչ : Գիտնա՛նք...

Սիրուն նայեցաւ շեղ-շեղ քեռակնոջը ու երեսին տուաւ.

— Նորէ՛ն սկսաք դարին փնտռել, երբ էչը սատկեր է արդէն. նայէի՛ք առաջ... ո՛ւչ մտայնէ՛ք, քեռակին. բայց, դուք ի՞նչ յանցանք ունիք. ես եմ յանցաւորը. Աստուած չառաւ հողիս, որ բաժին ընէր սատանային... Խա՛չ հանեցէք աղջիկ Սիրունին վրայէն...

— Դէ՛, մի՛ յուզուիր. կը փճացնես անուշիկ աչքերդ. քեզի պէս սիրուն աղջկայ բախտը խաղալով կու դայ : Այդ շունը միտան մարդ չէր, քանի չտեսաւ իր բախտը : Բու՛թ դանակով զինք կտրտելը քիչ է... Մի՛ լար, ամօ՛թ է. մարդը ներսը մեզի կը սպասէ :

— Ի՞նչ ընելու եկեր է. յետոյ՝ դուն ինչո՞ւ ըսիր՝ — «Իէ՛ր է», —

Միրուն կորսնցուց միաքին թեյը, Սուրճին եփքը չզսպուեցաւ եւ քեռակինը հրեց աղջիկը մէկզմ, որ շաղատաւոր դրեաւ :

— Թող, որ ես լրացնեմ. ձեռքերդ դող ելած են. եւ դիտելի՛ր, որ Աշխէնին մարդը եկեր ձեռքդ կը խնդրէ քեռիկդ. քեռիդ համաձայն է. յարմար կը նկատէ, կը տեսնեմ...

— Այդ կապկադէմի՞ն, — Միրունին ձայնը ճշայն դրեթէ, — չե՞մ ըսած, թէ մարդու չեմ երթար... իմ տեղս դերեզմանն է...

— Բն՛ւ տեղդ քեզ առնողին տո՛ւնն է. եւ ուրկէ՞ ճարեցիր այդ կապկադէմ բառը, որ չի սաղեր մարդուն : Աշխէն պակաս՞ դեղեցիկ էր, որ սիրելով առեր է Աքսորը... Օր մը օրանց շրեցինք անոնց տան մէջ չեմ ու չու՛մ. ե՛ղ ու մեզը էին իրարու հետ... Կապկադէ՛մ. իսկ ինչի՞ կը նմանի քու այդ արիւնիդ մտած հրէշը... ա՛խ, մէյ մը դէմս ելլէր այդ սուրաքսրդ անհաւատը, որ Աստուծո՛ւմէ չվախցաւ քեզի պէս անմեղ աղջիկը...

— Լռէ՛, լռէ՛, կը լռէ մարդը հիմա...

— Ծո՛ղի՛, չըսող մնա՞ց որ. բոլորին բերանն ենք... Իւր հաւ պարոն Աքսոր եկեր խելօք-խելօք ձեռքդ կը խնդրէ. մէջտեղ չէ ձգեր մէկը, որ ինչ է՛ կը խառնէ, կը քանդէ, շինելու տեղ. կ'ըսէ՝ «ես անձամբ եկեր եմ, որովհետեւ Աշխէնը այդպէս ուզեր է եղեր»... Որպէսզի հաւատամ, թէ լուրջ ես մերժումիդ մէջ, կրնա՞մ հարցնել, թէ ինչպէ՛ս եղաւ, որ դուն թափեցիր սուրճը մարդուն վրայ. սիրտիդ դողէն չէ՞ր միթէ պաւաթը շրջեցաւ...

Միրուն չոր եւ անտարբեր՝ պատասխանեց.

— Կը պատահի. սիրտը ի՞նչ դործ ունի հոն. չուզելն ու ուզելը նոյն դրացումին այո՛ւ եւ ո՛չ երեսներն են...

Սրբուհի քեռակինը շարունակեց չէզոքութեան դերքէն յարձակել աղջկան վրայ, անոր սիրտը դրուելու համար,

— Վրագ դուրդուրացող էր Աշխէնը — Աստուծո՛ւ լոյսերու մէջ պահէ իր անմեղ հոգին — ան քու դէ՞զ պիտի ուղէր. ուղէր՝ մեռնելու օրը խոտատում չէր առներ, երգում ընել չէր տար մարդուն : Պարոն Աքսորը մերը կը սեպուի. առնին դադանիքը հողերուն ցրուողներէն չէ. լաւ երիտասարդ է, այրի չի՛ սեպուիր... Քանի՞ տարի ապրեր է արդէն կնոջ հետը... Աշխէնը դիտուն վրայ կը պահէր... : Ես ըսեմ, դուն ալ, Միրուն, լռէ. այն շա՛ն լաւուրդ արժանի թող չըլլայ դերեզմանին...

— Մի՛ անիծեր դինք, չըսի՞. իր ձեռքը չէր. կը սիրէր զիս. խառնող եղաւ... Ո՛վ դիտէ ո՞ւր առաւ-կորաւ դուրսը, — աղջկան ձայնը երեքաց եւ արցունք կուտակուեցաւ աչքերուն առջեւ : Առաջին սէ՛րն էր. աչքը բացած-չբացած : Մէկ անդամէն չէր եկած ան. ու երբ եկաւ, ինք ապրեցաւ երկա՛ր, դադանի այդ սէրը. ի՛նքն էր ուղած եւ ան եղաւ կամակատարը...

Քեռակինին կը մնար պոտալ, գրոհի կանչելով աշխարհի մէջ յիշատակելի բոլոր անէծքներն ու յիշոցները սրիկային դէմ, որ շահագործած էր առաջին անմեղութիւնը :

— Անիծելը քիչ է. սատանային յանձնելու է անոր հոգին... Կորա՞ւ, ո՞ւր պիտի կորէր անամօթը. չըսի՞ թէ կրկին ներս սարդեր է որբանոցէն, ուր, կ'ըսեն, շատ անխելքներ կան տակաւին, վաղն ալ ուրիշ Միրուն մը կը դանկ եւ կը մտնայ արիւնին, — ինքն իրմէ ելածի պէս էր քեռակինը : Կազօձախը դաւաճանեց իրեն, երբ սուրճը եփեցաւ : Լեցուց երկու դաւաթներու մէջ դոյն եւ մատուցարանը հրեց աղջկան առջեւ, — ա՛խ, տար հրամցուր. ուշադրութիւն ըրէ, որ չթափես կրկին. երկրորդ անգամ խէ՛ր չ'ըլլար : կ'ըլլայ՝ շա՛ն, հասկցա՞ր. դէ, դնա՛...

Հետևեցաւ անոր մինչեւ ընդունարան: Սերոբ աղբարը խնդմնդաց.

— Ուշացա՛ք, կենարմատներ: Պարոն Աքսորբ տաս անգամ ոտքի ելաւ, որ երթայ. ես թեւէն բռնեցի-նստեցուցի... Մաղթենք, որ լաւ ելուած ըլլայ սուրճը երկուքիդ ձեռքով:

— Ո՛ւշ ըրինք, որ անս'ւշ ըլլայ, Խէրի՛Փ, — կատակին կատակով համեմել ուղեց Սրբուհի քեռակինը ու նստեցաւ ամուսինին քով՝ կողք մշտնութիւն: Յո՞ժ՝ — «Հասկցուցի ազջկան պէտք եղածը...»:

Աքսոր Զանազոնեան քաշեց առաջին ումպը.

— Հրաշալի՛ է. երողը կրկին Սիրուն Զանն ըլլալու է. փորձառութիւնը լաւ բան է. այնպէս չէ՞, օրիորդ Սիրուն:

Աղջիկը մէկէն թողուց սենեակը ու հեռացաւ: Կից դրան ետին զգային երեքը, որ մարմին մը անկում ունեցաւ ներսը: Աքսորին արամաղբութիւնը մէկէն փճացաւ: Նմանեցաւ հոգեկան այն վիճակին, որուն մէջ կ'իյնայ մարդ, երբ կը տեսնէ ծառին վրայ հասած, ոսկեղոյն ծիրանի հատիկը (ու ձեռքը կը նեակ ճիւղին քաղերու դայն, սակայն անիկա կը սահի մասնաբոն արանքէն, կ'իյնայ-կը փլիխ հողին վրայ ցեխոտուելով: Թէ ինչո՞ւ տան մթնոլորտը այդպէս շուտ փոխուեցաւ, ոչ ոքի յայտնի էր: Սրբուհի քեռակինը հապճեպ նետուած էր կից սենեակը, հասկնալու համար, թէ ի՞նչ պատահեցաւ հոն. ո՞վ էր ինկողը: Սերոբ աղբար զարմանալու բան չպտենելով մէջտեղը, շարունակեց խմել իր սուրճը քա Աքսորին ուղղելով խօսքը, յարեց.

— Ես ալ համաձայն եմ քեզի հետ, սրբան Աքսոր. սուրճին լաւ ելուելը երկար փորձառութեան կը կարօտի. մեր Սրբուհին օրը տասը գաւաթին քիչ է կ'ըսէ:

Կից սենեակին մէջ Սիրունը ուշքի դալով, կ'ըսէր քեռակինը.

— Բան մը չուենիմ, գլուխս դարձաւ. դուն գուրս դնա՛, դնա՛...:

Սակայն ան իր միտքին մէջ կը հստակէր միւսին դարձած անխաղատութիւնը, — «Սիրուն», կը տեսնեմ, որ փորձառութիւն ձեռք ձգեր ես սիրոյ արտայայտութեանդ մէջ...»:

— Դէ՛. իմ մտալը աւելորդ է. օրիորդ Սիրունը հանդիսաւ պէտք ունի. ձեզ ալ չեմ ուղեր խանդարել. իրարու մէջ խօսելիք կ'ունենաք, — ելաւ ոտքի Աքսոր, — ցտեսութիւն ըսեմ, օրովհետեւ կը հանդիպինք նորէն իրարու. ուրեմն՝ ցը՛ եւ դիչե՛ր բարի:

Եւ իջաւ տասը աստիճանները արագ, որպէսզի չճոճըռան մաշած սանդխամատները դրացիներուն...:



Յաջորդ օրը, հակառակ Սերոբ աղբարի կամքին, Սրբուհի կանգնեց կապեց լաշակը գլխին, հազաւ կերակնօրեայ փէչը, անցուց ոտքերուն սեւ սուրբը եւ իջաւ փողոց: Ան կ'երթար տեսնել Սիրունին դասը: Կը թուէր, թէ երկու կիները համաձայնած էին հետեւիլ ծանօթ մանրալէպի խօսքերուն,

— Նախ բռնենք ոտուորները. յետոյ՝ կը դառնանք սնոտներուն կը նայինք...:

Ձ Ի Ե Ր

Իսկ ձիերը կ'երագէին,
արեւով լի
հովիտներուն մէջ հեռակայ :

Ճիշդ էր, որ հոն, փշաթելեր կային ամուր
ուրկէ դուրս գալ կարելի չէր...

Եւ ունէին սահմանները իրենց յստակ,
որոնցմէ դուրս,
վտանգաւոր անասուններ էին միայն
եւ կրնային սպաննուիլ...
Կամ գրաւի տակ
մրցադաշտերուն՝
գուարմացնել
ձանձրացող մարդեր :

Սակայն հոն էին՝
պաշտպանուած կամ պատժուած,
միշտ երագելով չոր հովիտներու
ցեղի մը մասին, որ կը կորսուէր :

Ա Ն Ա Ջ Ա Ն Ք

Լոռութեան մէջ,
ներքին ձայներ միայն կը ծաղկին,
աճօզնական,
կրնաս դիտել,
տարտղնուած սենեակդ համր

Եւ հոն գտնուող սսուած քոչունին
նեխոււմը դանդաղ,
որ առասպելներ կը ջնջէ ի սպառ :

Հիմա իրերը կը սահին :
Ոչինչ կը կառչի :
Ինձմէ հեռացէ՛ք
նիշդ ինչպէս ժանտախտ
հզօր եմ, ազդու,
նոյնքան մահացու...

Ն. Վ Ի Բ Ա Պ Ե Ա Ն

ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՐԱՆԸ...

Որքան կը յիշեմ՝ ամուսնացած ատենս կնկանս մագերը սեւ էին :

Ես քիչ մը մոռացկոտ եղած եմ ու քիչ մըն ալ հոգերու բերումով ուշադրութիւնս չէին դրաւած մագերը, երբ ուշադրութիւնս դրաւեցին՝ արդէն կատարելապէս դեղնած էին : Կասկածներ արթնցան մէջս, թէ մագերու հիւանդութիւնն մը ունեցած է արդեօք : Երեք կամ չորս տարի առաջ, կը յիշեմ, չէկ էին, անկէ առաջ ալ, անշուշտ, պէտք է սեւ եղած ըլլային : Ստուգապէս գիտնալու համար քրոջս հարցուցի .

— Սեւ էին, — ըսաւ :

— Այո, կարծեմ սեւ էին, — կրկնեցի :

Սկիզբը այդքան երկար-բարակ քըննութիւն կատարելու առիթ չէին տուած ինծի :

— Խաթունի պէս աղջիկ է, — ըսած էր մայրս :

Քոյրերս անոր բոլոր կողմերուն մասին լաւ տեղեկութիւններ հաղորդելէ ետք, եկանք այն ընդհանուր եզրակացութեան, որ լաւ էր աղջիկը : Կը զարմանայի քոյրերուս գիտելու կարողութեան վրայ : Ինչպէ՞ս ալ կրցած էին դիտել բոլոր կողմերը : Անշուշտ ես ալ պարապ տեղը հետս չէի տարած դիրենք : Ես միայն անոր աչքերուն ու դէմքին նրբութեան զարնուած էի, մարմնին միւս մասերը զիս չէին հետաքրքրած : Սիրած էի զինք, անկեղծօրէն, ու ամուսնացած :

Այդ օրը Երեքշաբթի էր : Մասնաւոր դործ մը չունէի, բայց սաստիկ մղում մը կար մէջս դուրս ելլելու : Կուզէի թափառել փողոցները : Ուրքերս ինքնաբերաբար առաջնորդեցին զիս քանի մը ֆլաք անդին դանուող հանրային պարտէզը : Միտքս շրջան մը ընել ու վերադառնալ էր :

Ձեռքերս դրականներու՝ աննպատակ կը քալէի, երբ նստարանի մը վրայ նըշմարեցի դեղադէմ աղջիկ մը : Այդ ի՞նչ դեղեցկութիւն է, անցուցի մաքէս : Քանի մը անգամ դարձայ շուրջը : Լաւ աղջիկ կ'երեւար : Կրպակէ մը դոփոցուցիչ առնելով՝ մօտեցայ այն նստարանին, որուն վրայ նստած էր աղջիկը ու հիւսելով զբաղած :

Նայեցաւ ինծի եւ ժպտելով բարեւեց :

— Արդեօք կը փափաքէի՞ք օշարակ մը առնել, — առաջարկեցի :

— Օշարակ՝ ոչ, սուրճ մը՝ անպայման, — ըսաւ :

Անմիջապէս դացի ու ապսպրեցի սուրճը :

Մեծ առիթ մը ներկայացած էր եւ պէտք է աշխատէի ձեռքէ չփախցնել այդ դեղեցկուհին :

Կամաց-կամաց սկսաւ խմել սուրճը : Արդեօք ի՞նչ ձեւով խօսք բանայի հետը : Միտքս դեռ գլինովութեան մէջ էր . Հըրաչք էր ուղղակի նման աղջկայ մը հանդիպելը . Շփոթի մատնուած էի : Ի վերջոյ հարցուցի .

— Ի՞նչ տեսակ ձեռագործ է ձեռքինդ :

— Պարզ :

— Շատ ալ պարզ չ'երեւիր :

Ակսաւ մանրամասն բացատրել ու աւելցուց .

— Աեր դործն է : Ի՞նչ է արդէն կիներուն դործը . լուալ, մաքրել, եփել, սրբել ու, պարապոյ ժամերուն՝ ձեռագործով զբաղել :

Ուրախացայ շիտակը : Ահաւասիկ առաջինի, պարկեշտ, տանտիկին ըլլալու բոլոր առաւելութիւններով օժտուած աղջիկ մը, որ հիմակուրէն կը սպասուուի տուն մը կառավարելու վե՛հ աշխատանքին :

— Ես ալ, — ըսի մեզմ, — կը սիրեմ ճիշդ ձեզի պէս ազնիւները, հասկըցող, զիտակից, աշխատասէր ու արամարանող, այո՛, մա՛նաւանդ արամարանող օրիորդները:

Մեր լեզուները այնքան բացուած էին, որ ժամանակը ինչպէս առաջացած էր չզիտոյանք:

Աստուած իմ, կ'ըսէի մտքէս, ճիշդ մնաոսած ազնիւս է:

Արեւը շատոնց մայր մտած էր ու հանրային պարտեզին մէջ մեզմէ դատ մարդ չէր մնացած:

Վերջապէս մենք ալ ոտքի ելանք, ձեռնուեցանք, ուրախացանք, որ իրարու ծանօթացած էինք եւ որպէսզի այս հաճելի հանդիպումը կրկնուի, նորէն ժամագրուեցանք այդ նոյն օրհնաբեր նըստարանին վրայ:

Ուղղուեցանք դէպի ելքի դուռը: Ինք բռնեց արեւմտեան ճամբան, մինչ իմ տունս կը դանուէր արեւելեան կողմը: Այն ատեն բնաւ մաքէս չէր անցներ, որ մեր բոլոր ուղղութիւնները արեւմտեան եւ արեւելեան պիտի ըլլային:

Շատ ուղեցի ուղեկցիլ իրեն, բայց ինք ազնուաբար մերժեց: Բաժնուեցանք:

Այն ատեն միայն անդրադարձայ, որ դործի հազուստով էի: Լալու աստիճան ջղայնացայ ինքզինքիս գէմ: Երբ տուն հասայ՝ առաջին անգամ հայելիին մէջ դէմքս զիտեցի: Թէպէտ երեսս ուրախութենէս կը ճառագայթէր, բա՛յց... Մօրուքս երկնցած էր, գլխուս մողերը՝ տարողնուած: Այնքան ջղայնացած էի, որ հոն, հայելիին առջեւ խօսի որոշեցի, առաջին՝ ամէն օր ածիլուիլ, երկրորդ՝ շաբաթը անգամ մը սափրիչի երթալ, երրորդ՝ ամէն օր հոտաւէտ օճառով լողանք առնել, չորրորդ՝ կօշիկներս միշտ փայլուն պահել, հինգերորդ ու վերջին կէտ՝ անուշահոտ դործածել:

Միակ միտքարական բանը այն էր, որ ազնիւր յօժարած էր դարձեալ տեսնուիլ հետս, ու ասիկա մեծապէս նկատի առնուելիք պարագայ մըն էր: Սկսայ անդադար աղօթել, որ Աստուած այս ազնիւր ինձի բախտ ընէ, ու երբ հետագային հետը ամուսնացայ՝ ըսի, որ այս

ամուսնութիւնը հարիւր առ հարիւր Աստուծոյ կարգադրութիւնն է:

Գիշերը ուրախութենէս երկար ատեն չկրցայ քնանալ: Երազիս մէջ ազնիւր մշիկ-մշիկ կը քնանար գիրկս: Այդքան անուշ երազ դեռ չեմ տեսած: Այդ օր չափէն աւելի ուրախ էի: Կ'երգէի: Գործարանին մէջ բոլորին ուշադրութիւնը դրաւեց նոր արամագրութիւնս: Առաջ աթոռին կը նսաէի զլիտահալ ու կը թաղէի խոր մտածումներու մէջ: Բայց այդ օր տարբեր էր, կեանքը՝ փոխուած:

Նրբ ժամը չորսին արձակուեցանք՝ ուղղակի սափրիչին դասի, անկէ՛ խառնութ մը, հոտաւէտ օճառ ու իւղ դնելու, յետոյ՝ տուն եկայ ու աճապարանքով լուացուեցայ: Իո՛րոր որոշումներս լիուրի գործադրելէ ետք՝ ճամբայ ինկայ դէպի հանրային պարտեզ:

Հոն էր, նոյն աթոռին, նոյն ձեռով նստած եւ նոյն ձեռագործով դրազած: Ատեն-ատեն զլուխը վեր կը բարձրացընէր: Որոշապէս ինձի կը սպասէր: Երբ տեսաւ զիս՝ ժպտեցաւ. ես ալ բարեւեցի եւ մօտեցայ: Ինք նոյն հազուստով էր, մինչ ե՛ս...

— Շատ դեղեցիկ կ'երեւաս, — ըսաւ:

Սկսանք սիրալիւր խօսակցութիւն մը: Հետաքրքրուեցաւ անցեալովս, ներկայովս, ապագայովս: Զբաղմունքիս մասին հարցուց:

— Համալսարանի ուսանող եմ, — ըսի, բայց յետոյ սրբադրեցի սուտս, ըսի, որ պարզ արհեստաւոր մըն եմ:

Նոյն հարցումները ես ուղղեցի իրեն եւ, ի վերջոյ, այն եզրակացութեան եկանք, որ շատ յարմար դոյզ մը կրնանք կազմել, եթէ ամուսնանանք:

Շաբաթ օրն ալ շարժապատկերի տարի ղինք, ապա՝ ճաշարան մը: Շատ դո՛հ մնաց: Իր արտայայտութիւններէն հասկցայ, որ իր ընտանիքը լուր ունէր մեր ծանօթութենէն: Երբ առն հասցուցի զինք՝ ամէն ինչ պարզուեցաւ, քանի որ, երբ մայրը դուռը բացաւ, ըսաւ.

— Ներս հրամեցէք, պարոն Մայք, դեռ կանուխ է:

Ի՞նչ կանուխ, ժամը տասնըմէկը

չատոնց անցած էր : Մախրուեցայ մնալ սակայն եւ ըմբռչիւնեցի ապագայ կնկանըս կողմէ պարաստուած համով սուրճը : Յետոյ դացի տունն, ուր մայրս, սր լուր ունէր իմ յայտագրէս, հարցուց .

— Ինչպէ՞ս տեսցիր, ուրախ կ'եքեաս :

Պատմեցի մանրամասնօրէն :

— Ուրեմն ինչի՞ կը սպասենք, — ըսաւ, — երթանք ձեռքը ինդրենք :

Անմիջապէս դործի սկսանք եւ իրենք ալ շուտով այս ըսին :

Սկսանք հարսանիքի պատրաստութեան : Ամէն ինչ լաւ կ'ընթանար, առանց խոչընդոտի : Դես տաանի, առանց «ըսի-ըսաւ»ի հարսանեկան պատրաստութեան չեմ հանդիպած, ու դարմանալին ա'յն էր, որ հակառակ իմ որոշումին՝ աղջիկը կ'ուզէր մօրս հետ ապրիլ : Մըտքէս կ'ըսէի. ամբողջ պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով հարս մը կը փափաքի կեսուր մօրը հետ ապրիլ : Բայց եւ այնպէս, իմ պնդումներուս վրայ, տուն մը վարձեցինք :

Տունը շտկեցինք ու ամուսնացանք : Այլեւս ես ալ երջանիկներու ցանկին մէջ կը դանուէի : Կարծես կ'երիտասարդանայի ամէն օր, մարմինով ու հոգիով կողդուրուած կը դրայի : Նոր շրջան մը սկսած էր կեանքիս մէջ : Հիւրեր կ'ընդունէինք, հիւրութեան կ'երթայինք, ճաշի կը հրաւիրուէինք : Չէինք դպար, թէ օրերը ինչպէս կը յաջորդէին իրարու : Բայց ատիկա երկար չտեւեց : Օր մըն ալ բոլորովին առանձին մնացինք, մենք մեզի, բայց նորէն տունը չէինք ճաշեր : Ամիսներ անցած էին, բայց իր պատրաստած կերակուրին համը չէի տած տակաւին : Երբ իրիկունը տուն երթայի, կը հարցնէի, թէ ի՞նչ պիտի ուտենք, կ'ըսէր .

— Մօրդ հետ խօսեցայ այսօր, ըսաւ եկէք միասին ուտենք :

Կամ իմ մօրս տունը կ'երթայինք, կամ ալ՝ իր մօրը տունը :

Իրիկունները յաճախ երկտող մը կը դանէի սեղանին վրայ, թէ՛ մօրս տունն եմ, հոն եկուր : Կը փութայի հոն : Խընդիւրը ընթրիքով չէր վերջանար : Մինչեւ

ուչ տանն կ'ուզէր մօրը տունը մնալ, պատկերասփիւռ դիտել :

— Կնի'կ, եւ երթանք, — կ'ըսէի :

— Հինգ վայրկեան ալ դիտենք : Յայտադիրը թող վերջանայ, շատ հետաքրքրական է :

Թէեւ հետաքրքրական բան մը չէի նշմարեր պատկերասփիւռին վրայ եւ դործէն յողնած կ'ըլլայի, սակայն իր սիրոյն՝ հլու-հնազանդ կը դիտէի յայտագիրը : Յաճախ կը պատահէր այս չարչարանքը : Մախրուեցայ դեղեցիկ պատկերասփիւռ մը դնել, որ շատ օգտակար եղաւ : Տիկինս միշտ տունը կը գտնէի, պատկերասփիւռին առջեւ եւ ձեռագործը ձեռքին :

Պատկերասփիւռի դիմացի նստարանին դրուած բաղմոցը ազուրը մը մաշեցաւ : Այդ պարագան նիւթ չըրի սակայն : Թերութիւնն ալ թող այդ ըլլայ, պատկերասփիւռը տեղն է, մնացեալը հոգ չէ, ըսի, բայց սիրաս սկսաւ կամայկամայ քէօքէն, տալման, սարման կարօտանալ : Քանի՞ ամիսներէ ի վեր տոնցմէ ոչ մէկը չէի կերած, մինչդեռ մայրս անոնցմով մեծցուցած էր ոսկորներս :

Բայց հիմա կերածնիս սարսին էր, տուփի միս, պահածոներու զանազան տեսակներ ու, լաւագոյն պորպօղային՝ դուրսէն բերուած հաւու խորոված կամ բիճա :

— Կնի'կ, վազը սանկ համով տըմա մը եփէ ուտենք :

Բայց ի՞նչ . օր մը աղօթածողովի գացած կ'ըլլար, օր մը մօրը հետ՝ շուկայ, ուրիշ օր մը՝ ալցելութեան, միշտ դրողած ու ես յուսահատ կը նստէի աթոռին :

— Ի՞նչ պիտի ուտենք, կ'նի'կ :

— Տաղկուած հաւ բեր, — կ'ըսէր, — կամ բիճա ազոսպէ :

Ու ես հաւ կը բերէի կամ բիճա, իսկ երբեմն տուփեղէնով կը դահանայինք : Տուփերն ալ ես կը ղանայի ու լօլիկը կը ջարդէի ես, ինք միայն սեղանը կը շտակէր, միաժամանակ պատկերասփիւռ դիտելով : Ջղայութեանս պատկերասփիւռ

որ պատշգամբէն վար նետելու հու դար , բայց ինքզինքս կը դադարէր : Ատիկա շատ սխալ բան մը պիտի ըլլար իմ կողմէն , քանի որ նորէն մօրը տունը պիտի երթար ու ես , սախուլած , նոր մը պիտի դնէի :

Սիրտս նեղուած՝ անկողին կը մըսնէի , ետքը ինքը կու գար մօտս : Իր հըպուստները հեշտանք մը կ'արթնցնէին մէջս , կը փաթթուէինք իրարու ու կը մտածայի ամէն ինչ : Երիտասարդ , թարմ մարմինէն անուշ բոյր մը կու դար ու կը պինտօցնէր զիս :

Առտու կ'ելլէի , սեղանը կը շակէի ու դաւաթ մը կաթ խմելէ ետք՝ գործի կ'երթայի , մինչ ինք քնացած կ'ըլլար :

Երբեմն ընկերուհիները այցելութեան կու գային ու անոնց կը պատմէր տան դօրձերով չափազանց շատ դրազած ըլլալուն մասին : Կ'ըսէր .

— Կնկայ մը համար օրուան քտանըչորս ժամը չի բաւեր :

Ու կ'ուեղցնէր .

— Կը գարմանամ , թէ ինչպէ՞ս ուրիշ կիներ տան դօրձը երեսի վրայ ձգելով՝ դրացիներուն տունը շագակրատելու կ'երթան :

Կը խօսէր նաեւ պատկերասփռուէն քաղած քաղաքական անցուդարձերուն մասին :

Մեկնելու ատեն՝ ընկերուհիները կ'ըսէին ինձի .

— Կինդ քաղաքական հարցերը շատ ճշգրիտ կերպով կը վերլուծէ :

— Այո՛ , — կ'ըսէի , — եթէ օր մը Հայաստանի վարչապետ ըլլամ , զինք ՄԱԿի ներկայացուցիչ պիտի նշանակեմ :

Աւել չէր տեսներ տունը : Որթատունկին տերեւները Չաակէ Չաակի կ'աւելուէին միայն , քանի որ կինս սենեկազուեսար հագած՝ պատկերասփռու գիտելով շատ դրազած կ'ըլլար :

Ատեն-ատեն դարձեալ կը յիշեցնէի , որ տարմա մը եփէ :

— Էօ՛Փ , — կ'ըսէր , — եթէ տասը տարի չուտեմ՝ միտքս չի դար , որքա՛ն ալ ժամանակ կ'աւնէ . ժամերով պիտի փորես , լեցնես ու եփուելուն հա-

մար ալ պիտի սպասես երկար-երկար , մինչդեռ տուփի միսը բաց , քանի մը վաշիկեան տապակին մէջ տաքցար , կեր :

Աղջիկ զաւակ մը ունեցանք : Գեղեցիկ էր : Օրըստօրէ տարբեր սիրով մը կը կապուէի իրեն : Շիտակը , երբ ծնաւ այնքան խանդավառ չէի : Ուզածս տղայ էր , բայց հիմա ուրախ էի : Տան մէջ օրհնութիւն մըն էր :

Որքան մեծնար՝ այնքան կը շարանար ու կը խոնգարէր կնոջս պատկերասփռու գիտելու հաճոյքը : Ատոր համար կինս միշտ կը յանդիմանէր զինք , կ'ուզէր , որ ձեռքերը ծալած նստի մէկ անկիւնը : Սկսաւ մօրը տունը տանիլ պզտիկը :

Ամէն երեկոյ , գործէն վերադառնալէս ետք , կ'երթայի ու կը բերէի աղջիկս եւ երբ հարցնէի , թէ Ե՞րբ բերաւ ,

— Առտու բերաւ , ձգեց ու գնաց , — կ'ըսէին :

Պզտիկը հասաւ զպրոց երթալու տարիքին : Խօսք եղաւ այդ մասին :

— Գիշերօթիկ կը դնենք , — ըսաւ :

Մարտահեղայ , բայց յետոյ ըսածը ըրինք . այդ վարդի պէս սիրուն աղջիկը գիշերօթի՛կ զրկեցինք : Ձգայնութենէս ինքզինքս կ'ուտէի : Բարձին բռունցքի զօրաւոր հարուածներ կու տայի : Ա՛խ , այս ինչ տեսակ կնոջ հանդիպած էի : «Տիվորս , տիվորս , տիվորս» , կը պոռայի Էս ինձի :

Օր մը , ա՛յնքան ուժով դոցեցի պահարանին փեղկը , որ հայելին կոտրեցաւ : Ձեռքս չէր , կը ջգայնանայի , բայց իր ներկայութեան ոչինչ կրնայի ըսել , փաստաբանի պէս կը խօսէր ու միշտ ես յանցաւոր կ'ըլլայի՝ այդքան սղտիկ ու սահմանափա՛կ ուղեղ մը ունենալուս պատճառով :

Հակառակ ծոյլ-ծոյլ նստելուն ու տունը անխնամ ձգելուն՝ կ'ուզէր , որ իր աշխատասիրութիւնն ու մաքրութիւնը դուփէի : Այո՛ , Ի՞նչ կրնար ընել խեղճը , աւելին չէր կրնար ընել , օրերն ալ այն-

քա՛ն կարճ էին, Աստուած շատ սխալ ը-
րած էր, օրը եօթանասուներկու ժամ
պէտք է ըլլար, որ ինք յաղենար պտտ-
կերասփիւռ զիտեւէն :

Իրիկուն մը տունը չգտայ զինք, ինձ-
մէ ուշ եկաւ ու անկէ ետք սկսաւ շարա-
թը երկու-երեք օր աղօթաժողովի եր-
թալ : Սկիզբը շատ ուրախացայ, առանց
խորհելու, որ անձրեւէն փախչելով կար-
կուտին կը բռնուէի : Տունը չէ, ս՞ը է,
աղօթատեղի : Շատ չանցած՝ ապաշխա-
րեց : Ապաշխարելը կարծես ծոյլերուն
ապաստանարանը ըլլար : Կինս անոր ա-
պաւինեցաւ : Տունը մնաց բոլորովին
անինամ : Իրիկունները ընթրիքը սկսայ
ես պատրաստել : Երբ առարկութիւն ը-
րի՛ յանդիմանեց զիս, ըսելով, որ աշ-
խարհի բաներուն մասին շատ կը մտա-
ծեմ :

Ուշադրութիւնս զրաւեց ա՛յն, որ
հակառակ հանդիստ ընելուն, չէր գըն-
նար, կը դալիանար օրէ օր : Ետքը ինչ-
որ ցաւերու մասին սկսաւ դանդաղել :
Անմիջապէս բժիշկի ասարի զինք : Երբ
բժիշկը քննեց՝ շրթունքները կծկուեցան,
լուրջ կերպարանք մը առաւ, բայց աւե-
լի յտակ արդիւնք մը ստանալու համար
մասնադէտի զրկեց : Մասնադէտին ալ
շրթունքները նոյն ձեւով կծկուեցան :
Տիրուր մը նայեցաւ ինձի ու բացատրեց,
որ թէեւ գիտութիւնը այսօր շատ առաջ
գացած է, բայց հիմակ ու հիմա աակա-
ւին կնոջ ցաւին դարման չկայ...

— Շատ-շատ, — բացատրեց բժիշ-
կը, — ազդու գեղերով կրնանք մահը
յետաձգել, բայց ի վերջոյ պիտի պա-
տահի անխուսափելին :

— Այլ անխուսափելին բոլորիս պի-
տի պատահի, բժի՛շկ, — ըսի ու փղձկե-
ցայ :

Երկու ամիս չանցած՝ աշնան տերե-
ւի պէս ինկաւ կինս ու, կեանքը ձեր սի-
րելիներուն...

Այն ապաւորութիւնը ունէի, որ յու-
ղարկաւորութենէն դարձիս զինք նստած
պիտի գանեմ նոյն տեղը, պատկերա-
սփիւռին զիմաց ու պիտի պատմեմ փա-
ռաւոր թաղումին մասին :

Երբ հասայ՝ տունը բազմութեամբ
լեցուն էր. աղջիկս նստած էր կեղրոնը
ու կու լար : Զիս տեսնելուն՝ աւելի
փղձկեցաւ. Փաթթուեցանք իրարու :
Պատկերասփիւռն ալ անանկ որբ-որբ կե-
ցած էր : Ամէն մարդ զլուխը կը շարժէր :
Ամէնքն ալ խորունկ կերպով կը սղային
կնոջ կորուստը : Իմ ալ աչքերուս առ-
ջեւէն ժողաւէնի պէս կ'անցնէին մեր
կեանքի գրուագիւնը՝ հանրային պարտէ-
ղէն մինչեւ գերեզմանատուն :

Մեկնող յուղարկաւորներուն հետ
խորունկ պարտալ մը կը զգայի հողիւս
մէջ : Տունը պարպուեցաւ : Քանի մը օր
ետք աղջիկս ալ զիչեքօթիկ գնաց. Սկը-
սայ մինակս շարունակել կեանքս. կ'ե-
փէի, կ'ուսէի, կը լուսայի :

— Լաւ, — ըսաւ, օր մը բարեկամ
մը, — արդո՞ւկը ինչպէս կ'ընես :

— Օձիկը եւ թեւերուն ծայրերը
կ'արգուկեմ ու կը հագնիմ :

— Առանկ արգուկ կ'ըլլա՞յ, — դար-
մացաւ մարդը :

— Կի՞նս ինչպէս կ'ընէր որ...

Մարդը աւելի զարմացաւ :

— Իմ կինս նոյնիսկ զիչեքանոց
կ'արգուկէ, — ըսաւ :

Ես յօրանջեցի ու չեմ գիտեր ինչպէս
«ա՛խ» մը թռաւ բերնէս :

Բարեկամիս երթալէն ետք՝ խորունկ
մտածումներու մէջ ինկայ : Յիշեցի հան-
րային պարտէզը : Ինչ լաւ կը խօսէր...
Բայց... Մեղա՞յ, մեղա՞յ, Աստուած
իմ, ներէ՛... :

Հիմա յաճախ կ'երթամ նոյն հանրա-
յին պարտէզը, կը նստիմ անկիւն մը,
բայց բնաւ չեմ մօտենար այն նստարա-
նին, ուր ծանօթացած էի «ամէն առաւե-
լութիւններով օժտուած» տիկնոջ հետ :
Բայց օր մը ուրիշ տեղ չգտայ նստելու,
դարձայ, դարձայ եւ ի վերջոյ փլեցայ
այն առաջին նստարանին... Շարմանալի
բան մը նկատեցի մէջս : Մոռցած էի բո-
լոր չարչարանքներս ու առաջին ժամա-
գրութեան ուրախութիւնը կը կրկնուէր
սրտիս...

Ը Ն Դ Ո Ւ Ն Է Զ Ի Ս...

Այսօր, հիմա, քիչ մ'աւելի հաստատակամ
 Ու պահանջկոտ
 Կեցած եմ դրանդ փակ փեղկին դիմաց
 Ու կ'արձանագրեմ գիծեր, գիրեր,
 Կէտեր, գոյներ,
 բառեր, բառե՛ր չարտասանուած :

Կ'արձանագրեմ հեւեով մը խուլ,
 Աչքով անբարբ, սրտով անչար,
 Շոայօրէն
 Ու տենդագին...
 Զարչարալից իր քաղցրութեամբ դեռ կը վարեմ այս խաղը խօլ
 Ու չեմ յոգնիր...

Անկեղծութեամբ արտասանուած
 Եւ արիւնով արձանագրուած
 Բառերը այդ
 Կը փարիս քեզ, կ'ընդելուզուին,
 Կը նայնան ընդերքներուդ,
 Հող կը դառնան, կ'արմատանան,
 Կ'ըլլան դարձեալ ծաղիկ, պարտէզ,
 Կը պսակեն ապա սիրով
 Սրտիս հողը,
 Սրտիս բառը,
 Հողարմատը, բառարմատը...

Ընդունէ գիս,
 Յանուն այս լուռ հոլովներուն,
 Ընդունէ գիս,
 Որովհետեւ միշտ այն եմ ես՝ ինչպէս նանչցար գիս անցեալին :

Որովհետեւ միշտ նոյնն եմ ես,
 Նման բառին, նման բանին,
 Նման հողին, հողարմատին, զորս կը կրես բջիջներուդ ծալքերուն մէջ՝
 Իբրեւ աւիշ, իբրեւ արիւն
 Ու յարութիւն :

Արուեստը իր լրջութեան ու սրբութեան մէջ դնահատելու սկզբունքով Չարենցի պոեզիոնում, արուեստ-անկէր եւ կոմպոզիցիոն մուլտիպլիքսները խորանոթ Աղլալեանի, Միսանիլեանի, Չօրեանի եւ այլոց հետ, 1923ին, Հայաստանի տաղանգաւոր չննադաւը, Լեւ Կամսար, իր կարգին եւ իր ոճով նիւթ դարձուց տնօր հետեւակային եւ դուրսդուր անլրջութիւնները, կատարելով շարք մը ճշգրիտ ախտաճանաչումներ:

Ըստ Լեւ Կամսարի՝ իր 7 շնորհալի դրքոյկներուն դիմաց գրած 5 անշնորհներուն վրայ Չարենց իրաւունք ունէր գումարելու միտ'յն երկու անշնորհ պրակ, բայց, ցաւօք, ան չյարդեց կամարեան դրամատնային օրէնքը, յաջորդաբար սարքելով լենինեան շարքեր եւ մահկալ Սաքոններ պատկերացնող նոյնքան անկանդնելի ուրիշ պատմութիւններ:

Չարենց շատ ուշ միտ'յն անդրադարձաւ իր վասնումներուն, եւ որքա՞ն ցաւալի եղաւ իր անդրադարձը:

«Ինչքա՞ն եմ վասնեք ես անգին ժամեր»...

Ինչքա՞ն...



ԶԱՐԵՆՑ 1924ԻՆ

«ԻՃԱԲԱՐ ԶԱՐՈՒԱԾ ՈՂՈՐՄԻ»

(ՈՐ ԶԱՐԵՆՑԸ «ԹՒԲԻ» ՎՐԱՆ)

ԸՆԴՀԱՆՈՒՐ

Չարենցը պրիսմակ մըն է, կախուած հայ դրականութեան վրայ: Արեւելեան կողմէն դիտես՝ «հանճար» կ'երեւի քեզի, արեւմտեան կողմէն նայա՛լս՝ «բանճար» կը տեսնես, հիւսիսէն՝ «ծիածան, վարդ, կոյս», հարաւէն՝ «թուք, խլինք, մէզ»:

Մակինցեանի ըսելով, իր սկզբնական լոյսը ստացեր է Տէրեանէն, իր ըսելով՝ Մայակովսկիէն: Տէրեանը վառուած լուցկիի մը նման դէն է նետել արդէն, դալով Մայակովսկիին... Թէեւ ստիպում չկայ, բայց... կրնայ եւ չվառուիլ... իրմէ յետոյ:

Ինքը Հովհաննիսեանի երգիչ է, այդ պատճառով «Թքեր» է բոլոր Սեպտեմբերի դրածներուն վրայ:

ՎԱԼՈՒՏԱ

Ինչպէս պետութիւն մը իրաւունք չունի իր ունեցած ոսկիէն աւելի թղթադրամ բաց թողնելու՝ անանկ ալ անհատ մը չի կրնար ուզածին չափ անխմաստ խօսքեր շռայլել՝ առանց դիմացը իրական արժէք մը դրած ըլլալու: Շէյքսպիրը, որ 42 տարի լմաստուն բաներ է դրեր, իրաւունք ունէր

մարութեան իրաւունքէն օգտուելի) • Չարենցը անցելոյն մէջ 7 պրակ շնորհալի բաներ է գրեր, գլմացն ունի 5 անշնորհք պրակներ: Դեռ երկու պրակ գրելու աեղ ունի:

ՀԱՅ ՀՈՅԱՆՔԸ ԿԱՆԽԻԿ

Որտա սաղլամ դործ է բունել Չարենցը: Ուրիշ հեղինակներու նման օրերով ու շաբաթներով չի բերեր—տանիր իր քննադատներուն՝ պզտիկ հայհոյանք մը տալու համար:

Անիկա նախ կը հայհոյէ՝ նոր կու տայ գլրքը քննադատելու:

Շատ վաճառատանց դրան կարգացեր եմ «սպառիկ ոչ ոքի», բայց քիչ վաճառական տեսեր եմ Չարենցի նման դրած սկզբունքին հետեւող: Ըստ Չարենցի այն մարդը, որ իր դրածները չի հաւնիր՝ «էջ» է, իսկ այն էջը, որ իր պոեմները կը մեծարէ՝ «մարդ» է: Փառք տանք Ամենակալին, որ տակաւին էջերը գլխի չեն ինկեր, ապա թէ ոչ՝ աշխարհիս բոլոր աւանակները պահանջւած յարգանքի տուրքը ձգելով Չարենցի փառասիրութեան դանձարկը՝ մարդոց շարքերը պիտի լեցուէին:

Կը բացադանչեմ.— Ինչո՞ւ ճանրմ, բանաստեղծութիւն մը հաւնելու կամ չհաւնելու պատճառով ինչո՞ւ կենդանական ազնիւ ցեղ մը վերանայ երկրիս երեսէն:

ՀԱՐՑԱՊՆԴՈՒՄ

Չարենցի հայ դրականութեան մէջ բերած նորութիւններէն գլխաւորներն են՝ «թուք, խլինք, մէղ, ոչըլ, կակուղ միս եւ կոնք» — բաներ մը, որ Երեւանի ո՛ր ետ ինկած փողոցին մէջ ալ լեցուած ըլլան, սանիտարական վարչութիւնը սայլակները կը դրկէ դուրս թափելու համար: Ինչո՞ւ կը յարգուի վարչութիւնը. իր սայլակները տակաւին չեն երեւցած հայ դրականութեան դաւաններուն առջեւ, ուր այս բաները գրուած են ցերեկով:

ԵՂԻԱ ԵՒ ԵՂԻՍԷ

«Երեք»էն «երկուս»ը՝ Չարենցն ու Վչտունին Պառնասի զոյգ մարդարէները, կը շրջէին Հայաստանի մէջ եւ «պրոլետարական» դրականութիւն կը քարոզէին հեթանոս պոետներուն:

Ո՛ւր մտնէին՝ «մենք եկանք» կ'ըսէին, ուրկէ ելլէին՝ «մենք դացինք» կը ձայնէին. Մէկ խօսքով՝ մենք, մենք, մենք...:

Երբ անցեալ ամրան Չարենցը Մոսկուա համբարձաւ՝ կէս ճամբին խըղճալով մենակ մնացող Վչտունուն՝ իր «դրական պրեստիժ»ը վար նետեց առ ի դործածութիւն:

Այսօր, Հայաստան վար դալով, կը խլէ իր նուիրած «պրեստիժ»ը հէգ Վչտունիէն ու «Վեռլէնի քամուն» կու տայ իր գլնակիցը:

Կենդանիներուն մէջ ալ ցեղ մը կայ, որ կը ծնի ու ձագերը որոշ տարիքի հասցընելէ ետք՝ կը սկսի ուտել:

ՏԷՐՏԷՐՆԵՐ

Չարենց.— Երէկ երեկոյ պոեմ մը ծնաւ:

Բարեկամ մը.— Տէրտէրեանը կը կանչես քննադատելու:

Չարենց.— Ո՛չ, ես Տիգրան Հախումեանի ծուխն եմ:

Կ Տ Ա Կ

«Ռումանս անսէր»ը Մոսկուայի մէջ տպուած էր ու ոչ միայն Հայաստան չէր ուղեր դալ, այլեւ կը վախնար արարանի դուռնէն դուրս նայել:

— Դո՛ւրս եկուր, — կը հրէ ետեւէն հեղինակը:

— Կը վախնամ քննադատութենէ:

— Քալէ՛, ես քեզի հետ եմ:

Ու ձեռքէն բռնած Հայաստան կը բերէ Չարենցը:

— Իսկ եթէ դուն մեռար, ո՞վ պիտի պաշտպանէ զիս, — կը հարցնէ պոեման:

— Կը կտակեմ, որ ոչ ոք չքննադատի քեզ:

ԱՄՈՒՐԻՆ ԵՒ ՊՍԱԿՈՒԱԾԸ

Տէրեանին ուրուականը Չարենցին դալով այսպէս խօսեցաւ.

— Ինչո՞ւ կը թքես իմ դրքերի վրայ: «Յնորք» երգելը այդքան դէ՞ շքան է եղեր: Դուն «կակուղ միս» ու «կոնք» կ'երգես, վասնզի ամուսնացած ես: Չէ՞ որ ամուրի ատենդ ինձ նման ես երգեր: Դուն կ'ըսես պէտք է գրել՝

«Յնորք» է

Կը գամ

Մկանոս

Եւ

Երբ նա հանուի

Գիտեմ

Կը գգամ ձկան հոտ»:

Այդ շատ լաւ կը խօսիս, բայց բանն այն էր, որ այն աղջիկը, որուն ես կը սիրէի, երբ «հանուէր»՝ դուռը կը կղպէր ու չէր թողուր, որ երթայի «ձկան հոտ» առնէի իրմէ: Ես ալ ստիպուած դրան առջեւ «ցնորք» կ'երգէի: Հասակիս հետ կապուած թերութիւն մը չե՞ս ներք ինձի, ապերա՛խս:

ԳԱԺԱՆ ԱՆԳԹՈՒԹԻՒՒՆ

Գարնան առաւում էր: Փողոցէն անցած ատենս նկատեցի շարան մը «մեչչա»ներ, մոռութիւն թաշկինակով կապած կ'երթային: Իմ հարցիս, թէ ի՞նչ է պատահեր՝ պատասխանեցին ցաւալի տնքալով.

— Անմեղ կ'երթայինք, Չարենցը մեզի կանչեց, թէ՛

Ուզո՞ւմ է՞ կամպոտ կամ չիք
կամպոտի փոխարէն
էսօր ձեր
կակուղ ծնօտին մօտիկ
Թող շաչէ երգերիս դամչին:

ու սկսաւ հարուածել:

— Վա՛յ անդու՞թ մարդ: Յայտնեցի՞ք ոստիկանատուն:

— Այո: Բանաստեղծները արտօնուած են եղեր ուղածնին ընելու:

— Իբրո՞ւ: Անանկ է նէ՛ փախէ՛ք: Այէկ որ չեն սպաներ ձեզի:

ՍԵՊՏԵՄԲԵՐ ԵՒ ՀՈԿՏԵՄԲԵՐ

— Երանի՛ր քեզ, — գարձաւ Սեպտեմբերը Հոկտեմբերին նախանձով
լի, — դայեակի նման Չարենցը զրկած, կը դգուէ քեզի:

— Մի նախանձիւր, զրոյցի, եթէ հնար ունենամ՝ զիչեր մը կը փախչիմ
անոր երգերէն:

— Ինչո՞ւ:

— Ծօ ի՞նչ կը հարցնես, օր ցերեկով ալ «ուռած շող կոնք, կակուղ
միս, կիրք, արնահամ բուրմուռք»... Ամօթէս գետին կը մտնեմ:

— Վա՛յ քունամ, քոյրիկ, ինչո՞ւ այդքան տկլոր:

— Տէրեանի հակառակն ըրած ըլլալու համար...:

«ՀԻՆ» ՈՒ «ՆՈՐ» ՉԱՐԵՆՑԸ

Երբ Չարենցը ճորր ուղղութեան հետ նստած խրախճանք կ'ընէր, իր
հին պոեմները սեւեր հաղած ներս մտան ու այսպէս ըսին.—

— Ե՛տ տուր մեզի «Չարենց» անունը, այդ անունը մեզմով առիր, մե-
զի կը պատկանի: Մեզի գէն ես «Թ.քեր», մենք ինչպէ՞ս ապրինք անանուն:
Եթէ մէկը հարցնէ, թէ «որո՞ւ պոեմներն էք»՝ ի՞նչ պատասխանենք...:

ԼԵՌ ԿԱՄՍԱՐ

Փ. Ճ Ե Ր Ա Ն Ե Ա Ն

Գ Ա Ր Ն Ա Ն Լ Ե Տ

Ամէն գարուն,
Մեր տան վերեւ
Ծեր արծիւ մը կը սաւառներ հեգասահ,
Ամէն գարուն,
Մեր տան ազատ առաստաղին՝
Ծիծեռնակ մը կը շինէր բոյն:
Արծիւը ծեր եւ ծիծեռնակը ա՛լ չեկան...
Հին ֆաղափին աշտարակէն
Թնդանօթներ մահ սփռեցին թաղէ թաղ,
Ու հրքիռներ երկիւղեցին մէջ սեւաստուեր՝
Հուր տեղացին տունէ տուն...
Քաղաքն ամբողջ եղաւ դագաղ,
Ուր դիակներ վերապրողին կենսագրութիւնը գրեցին...

Կ Է Ս Գ Ի Շ Ե Ր Ա Յ Ի Ն Պ Տ Ո Յ Տ

Կէս գիշերին,
Երբ ծառերէն աշուն-աշուն մերկ տերեւներ կը թափին՝
Փողոցին մէջ,
Երեք ստուեր լուսնի լոյսով կը ֆալեն.
Մէկն իր լեզուն անէութեան մէջ մոռցած՝
Իր աչքերով արծուերիք
Եօքը մզոն հեռուները կը տեսնէ...
Միւսն ի ծնէ աչագուրկ դեռ կը խօսի
Իր չտեսած աշխարհներուն ի մասին,
Երրորդը խուլ՝ աչքերն յառած լուսնակին՝
Կոյրին տեսածն ու համրին պատմածները կ'ունկնդրէ
Կէս գիշերին,
Երբ ծառերէն աշուն-աշուն մերկ տերեւներ կը թափին...

Ա Ն Վ Ե Ր Ա Դ Ա Ր Զ Պ Տ Ո Յ Տ

Արշալոյսին նամբայ ելանք երկուքով.
Կեանքն առօրեայ կը կուտակուէր ուսէ ուս...
Եւ ուսէ ուս՝ յուզարկաւոր՝
Մարդերն անձնասպան,
Կը տանէին անշուկ ֆաղափի մը հրսկայ դագաղն անպատան.
Մե՞նք՝ երկուքով
Կը շտապէինք նամբաներէն հնօրեայ...

Երեկոյեան, կը յիշե՞ս,
 Երբ քայլերուդ տակ պահուած մուֆն իր գիշերն արձակեց
 Ու աչքերէդ տեսիլքներն հուսկ գաղթեցին,
 Կորսնցուցիք զիս ընդմիջտ.
 Աւեր քաղաքին դուն հիշն անլեզու,
 Կը քալէիր աննպատակ ու խոհուն,
 Քարերուն տակ տառապող հողին հետքը գտնելու...

ՏՈՂԱՆՑՔ

Լուսաբացին,
 Քաղաքն ամբողջ մոխրադաշտի վրայ դրուած մահազդ մըն էր,
 Երբ վերջապէս,
 Անոնք եկան արեւմուտէն...
 Արեւաբիք իրենց աչքերն՝ արիւնոտ
 Եւ անշիքիմ մեռելներու ստուերներէն հարածուած.
 Մին գրկած ոտքն իր արիւնոտ,
 Զոր հաշմած էր դարանակալ ոռմբի մը շեղքն անխնայ,
 Միտանի կեանքին համար,
 Դաժանօրէն կ'ոտոտէր...
 Միւսն՝ իր բազուկն արնաթաթախ
 Շալկած ուսին՝
 Երեքալէն կը քալէր,
 Աչքերն յառած
 Դեռ չլուսցած հեռուներուն...
 Մին քոք չունէր,
 Բայց կը շնչէր տակաւին:
 Կացինահար՝ միւսն իր գլուխը գրկած
 Կ'առաջանար
 Ու կարծես դեռ կը մտածէ՛ր...
 Լուր կը սպասէր
 Աշխարհի չորս ծագերէն,
 Բացի մահէն...:
 Լուսաբացին՝
 Անոնք եկան արեւմուտէն.
 Մէկն անոնց մէջ,
 Ա՛խ, այն մէկը, որ դեռ ուժգին կը տրոփէր
 Միրոյ, վշտի հազար ու մէկ սիրտերով...:
 Ու կ'ըսէն, քէ ան տակաւին
 Զէր իմացած, քէ պատերազմն աւարտած էր, —
 Թէ իմանա՛ր,
 Ռազմադաշտին մէջ կորսուած,
 Իր գոյգ աչքերը կը փնտտէր...:

Ա. Հ Ա Յ Կ Ա Ջ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹԵԱՆ

ՊԱԼԱՏԻՆ ՄԷՋ

Առաջինը՝ «Արդարադատութեան պալատին մէջ», «Բագին»ի հին թիւերէն ծանօթ է ընթերցողին, իսկ երկրորդը՝ «Երկրորդ անգամ արդարադատութեան պալատին մէջ» մաս կը կազմէ գրագէտին «Երջանկութիւն» հատորին, որ շուտով կը հասնի ընթերցողին:

Արամ Հայկազ միջին սերունդի դրող չէ, ոչ ալ տարեց դրող է այլեւս, արդէն եօթանասունութին մէջ է, բայց, հազուադէպ երեւոյթ, բայց օժտուածներուն մօտ յաճախազէպ՝ իր կեանքի բոլոր հանգրուաններուն պահեց իր թարմութիւնը, հաճելի ընծայելով էջերուն ընթերցումը, ինչպէս է պարագան նաև հետեւեալ գրութեան:

Քանի մը ամիս առաջ, մեր քաղաքի արդարադատութեան անունով ճամբայ հանուած կոչնադիր մը, չեմ գիտեր քանի՞երրորդ անգամ ըլլալով, զիս հրաւիրեց, որ երթամ ու, իբրև ԹԻՒՐԽԱՍ ծառայելով՝ կատարեմ քաղաքացիական պարտականութիւնս:

Անդամ մը դացած ու ծառայած էի. Երեք անգամ ալ, աշխատած լրագրիս խմբագիրը, հեռաձայնով մը ամէն բան կարգադրած էր ու ազատած զիս: Այս անգամ ո՛չ լրագիր կար, ոչ ալ՝ խմբագիր: Թախարղն էի ինկած: Երթալ չուզելուս դիտաւոր պատճառը, ներկայանալէ ետք, մինչեւ դատական խնդրի մը համար ԹԻՒՐԽԻ անգամ նշանակուելիս, երբեմն օրեր կ'առնէր, ու սպասման այդ օրերը, խճողւած սրահի մը մէջ բանտուած՝ ահաւոր կերպով ձանձրալի էին:

— Աս բանը չկար ցանկին մէջ, — ըսի՝ կոչնադիրը կարգալէ ետք:

— Ի՞նչ բանի մասին է խօսքդ, — հարցուց կինս:

— Զիս նորէն «Ժիւրի տիւթի»ի կը կանչեն, — ըսի:

— Անդամ մը-երկուք չդացի՞ր, — հարցուց:

— Գացի՛, բայց կ'ենթադրեմ՝ դործս այնքան լաւ կատարեցի, որ բերանուն համ տուաւ, ու վերստին կը կանչեն:

— Է՛, ի՞նչ կը գոչուհիս, դնա՛ նստէ, հանդէ՛։ Թերեւս հետաքրքրական ըլլայ նաեւ դատաւարութեան ընոյթը։

— Պիտի երթամ, ու ջանամ, որ իմ աեղս քե՛զի կանչեն... Դո՛ւն դնա նստէ ու հանդէ՛, գրամ վատակէ՛... Յրբ եօթ տարր գրպանի գրամ՝ ու ճամբու ծախող ալ կուտան, թերեւս հետաքրքրական ըլլայ դատաւարութեան ընոյթը...

— Եթէ՛ դիս ուղէին, կոչնադիրը իմ անունիս կը դրկէին, հասցէս գիտէի՞ն։

— Այո՛, բայց երբ աս կոչնադիրը կը պատրաստէին, դեռ «վումբիզ լիպ» յաղթանակը դատարանի տոմարներուն մէջ չէր արձանագրուած...

*
**

Որոշուած օրը, ատուու կանուխ, աչքիս մէկը բաց, միւսը՝ դոց դաւաթ մը սուրճ կուլ տալէ ետք, ելայ ճամբայ։ Կէս ժամէն հասայ Ճամախքայի Արգարադատութեան պալատը, բարձրացայ սանդուխներէն եւ ուղենիչներուն հետեւելով հասայ շատ ընդարձակ սրահ մը, ուր կէս հազարի չափ մարդիկ, ինձմէ առաջ, տեղ էին դրաւած։ Մեծ սրահի հեռաւորագոյն ճակատին առջեւ, ալտոս սեղանի մը ետեւ, տխմար գէմքով համադրեսաաւոր մը նստած էր մօտեցայ անոր ու, ձեռքիս կոչնադիրը ցոյց տալով՝ սպասեցի հրահանգի։

— Ինքզինքիդ աթոռ մը դտիր ու նստէ մինչեւ որ անունդ կարդացուի, — ըսաւ, առանց ինձի կամ ձեռքիս թուղթին նայելու։

Առաւօտեան ժամը ինն էր։ Մէկուկէս ժամ ետք, ուրիշ համադրեսաաւոր մը եկաւ ու, բարձրախօսի մը ետեւ անցած՝ սկսաւ հրահանգներ տալ, մեր ընելիքը բացատրել մեղի։

— Երբ ձեր անունը կարդամ, ու եթէ պատրաստ էք ծառայելու, բարձրաձայն՝ որ լսեմ — քիւ սը խուլ սո՛ — կը պոռաք «պատրաստ»։ Իսկ եթէ առարկութիւն ունիք, չէք կրնար ծառայել, կը պոռաք «գիմուս»։ Դիմում պոռացողները կ'երթան այս սրահին մուտքին ձախ կողմը դտնուող սպասման սենեակը, ուր մասնաւոր դատաւոր մը պիտի լսէ իրենց առարկութիւնները եւ ընդունի կամ մերժէ։ Անոր վճիռը վերջնական է։

Մօտ երեք քառորդ ժամ ետք, ջանաց կարգալ իմ անունս։

— ԵՅՐԸ՛մ, էՅՐԸ՛մ, ... էՅՐԸ՛մ...

Հասկցայ, ես էի. չէր կրնար երկրորդ անունս արտասանել։

— Դիմո՛ւմ, — պոռացի բոլոր ուժովս։

Եւ, ըստ նախօրօք տրուած բացատրութեան, ինձի պէս բաղմաթիւ «գիմուս» ըսողներու հետ կարգ մտած՝ յառաջացանք սպասման միւս սենեակը։

Հարկ եղաւ ժամ մըն ալ հոն սպասել՝ մինչեւ որ քաղաքացիի հազուստով դատաւոր մը եկաւ ու, անկիւնը դրուած սեղանի մը ետին անցած՝ սկսաւ հերթով մեզ իր մօտ կանչել ու լսել մեր առարկութիւնները։

Երբ հերթը ինձի եկաւ ու գալրոցական աշակերտի մը պէս խոնարհ իրեն ներկայացայ՝

— Քաղաքացիական պարտականութիւնդ չկատարելու համար ի՞նչ առարկութիւն ունին, — հարցուց՝ աչքերուս մէջ նայելով, — ոտտիկա՞ն էս, դեղադո՞րծ, ուսուցի՞չ, լրագրո՞ւն, հի՞շտ, վաթսուներկինդ տարեկանէն Վե՞ր, խո՞ւլ, հիւսնո՞ւն...

— Ծ՛յո՞ւ բաներէն ոչ մէկն էմ :

— Ուրե՞մն...

— Ուրեմն՝ էր քննախնայաբար ինծի դիտացու կու տայ :

— Ձմե՞ռը :

— Ձմեռն ալ հովերը դիտացաւ կու տան ինծի :

— Գարո՞ւնը :

Գարնան մասին չկրցայ անմիջապէս առարկութիւն մը ճարել :

— Մարտի 22ը ինչպէ՞ս է, արդէն դարուն եկած կ'ըլլայ :

— Եէս, ետը անըր, Մարտի 22ին դարունը արդէն եկած կ'ըլլայ :

Ձեռքէս առաւ դեղին կոշնագիրը ու վրան ամուր, վստահ ձեռքով մը դրեց, որ «Մարտի 22ին անպայմանօրէն ծառայելու էմ», նոյն բանը արձանագրեց նաեւ իր առջեւի տոմարին մէջ, թուղթը երկարեց ինծի ու պոռաց :

— Յաջո՛րդը :



Մարտի 15ին, քանի մը օր ետք քաղաքացիական պարտականութիւնս կատարելու ստիպուած ըլլալս ինծի յիշեցնող երկու յաջորդական նամակներ եկան : Գարունն ալ եկաւ : Օդը մեղմ էր, փոփոխական : Արեւն ու հովերը՝ տաք : Օրերը երկարիւ էին սկսած, ու դրանս առջեւի մարդը օրըսօրէ կը կանաչնար : Կարդ մը թոշուններ եկան ետ՝ ու ծառերու կատարներէն երզը սկսաւ :

Քսաներկուքին առաւօտը, ժամը իննին, ինծի ծանօթ սրահին մէջ էի : Երբ անունս կարդացուեցաւ, ստիպուած, «պատրաստ» պոռացի : Կարծեմ ձայնս քիչ մը պղտիկ ելաւ, որովհետեւ բարձրախօսին առջեւ մարդը ըսաւ, թէ չլսե՞ց պատասխանս :

— Պատրաստ էմ, — ըսի :

— Սփիֆ ափ, մէն, սփիֆ ափ, որ լսե՞նք...

— Պատրաստ էմ, — պոռացի :

— Ա՛յ, ահա այդպէ՛ս, կը տեսնե՞ս, եթէ փափաքիս կրնաս ձայնդ լսելի դարձնել :

— Եթէ քեզ հաճեցնելու չափ լաւ ձայն ունենայի, օփերայի երգիչ կ'ըլլայի, — ըսի :

— Կատակ ընելու ժամանակը չէ՛, — ըսաւ ըրտօրէն :

Երբ ցանկի ընթերցումը աւարտեցաւ, արդէն ժամը մէկն էր :

Մեզ ազատ արձակեցին :

— Գացէք ճաշեցէք եւ երկուքին վերադարձէք :

*
**

Գացինք ճաշեցինք եւ երկուքին վերադարձանք :

Երբեմն, հեռաձայնով տրուած հրահանգի մը վրայ, կը դարձրնէին սեղանին վրայ դրուած ու, մեր անունները պարունակող թմբուկը ու մէջէն քսան անուն կարգաւոր՝ կը պատուիրէին, որ կարգացուած անուններուն տէրերը երթան թիւ այսինչ կամ այնինչ սենեակը, ուր, դառախաղին ու պաշապան վաստաբաններուն կողմէ հարցաքննուելէ յետոյ, մաս կը կազմեն մանր գատերու համար վեց ու, ոճրային դատերու համար՝ տասներկու հոգինոց ժլւրիի մը :

Առաջին, երկրորդ ու երրորդ օրերը՝ երեք անգամ տարբեր գատերու համար քննուելէ ետք, երբեմն՝ ամբաստանող, երբեմն՝ պաշտպանող կողմը, անընդունելի դատն զիս :

Չորրորդ օրն էր, որ բախտս բացուեցաւ : Ընդունուեցայ ու մեզ զրկեցին տուն, պատուիրելով, որ յաջորդ օրը առաւօտուն դանք ու հաւաքուինք Արդարագատութեան Պալատի թիւ 44 սենեակը :

Փողոցին մէջ հանդիպեցայ փաստաբաններէն մէկուն ու «չնորհակալութիւն մեզի մտահերնուդ համար», ըսի :

Մարդը ժպտեցաւ ու ըսաւ, որ վաղը կը տեսնուինք :

— Այս անգամ խօսեցար, ուրիշ անգամ չխօսիս այդ մարդուն հետ, — ըսաւ քովէս քալող պաշտօնակիցներէս մէկը, — արտօնուած չե՛ս...

*
**

Ուրբաթ օր տեղեկացանք դատի ընոյթին՝ երկար բարակ լսելով երկու կողմին ալ փաստերն ու պարզաբանութիւնները : Օրը այդպէսով ալ վերջացաւ : Շաբաթն ու կիրակին, ընտկանաբար, հանդըստեան օրեր էին : Երկուշաբթի տուտու, երբ ըսն զատաւլարութեան սրահը մտայ, միջանցքին աջ կողմը նստած էին երեք անձեր. մարդ մը, կին մը, ու ճիշդ իրենց առջեւի նստարանին վրայ՝ դանդահէր ու կտր դէմքով, հաղիւ 15-16 տարեկան թուացող պատանի մը : Միւս կողմը՝ մէկ հատիկ մարդ մը կար : Նիհար, ախրադէմ, ուռած կօպերով ու դեղին մոյթով ու աչքերուն տակ կախուած տոպրակներով փոքրակազմ մարդ մը :

Անհամակրելի տիպ մը :

Դեղին մոյթով մարդը վարիչը ըլլալու է այն կառքին, որ դարձուած է հեծելանիւ նստած պատանիին ու հիւանդանոց զրկած զայն : Աջ կողմը նստած պատանին արկածեալը ըլլալու է. հետի անձերը՝ իր ծնողքը, խորհեցայ :

Դեռ մեզի յատկացուած նստարաններուն չէինք հասած, երբ սրահին հսկող համադրեստաւոր պաշտօնեան հասաւ ետեւէս ու դըպաւ ուսիս.

— Պարոն երդուեալ, խնդրեմ, գլուխդ բաց :

— Ե՛, ներեցէ՛ք, մոռցեր էի, թէ գլխարկ եմ դրած. գլուխդ դատարանը տաճարի պէս է :

Ու գլխարկս յախտակելով դրի թեւիս տակ :

— Հոն պահարտն կայ: Կրնաք ձեր զսյքերը պնել հոն ու նսեւ կախել ձեր հագուստները:

Դեռ պարտ էք ու մեզմէ շատեր վերարկու էին հագած:

— Մի՛ վախնաք, մէկը չի դողնար զանոնք, — վստահեցուց զիս:

— Այդ վերջին գիտողութիւնդ բոլորովին աւելորդ էր, — ըսի:

Յառաջացանք մեզի համար պատրաստուած կաշեպատ ու հանդրասաւէտ աթոռներուն ուղղութեամբ ու բազմեցանք անոնց մէջ:

Երկու կողմի փաստարաններն ալ եկան քիչ ետք, բայց դեռ դատաւորը չկար մէջտեղ:

— Նախածաշի համար պարոն դատաւորը ձուկ կ'ուտէ, մինչեւ որ փուշերը հանէ ժամանակ կ'առնէ, — ըսի քովի մարդուն:

— Կը ճանչնա՞ս զինք:

— Այո՛, հօրեղբօրս տղան է, — ըսի:

Միամիտ մարդ մըն էր: Հաւատաց:

Երկու կողմին ու իրենց փաստարաններուն անունները պարունակող թղթիկներ տուին մեզի, որ ծանօթանանք անոնց: Դատ բացողները Մաքսիմովիչ կը կոչուէին: Դարձայ քովիս մարդուն ու հարցուցի, թէ Մաքսիմովիչները ի՞նչ ազդ կրնան ըլլալ:

— Լեհ են, — ըսաւ:

— Վստա՞հ են:

— Հարիւր առ հարիւր:

— Հը՞մ...

— Ինչո՞ւ «հը՞մ» կ'ըսես...

— Ոչի՛նչ. կը մտածեմ...

Փոթորիկ մը պայթեցաւ հողիս մէջ: Այս աղուն երակներուն մէջ հայու արիւն ըլլալու է մաս մը... Ի՛նչ չափով ըլլալը՝ տարբերութիւն չ'ըներ... հայու արիւն կայ այդ պատանիին երակներուն մէջ... Արդեօք ի՞նչ չափով վնասուած է. անթացուպերով եկած նստած է հող, թէ ոչ՝ քալելով, կը կաղս՞յ, որեւէ ձեւով խեղանդամուած է...

Անաչառ ժիւրիստ մը չե՛մ կրնար ըլլա՞լ...

Երբ դատաւորը դայ բարձրացնելու եմ մատո ու ոտքի ելլելով յայտարարելու եմ, թէ «ես չե՛մ կրնար այս խնդրին մէջ անաչառ ըլլալ, որովհետեւ կը մտածեմ, թէ դարեր առաջ Լեհաստան զաղթած հաղարաւոր հայերու արիւնէն մաս մը կայ այդ աղուն երակներուն մէջ շքեղ արիւնին խառնուած, ու ես չեմ կրնար»...

Ի՛նչ ապուշ եմ... Ատանկ բան կ'ըսուի՞... Վրաս կը խընդա՞ն...

Ժամը տասի ատենները դատաւորի ամպլոնին ետեւէն դղըրդիւն մը. դուռ մը կը բացուի ու Նորին Գերադանցութիւնը, սեւով պատմուճանուած, երկու սանդուխ մաղլցելով կը բարձրանայ վեր:

— Հիգ անըր Յաճ Ուտայնթայն, — կը ծանուցանէ բարձր ձայն մը, ու մենք, ամէնքով, կը ցատկենք ոտքի:

— Պի սիթքա, — նստեցէք, — կ'ըսէ պարոն դատաւորին հաճելի ձայնը:

Պայծառ աչքերով, արթուն թուացող մարդ մըն է: Յայտնի

է, թէ դիչերը լաւ է քնացած. ո՛չ փոքէր է խաղացած, ոչ ալ՝ խրդաւորութեան մը պատճառաւ քունը կորսնցուցած: Ձեռքի շարժումով մը երկու կողմի փաստաբանները կը կանչէ իր մօտ ու ցած ձայնով բաներ մը կ'ըսէ անոնց:

Յետոյ խնամքով ետ կը դարձնէ իր սեւ պատմութեան լայն թեղանիքները:

Արամ, կ'ըսեմ ես ինծի. եթէ որոշած ես մատդ վեր բարձրացրնելով բաներ մը խոստովանիլ, հիմա ժամանակն է...

Բայց ո՛չ մտոս կը բարձրանայ, ոչ ալ՝ թեւս:

— Օրեր առաջ ձեզի տուած տեղեկութեանցս համաձայն, կ'ենթադրեմ, թէ տեղեակ էք դատի բնոյթին, — խօսք կ'ուղղէ դատաւորը երգուեալներուն, — ուշադրութեամբ լսեցէք երկու կողմի փաստերը եւ առարկութիւնները եւ հասէք եզրակացութեան մը: Այդ եզրակացութեան պիտի հասնիք ո՛չ թէ լսելով ու հաւատարկով այս պարոններուն — ու ձեռքով երկու փաստաբանները ցոյց կու տայ — ըսածին ու խօսած ճառերուն, այլ, հոս, վկաներու, ականատեսներու ըսածէն ու պատմածէն դատելով: Արկածը պատահած պահուն ո՛չ ես հոն էի, ոչ ալ՝ այս պարոններէն ոեւէ մէկը: Կը կրկնեմ, ձեր վճիռը կայացնելու էք փաստերու, տրուած վկայութեանց վրայ հիմնուելով: Երբ առարկութիւններն ու փաստարկութիւնները վերջանան, ես պիտի տամ օրէնքի ու անոր կիրարկման համար անհրաժեշտ եղող տեղեկութիւնները: Ձեմ գիտեր, թէ, — շարունակեց ան, — քանի՞ օր պիտի առնեն այս բոլորը. մինչեւ դատաւարութեան վերջանալը, դուք պէտք չէ որ իրարու, ձեր ընտանիքի անդամներուն, ձեր տունները այցի եկողներուն կամ ոեւէ անձի հետ խօսիք այս դատի մասին: Երբ փողոցը կամ այլուր հանդիպիք այս փաստաբաններէն ոեւէ մէկուն, «բարի լոյս» անդամ մի՛ ըսէք անոր: Այս բոլորը կ'արգիլեմ ձեզի՝ խորհելով, թէ անոնք կրնան աղղեցութիւն ունենալ հետագային ձեր բերելիք վճիռին վրայ:



Իբրեւ առաջին վկայ, ականատես, կը կանչուի արկածէն անմիջապէս ետք, ձայնասփիւռով տրուած ահադանդին պատասխանելով դէպքին վայրը փութացած ոստիկանը: Շատ բան չի դիտեր: Տեղ հասած է հիւանդատար կառքին հետ, ու տեսած արկածահար պատանին՝ փողոցի ափայլթին վրայ պառկած, ուշաթափ: Վարորդի կառքին աջ առաջամասն ու տղեկին հեծելանիւր, բախման պատճառաւ, մնասուած էին: Մայրուղիի երկայնքին, մօտ քսան ոտք երկաթեամբ, խորունկ անուահետքեր կային: Կառքի վարորդը ըսաւ իրեն, թէ պատանին, յանկարծակի, կողմնակի փողոցէ մը ելաւ իր առջեւ:

— Կրցա՞ր ներկաներէն վկաներ գտնել, — հարցուեցաւ ոստիկանին:

— Հարիւրաւորներ կային, բայց ոչ ոք ներկայացաւ իբրեւ վկայ արկածին:

— Եւս ար էփսփիւզտ, — ըսաւ դատաւորը անոր ու դայն զոր-
կեց իր դործին :

Ամբաստանեալը, որ հարցաքննուեցաւ արկածեալ պատանիին
փաստարանին կտրմէ (դէպքը պատահած էր լման չորս տարի ա-
ռաջ), չկրցաւ կամ չուզեց բան մը տեղեցնել արուած տեղեկութեանց
վրայ : Պնդեց, թէ ինք կառքը կը վարէր օրէնքով թոյլատրուած ա-
րագութեամբ եւ գինով կամ քնատ չէր : Կը խօսէր վստահ չեղտով,
անխռով, առանց վարանումի : Ինծի թուեցաւ, թէ բազմաթիւ ան-
դամներ, իր փաստարանին հսկողութեան տակ, փորձեր էր ըրած,
մարդուած՝ այս օրուան համար :

Վերջապէս վկայի աթոռը գրաւելու հրաւիրուեցաւ ինքը՝ ար-
կածեալը : Երբ իր անունը արուեցաւ, տեսայ, որ բոլոր երգուեալ-
ները արթնցան, իրաննին առաջ ծռեցին՝ տեսնելու համար, թէ ար-
կածեալը ի՞նչ վիճակի մէջ է :

«Ուրեմն մինակ ես չէի, որ հետաքրքրուած էի այդ բանով»,
տնցաւ մտքէս : Ինծի պէս ամէն ոք կ'ուզէր գիտնալ, թէ արկածը
որեւէ մնայուն հետք ձգած էր պատանիին վրայ : Ուրիշներ չեմ գի-
տեր, բայց ես ուրախացայ, տեսնելով, որ պատանին առողջ, լման
էր :

Վկաներու աթոռին հասնելով՝ երկու ձեռքերը գրաւ եղերքի
յեռակներուն ու նստեցաւ :

Լաւ վկայ մը չեղաւ : Հազիւ տասնըվեց տարու ըլլալ կը թը-
ւէր : Յուզումէն կամ վախէն ձայնը պղտիկցած էր, բերանը՝ չոր-
ցած : Իր պատասխանները չէինք լսեր : Դատաւորը քանի մը անգամ
հարկ տեսաւ դիտել տալ, որ բարձր խօսի :

— Ես՝ որ մօտդ եմ, չեմ կրնար լսել քեզ . ինչպէ՞ս կ'սկսեմ
լսու, որ ժլւրիի անդամները լսեն...

Ամբաստանեալին փաստարանը, որ ծեր աղուէս մըն էր, յա-
ջողեցաւ լման մը շփոթեցնել դայն : Տղուն պատասխանները երբեմն
հակասական եղան ու միշտ վարանոտ ու երկդիմի : Բայց ըսաւ, թէ
մայրուղի մտնելէ առաջ, ուր պատահած էր արկածը, կանգ էր ա-
ռած, չորս կողմը դիտած, ճամբորդատար պապի մը ճամբայ տը-
ւած, եւ յետոյ յառաջացած :

— Յանկարծ բան մը զարնուեցաւ հեծելանիւիս առաջամասին .
ինկայ դետին : Ա՛լ ուրիշ բան չեմ յիշեր, — ըսաւ ան :

«Ա՛լ ուրիշ բան չեմ յիշերը» լսիտի պէս զարնուեցաւ ներկա-
ներու գլխուն :

Արդէն կէսօրէ ետք ժամը չորսն էր, զրկեցին մեզ տուն՝ պատ-
ւիրելով, որ առաւօտուն ժամը տասին վերադառնանք :



Յաջորդ օրը, դատարան եկած պահուս, գետնուղիին մէջ հան-
դիպեցայ ժլւրիի մէկ անդամին ու զարմանքով տեղեկացայ, թէ ան
ինձմէ միայն մէկ փողոց անդին կը բնակէր, ու ես, տարիներու ըն-
թացքին, բնա՛ւ չէի հանդիպած իրեն :

Հակառակ դրուած արգելքին, սկսանք խօսիլ մեր օրերը դրա-

ւող դատին մասին: Ջանացի ղինք ի նպաստ մանչուկին տրամադրել:

— Գիտե՞ս, — ըսաւ, — մեր ընելիքը միայն որոշել է, թէ կառքին վարիչը յանցաւոր է՝ թէ ոչ: Եթէ դայն մենք յանցաւոր դանենք, ուրիշ ժիւրի մը պիտի որոշէ, թէ պատանին քանի՛ հազար տուար վնասուց հատուցում պիտի ստանայ:

— Ուրեմն տէտք է դայն յանցաւոր դանենք, — ըսի, պատանիին վկայութենէն փաստեր բերի, իր ու ծնողքին տառապանքը յիշեցուցի, ու թերադրեցի, որ ինքզինքը պահ մը անոնց տեղ դնէ... Աս ալ կայ, որ — ըսի, — մարդը բան մը չի կորսնցնէր, աւագակ պահաւորական ընկերութիւնն է, որ պիտի վճարէ տղուն...

Հասանք դատարան ու մտանք մեղի յատկացուած սենեակէն ներս:

Վեցս ալ ներկայ էինք: Ամբաստանող ու ամբաստանեալ, լայն միջանցքով մը՝ իրարմէ դատուած, հոն էին: Հոն էր նաեւ այն մարդը, որ արդարութիւն բաշխող այս տաճարին մէջ, ուշադիր էր, որ ղլխտրկները հանուին: Ուրիշ մարդ չկար:

Ժամը մօտեցաւ տասնըմէկին, բայց դեռ ո՛չ փաստաբան, ոչ ալ՝ դատաւոր:

— Բաներ մը կ'անցնի—կը դառնայ, բայց չեմ դիտեր, թէ ի՞նչ, — ըսաւ աջ կողմս նստած ժիւրխտը, որ արհեստով որմնադիր էր, ու անհամբեր, որ տղատուի եւ իր աշխատանքին դառնայ, — ամէն անցնող օր ես մօտ եօթնասուուն տուար կը կորսնցնեմ, — զանդատեցաւ:

— Ե՛ս ինչ ըսեմ, որ քու տասնապատիկդ, հարիւրտպատիկդ կը կորսնցնեմ, — մէջ ինկաւ իր քովինը.

— Գործդ ի՞նչ է որ...

— Մեծ վաճառատան մը համար դնորդ եմ: Հիմա շափոն դացած պէտք էր ըլլայի:

Յետոյ դարձան ինծի:

— Չայնդ չ'ելլեր... Դո՞ւն ինչ գործի վրայ ես:

— Ես հանդատեան եմ կոչուած, ես բան մը չեմ ըներ, — ըսի, համեստօրէն ամչնալով:

— Ժամտնակդ ինչպէ՞ս կ'անցընես:

— Քիչ մը կարգալո՞ւմ, քիչ մը դրելո՞ւմ, ու շատ մըն ալ՝ կնոջս հետ կուլ՞ւ ընելով...

— Գրաւի կու դամ, որ այդ բոլորին մէջ ամէնէն հաճելին կնոջդ հետ կուի բնելն է, — ըսաւ որմնադիրը:

— Մարդարէ ըլլալու պէտք չունէիր՝ դուշակելու համար այդ բանը, — ըսի, — բայց եթէ այդքան լաւ դուշակող ես, դուշակէ, թէ ի՞նչ կ'անցնի—կը դառնայ, ո՞ւր է ամէն մարդ...

— Երկու կողմերն ալ կը վախնան, թէ մեր բերելիք վճիռը իրենց գէմ կրնայ ըլլալ. կը ջանան վարադոյրին ետեւ հասկացողութեան մը գալ: Հարցի այդ ձեւ լուծումը ճաճ Ուսայնթարի ալ նախընտրած ձեւն է:

— Ինչէ՞ն դիտես:

— Իրեն դրացի եմ.

Ճիշդ այդ պահուն բեմին կանակէն լուեցաւ սովորական ազ-

մուկն ու բարապանի ազդարարութիւնը, թէ «սպարոն դատաւորը կու գայ» :

Ամէնքով ոտքի ցատկեցինք :

— Պի սիքքա :

Իր ետեւէն, դատաւորի առանձնասենեակէն դուրս ելան նաեւ երկու փաստաբանները :

Պաշտպան փաստաբանը, տրցակ մը թուղթ ու քանի մը նըկար բռնած՝ մօտեցաւ մեզի ու սկսաւ իր եզրափակիչ ճառը : Կրկնութիւններով լեցուն ու տաղտկալի ճառ մը : Կը ջանայ համոզել մեզ, որ երբ վարորդը դէպքին վայրը հասնող ոստիկանին ըսաւ, թէ աղեկը յանկարծ իր առջեւ ելաւ, բացարձակ ճշմարտութիւնն էր : Տեղւոյն վրայ առնուած նկարներ ցոյց կու տան մեզի, որոնք բան մը չեն ապացուցաներ : Կը ջանայ համոզել մեզ, որ իր պաշտպանած անձը անմեղ է :

Աւելի քան կէս ժամ կ'արդուկէ մեր դըուսը .

Հերթը կու գայ միւսին :

Մն ալ սակաւաբօս մէկը չէ՛ . . . Մն ալ անդամ մը—երկուք ըսւած ու լսուած բաները կը կրկնէ ու կոչ կ'ընէ, որ մեզաւոր դքսնենք կառքի վարիչը :

— Պաշտպանեալս, իր մանկութենէն ի վեր ապրած է արկածը պատահած մայրուղիին մօտ՝ ու հարիւրաւոր անդամներ անցած անկէ . ծանօթ է երթեւեկի բոլոր կանոններուն . . . Կանդ է առած ճամբորդաւոր պառի մը՝ եւ, «Կանդ առ» ազդարարող ցուցանակի մը առջեւ . . . Այդքա՛ն հողածու, այդքա՛ն ուշադիր մէկը, ինչպէ՞ս ամէն զրուշութիւն մոռցած, կ'ելլէ արագ սուրացող կառքի մը առջեւ, անհասկնալի է . չէ՞ . . .

Ճաճ Ուայնշթայն, որ աչքերը խուփ, իր թիկնաթոռին մէջ ընկողմանած մտիկ կ'ընէր, կը շտկուէ, կը բանայ աչքերը ու, մեղի դառնալով՝ կ'ըսէ .

— Պարոններ, դայէք ճաշի ու վերադարձէք ժամը երկուքին :

**

Օրացոյցին վրայ դարուներ արդէն չաբաթ մը առաջ եկած էր . բայց կը թուէ, թէ ճամբան, տեղ մը, կորսուած էր կամ մոլորած : Դուրսը սառ քամի մը կը փչէր ու անձրեւը մանր, տեւական, շեղ դժով կը դարնուէր մեր դէմքերուն : Աղանիներն անդամ, որոնք դատարանի պարտէզի մարդին վրայ կը ճեմէին ու կը սիրաբանէին օրն ի բուն, ապաստանած էին Արդարադատութեան Պալատի քիւերուն տակ : Բակի մէկ անկիւնը տնկուած մակնուրիան, իր վարդագոյն ծաղիկները բանալու համար՝ տաք արեգակի մը կը սպասէր : Բայց հովն ու անձրեւը դադարելու միտք չունէին : Խոնավութիւն էր ամէն կողմ : Սենեակներու օդն անդամ թաց էր : Ա՛, եթէ արեւ արեգակ ըլլար, հապճեպով ճաշելէ ետք՝ կ'երթայինք հանրային պարտէզ ու, նըստարանի մը վրայ փռուած՝ կը դիտէինք աղուոր աղջիկներու տղանցքը : Մինչեւ երկուք դեռ չա՛տ ժամանակ կայ . . .

Վերադառնալով Պալատ, կ'ապաստանինք երրորդ յարկի սը-
րահը, ուր հանդսառւէա աթոռներ կան: Քիչ մը կը խօսինք, քիչ
մը կը մըրափենք՝ ու ժամանակը կ'անցնի: Երբ ժամը երկուքին կը
մօտենայ, ամէնքով կ'երթանք մեր սենեակը ու կը դրուենք մեր ա-
թոռները:

— Հիմա, լսելէ ետք Նորին Գերագանցութեան խրատները,
պիտի առանձնանանք մեր սենեակը ու ջանանք եղբակացութեան մը
դալ, — կ'ըսեմ քովինիս:

— Ձեմ խորհիր, թէ երկար խորհրդակցութեան պէտք ունե-
նանք եղբակացութեան մը դալու համար, — կ'ըսէ ան, — Հարցը
պարզ է, պատանին, առանց աջ ու ձախ նայելու՝ նետուած է մայ-
րուդի. այդ բանին մէջ վարորդը ընչով է մեղաւոր...

— Յուսամ, թէ ժիւրիի միւս անդամները քեզի պէս չեն տրա-
մագաներ, — կ'ըսեմ անոր ու կը պատրաստուիմ հակաճառելու, երբ
դատաւորը, խօսքը մեզի ուղղելով, փոխանակ իր ցուցմունքներն ու
օրէնքի արամադրութիւնները բացատրելու, կ'ըսէ.

— Կը խնդրեմ ժիւրիի անդամներէն, որ առանձնանան խոր-
հրդակցութեան սենեակը ու հոն սպասեն հրահանգներուս (կը քաշ-
ւինք յարկ մը վեր դանուող մեր սենեակը):

Ձենք սպասեր: Վիճիլ կը սկսինք: Բանից դուրս կու գայ, որ
ինձմէ դատ, բոլորն ալ, պատանին յանցաւոր դոնելու հակումներ
ուսին:

Երբ արտայայտուելու կարգը ինծի կու գայ, կ'ըսեմ.

— Մի աճապարէք, պարոններ. դեռ դատաւորին բացատրու-
թիւնները չլսեցինք օրէնքի տրամադրութեանց մասին. դուք ձեր
դիտուն վճիռներ կայացնելու իրաւունք չունի՞ք: Հարցը ձեր կար-
ծածին չափ պարզ չէ՞, խղճի ու բանականութեան դէմ վճիռներ չը-
տա՞նք...

Ձառարկեցին բարեբախտաբար: Սիկառ, սիկարէթ վառեցին ու
սկսան ֆոֆ պատմել:

— Անգամ մը, սկովաիացի մը...

Ես մօտեցայ պատուհանին եւ սկսայ վարը, ոտքերուս տակ
տարածուող քաղաքին համայնապատկերը դիտեմ: Դեռ մեղմ կ'անձ-
րեւէր: Թեթեւ, գորշ ու դրեթէ թափանցիկ մշուշ մը իր քողը փռած
էր մինչեւ հեռաւոր հորիզոնները, ալ անկէ անդին յայտնի չէր, թէ
քաղաքը կը վերջանա՞ր, թէ կը շարունակուէր:

Իրաւ է, թէ աչքերս դուրսը ասարածուող համայնապատկերին
վրայ էր, բայց միտքս, թերեւս ենթադրուակցութիւնս ալ, տենդա-
ցին կ'աշխատէին մեր օրը լեցնող հարցին վրայ, որովհետեւ յանկարծ
դարձայ ու ըսի պաշտօնակիրցներուս.

— Քիչ առաջ, առանց երկար բարակ խորհելու, բոլորդ ալ,
պատանին մեղադրեալի աթոռին վրայ նստեցնելու համամիտ էիք...
Բոլորդ ալ կառք կը վարէք ու ինքզինքնիդ դրեք մեղադրեալին տեղ՝
խորհելով, որ օր մըն ալ կրնայ նման դէպք մը ձեզի պատահիլ...
Պատանին յանցաւոր դատեցիք՝ որովհետեւ հարցաքննութեան պա-
հուն չիտթ պատասխաններ տուաւ... Նփոթ պատասխաններ տուաւ,
որովհետեւ վախցած էր, ձայնն իսկ, խորունկ յուզումէն՝ քաշուած:
Կը յիշէ՞ք, դատաւորը քանի մը անգամ պատուիրեց, որ բարձր խօ-

«Ի... Բարձր խօսի, որ դուք՝ երդուեալներդ լսէք, ու արդարութիւն կատարէք: Բայց կը տեսնեմ, որ շատ ալ մտահոգ չէք արդարութիւն կիրարկելու համար... Մի մոռնաք, թէ աջ ձեռքերնիդ վերցուցիք, ե՛ւ մարդոց, ե՛ւ Աստուծոյ առջեւ երդում ըրիք...»

— Ի՞նչ ըսել կ'ուզես, — հարցուցին քանի մը հոգի միաժամ մանակ:

— Ըսել ուզածս ա՛յն է, որ կառքի վարորդը սո՛ւտ խօսեցաւ, սուտ բանե՛ր ըսաւ: Իր փաստաբանն ալ, իրեն պէս, կառչեցաւ դէպքին վայրը հասնող ոստիկանին ա՛յն յայտարարութեան, որ հոն հասնելուն, վարորդը ըսած է, թէ պատանին յանկարծ իր առջեւ ելաւ կողմնակի փողոցէն: Ոչ ոք չանդրադարձաւ այն բանին, թէ ոստիկանը նաեւ ըսաւ, որ սաֆալթին վրայ, մօտ քսան ոտք երկարութեամբ, խորունկ, նշմարելի անիւի հետքեր կային: Ըսել է վարորդը նուազագոյնը քսան ոտք հեռուէն տեսաւ տղան ու իր հեծելանիւր, ու ջանաց կեցնել իր կառքը. բայց, եւ ուշադրութիւն այս բայցին, կա՛մ օրէնքի թոյլատրածէն աւելի արագ կը վարէր ու չկրցաւ ժամանակին դադարել իր կառքին թափը, եւ կա՛մ իր անիւարդեկները լաւ չէի՛ն աշխատեր... Այս երկուքէն ո՛ր մէկն ալ ըլլայ պարագան, ան մեղադրելի է:

— Պայ կալի, մարդը իրաւունք ունի՞, այդպէս է, — ըսաւ մեր մէջ դանուող միակ սեւամորթը, — մինչեւ հիմա մենք ինչո՞ւ այդ մասին չխորհեցա՛նք...

— Ո՛չ միայն դուք, այլեւ՝ տղայի փաստաբանն ալ, — վրայ տուի ես:

— Դուն այդ մասին դուրսը, քեզմէ աւելի խելացի, բանիմաց մէկուն հետ խօսած ու խորհուրդ ստացած ես, — ըսաւ մէկը:

— Չէ՛, կ'երզնում, որ այս դասին մանրամասնութեանց մասին ու բնոյթին մասին ո՛չ մէկուն բան մը ըսած եմ, — յարեցի ես, — բայց կ'ընդունիմ, թէ սկիզբէն խկ, լաւ էի տրամադրուած դէպի այդ մանչուկը... Ես ալ զաւակ եմ մեծցուցած, թոռնե՛ր ալ ունիմ... Բնու չկրցայ մտքէս հեռացնել, թէ օր մը, Աստուած չընէ, կրնան իմի՛ններս ալ նման պարագայի մը մէջ դանուիլ: Իսկ դուք, վստահ եմ, իբրեւ կառք վարողներ, կը մտածէք ձեր անձին մասին ու ինքզինքնիդ դրած էք ամբաստանեալին տեղը:

Հազիւ խօսքս աւարտած էի, երբ դուրսէն մէկը մատնահարեց՝ ու «ներս մտէք»էն ետք, ըսաւ, թէ մեծարդոյ դատաւոր Ուայնըշթայն մեզ կ'ուզէ:

Երբ դատարահ մտանք, հոն խառնակութիւն կը տիրէր, դատարահի մը անվայել խառնակութիւն: Երկու հակառակորդ փաստաբանները, իրարու դէմ կայնած, ուրտի կը շողակրատէին: Պատաւորին ժպտը, լայն, ականջներո՛ւն կը հասնէր. լե՛հ մանուկը ձեռքը-ոտքը շարժելով, բաներ մը կ'ըսէր իր ծնողքին: Մինակ ամբաստանեալն էր, որ դեղին ու անտարբեր նստած էր իր հին տեղը. կարծես ինք բաժին չունէ՛ր այս բոլորին մէջ, իրեն չվերաբերող հարցի մը շուրջ կը դառնար այս իրարանցումը:

Քանի մը բռնէ առաւ՝ մինչեւ որ կարդը վերահաստատուեցաւ դատարահին մէջ:

— Պարոններ, — ըսաւ դատաւորը խօսքը մեղի ուղղելով, —

ուրախ եմ յայտարարելու, թէ երկու կողմերը համաձայնութեան մը եկան: Առաջին մէկ օրէն ես խնդրին այս ձեւ լուծուելուն կողմնակից էի, ու կարելիս ըրի՝ կողմերը համողելու համար: Զեր սրարտականութիւնը վերջացաւ: Կրնաք սուն երթալ: Կրնաք վստահ ըլլալ, թէ զէթ երկու տարի, ա՛լ ձեռ ծառայելու կանչող պիտի չըլլայ: Եթէ կասկածամիտ կիներ ունիք, քարտուղարը, հոս, դատարանին մէջ ըլլալնիդ ապացուցանող տոմսեր պիտի տայ ձեզի... Դալով վճարումին, եթէ բախտաւոր էք, վեց ամիսէն կը ստանաք ձեր շէքերը: Երթաք բարով:

Դուրսը, բակին մէջ, երբ բոլորս իրարու մնաք բարով ըսելով մեր կարճատեւ, քանի մը օրուայ ընթացքին մշակուած բարեկամութեան կամ ծանօթութեան վերջ կը դնէինք, պատանիին փաստաբանը մօտեցաւ ինծի:

— Դը յիշո՞ս, — ըսաւ, — երբ քեզ ընդունեցինք իբրեւ ժուրիստ, մեր վստահութեան համար շնորհակալութիւն յայտնեցիր:

— Այո՛, կը յիշեմ, — ըսի ժպտելով:

— Լաւ բան մըն էր, որ ըսիր: Ինչաւ պիտի չմոռնամ: Շատ հին չեմ ասպարէզիս մէջ, բայց ինծի վստահութիւն ներշնչեց, թէ կրնամ վստահիլ ժուրիին վրայ:

— Ուրախ եմ, — ըսի:

— Հիմա, որ ամէն բան վերջացաւ, կրնա՞ս ինծի ըսել, թէ ի՞նչ պիտի ըլլար ձեր խօսքը, ձեր վճիռը:

— Դեռ վերջնական եզրակացութեան մը չէինք եկած, — ըսի: Յետոյ դարձայ իր կողքին կայնած կէս հայ, կէս լեհ մանչուկին, ձեռքը սեղմելով բախտաւորութիւն մաղթեցի՝ եւ ուրախ սուրբով եկայ տուն:

ԱՐԱՄ ՀՍԵԿՍՉ



Ս Ա Մ Ո Ի Է Լ Պ Ե Ք Է Թ

ՍՊԱՍԵԼՈՎ. ԿՈՏՈՅԻՆ

Ա Ն Ջ Ն Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ԷՍԹՐԱԿՈՆ

ՓՈԶԶՕ

ՎԼԱՏԻՄԻՐ

ԼԱՔԻ

ՏՂԱՅ ՄԸ

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ա Ր Ա Ր

Կը մտնեն Փոզզո եւ Լաֆի: Փոզզոն կը բշտէ Լաֆին՝ անոր վիզը անցուած պարանով մը, որ բաւական երկար է, այնպէս՝ որ Լաֆի բեմին կեղքոնը կը հասնի, Փոզզոյի մուտքէն առաջ: Լաֆի կը կրէ ծանր պայուսակ մը, ծալուող աթոռ մը, ուտե-

լիքներու կողով մը եւ վերարկու մը: Փոզզո՝ մտրակ մը:

ՓՈԶԶՕ (հուլիսէն). — *Աւելի՛ արագ:*

Մտրակի շաշիւն մը: Փոզզո կ'երեւի: Անոնք կը կտրեն բեմը: Լաֆի կ'անցնի վլատիմիրի ու

էսքրակոնի առջեւէն եւ դուրս կ'ելլէ: Փոզգո, տեսնելով վերջին երկուքը՝ կանգ կ'առնէ: Պարանը կը պրկուի: Փոզգո վայրագօրէն ետ կը քաշէ գայն): Ե'տ (Անկոււմի ալմուկ: Լաֆի կ'իյնայ իր ամբողջ քեռով: Վլատիմիր եւ էսքրակոն կը նային անոր, օգնելու տրամադրութեան եւ իրենց չվերաբերող գործի մը խառնուելու վախիմ միջեւ տարուբերելով: Վլատիմիր քայլ մը կ'առնէ դէպի Լաֆին, էսքրակոն քեւէն քաշելով՝ կ'արգիլէ անոր:

- ՎԼԱՏԻՄԻՐ.— Ձեզ՛ զիս:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Տե՛ղդ կեցիր:
- ՓՈԶԶՕ.— Ուշադրութի՛ւն: Չար է (էսքրակոն եւ Վլատիմիր կը նային Փոզգոյին) անձանօթներու հանդէպ:
- ԷՍԹՐԱԿՈՆ (շշուհըով).— Ի՞նչն է:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Ո՛ւ:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Անմիտ մի՛ ըլլար...
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Կոտո՞ն:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Այո:
- ՓՈԶԶՕ.— Ներկայացնեմ ինքզինքս. Փոզգո:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ոչ:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Կոտօ ըսաւ:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց ո՛չ:
- ԷՍԹՐԱԿՈՆ (Փոզգոյին).— Դուք Պարոն Կոտոն չէ՞ք, Պարոն:
- ՓՈԶԶՕ (սարսափազդու ձայնով).— Ես Փոզգոն եմ: (Լռութիւն): Այս անունը բան չ'ըսե՞ր ձեզի: (Լռութիւն): Կը հարցնեմ. այս անունը բան չ'ըսե՞ր ձեզի:

Վլատիմիր եւ էսքրակոն իրարու կը նային հարցական ակնարկներով:

- ԷՍԹՐԱԿՈՆ (մտտեղ ձեւացնելով).— Պոզգո... Պոզգո...
- ՎԼԱՏԻՄԻՐ (նայն ձեւով).— Փոզգո...
- ՓՈԶԶՕ.— Փփփփփփփ:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Ա՛հ, Փոզգո... տե՛ս...

Փոզգո...

- ՎԼԱՏԻՄԻՐ.— Փոզգո՞ թէ Պոզգո:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Փոզգո... ո՛չ, չեմ կարծեր:
- ՎԼԱՏԻՄԻՐ (հաշտարար).— Ճանչցած եմ Կոզգո անունով ընսանիք մը: Մայրը նուազածու էր:

Փոզգո կ'առաջանայ, սլառնալով:

- ԷՍԹՐԱԿՈՆ (աճապարանքով).— Մենք այս կողմերէն չենք, Պարոն:
- ՓՈԶԶՕ (կանգ առնելով).— Այսուհանդերձ, մարդկային էակներ էք (Կը դնէ ակնոցները) ըսա երեւոյթին: (Կը հանէ ակնոցները): Ի՞մ տեսակէս (Մեծ խնդուք մը կը պայթեցրնէ): Փոզգոյի տեսակէն, Աստուծոյ պատկերով:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Այսինքն...
- ՓՈԶԶՕ (կտրուկ).— Ո՞վ է Կոտոն:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Կոտոն:
- ՓՈԶԶՕ.— Կոտոյին հե՞տ շփոթեցիք զիս:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Օ՛հ, ո՛չ, Պարոն, ո՛չ խի վայրկեան մը, Պարոն:
- ՓՈԶԶՕ.— Ո՞վ է ան:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Է՛հ ըսա, ձեռով մը ծանօթ է:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Բայց ոչ, տե՛ս, հազիւ կը ճանչնանք զինք:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Ի հարկէ... Լաւ չենք ճանչնար զինք... բայց բոլոր պարպաներուն...
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Եթէ նոյնիսկ անձնապէս տեսնէի՛ պիտի չճանչնայի զինք:
- ՓՈԶԶՕ.— Ձիս անոր հետ շփոթեցիք:
- ԷՍԹՐԱԿՈՆ.— Այսինքն զիտես... մթութիւնը... յոգնութիւնը... տկարութիւնը... սպասումը... կը խոստովանիմ... կարծեցի... վայրկեան մը...
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Մտիկ մի՛ ընէք զինք, Պարոն, մտիկ մի՛ ընէք:
- ՓՈԶԶՕ.— Սպասո՞ւմը: Ուրեմն կը սպասէի՞ք իրեն:
- ՎԼԱՏԻՄԻՐ.— Այսինքն...



ԼԱՔԻ ԵՒ ՓՈԶԶՈ

ՓՈԶԶՈ. — Հո՞ս, ի՞մ հողերուս վրայ :
ՎԼԱՏԻՄԻՐ. — Գէշ մաքուլ չէինք մօտե-
 նար :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Բարի էք մեր նպատակը :
ՓՈԶԶՈ. — Ճամբան ամէնուն կը պատ-
 կանի :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Մենք ալ այդպէս ըսինք :
ՓՈԶԶՈ. — Աժօթ է, բայց այդպէս է :
ԷՍԹՐԱԿՈՆ. — Հոգ ոչինչ կրնանք ըսել :

ՓՈԶԶՈ (լայն շարժուածեով մը) : Այդ
 մասին այլեւս չխօսինք : (Կը
 ցնցէ պարանը) : Ոտքի՛ : (Լռու-
 քիւն) : Ամէն անգամ, որ իշնայ՝
 կը քնանայ : (Կը ցնցէ պարանը) :
 Ոտքի՛, կեղտոտ : (Ազմուկ մը՝

Լաքի ոտքի կ'ելլէ եւ կը հաւա-
 քէ իր առարկաները : Փոզզօ կը
 ցնցէ պարանը) : Ե՛տ : (Լաքի բեմ
 կը մտնէ՝ ետ-ետ գալով) : Կա՛նդ
 առ : (Լաքի կանգ կ'առնէ) : Դար-
 ձի՛ր : (Լաքի կը դառնայ : Մեղ-
 մօրէն՝ Վլատիմիրին եւ Էսթրա-
 կոնին) : Բարեկամներ, ուրախ
 եմ ձեզի հանդիպելու համար :
 (Անոնց շփոթահար արտայայ-
 տութեան ի տես) : Այո՛, ան-
 կեղծօրէն ուրախ : (Կը ցնցէ պա-
 րանը) : Աւելի՛ մօտ : (Լաքի
 կը յառաջանայ) : Կա՛նդ առ :
 (Լաքի կանգ կ'առնէ : Վլատիմի-

րին եւ Էսքրակոնին) : *Ճամբան երկար կը թուի, երբ մէկը առանձին քայլ...* (Կը նայի իր ժամացոյցին...) *Երբ...* (Կը հաշուէ) ... *վեց ժամ, այս, ճիշդ ա՛յդ, ամբողջ վեց ժամ, առանց հանդիպելու ազրոջ հողի մը :* (Լաֆիին) : *Վերարկո՛ւս :* (Լաֆի կը բանայ պայուսակը, կ'առաջանայ, կու տայ վերարկուն, կ'ընկրկի, ետ կ'առնէ պայուսակը) : *Վերջո՛ւր մարակը :* (Փոզո անոր կ'երկարէ մտրակը : Լաֆի կ'առաջանայ եւ, երկու ձեռքերը լեցուած ըլլալով՝ կը ծռի եւ ակոսներով կը վերցնէ մտրակը, ապա կ'ընկրկի : Փոզո կը սկսի հագնիլ վերարկուն, կանգ կ'առնէ) : *Վերարկո՛ւս :* (Լաֆի վար կը դնէ ամէն բան, կ'առաջանայ, կ'օգնէ Փոզոյին՝ վերարկուն հագնելու : կ'ընկրկի, նորէն կ'առնէ առարկաները) : *Օդը զո՛վ է :* (Կը կոնկէ վերարկուն, կը ծռի, կը գննէ ինքզինք, կը շտկուի) : *Մտրա՛կը :* (Լաֆի կ'առաջանայ, կը ծռի, Փոզո անոր բերնէն կը խլէ մտրակը, Լաֆի կը վերադառնայ նախկին տեղը) : *Կը տեսնէք, բարեկամներս, ես չեմ կրնար երկար առանց դիմանալ առանց իմ նմաններուս ընկերակցութեան :* (Կը նայի իր երկու նմաններուն) : *Նոյնիսկ եթէ այդ նմանութիւնը անկատար է :* (Լաֆիին) : *Աթո՛սը :* (Լաֆի վար կը դնէ պայուսակը եւ կողովը, կ'առաջանայ, կը բանայ աքոռը, գետին կը դնէ գայն, կը վերադառնայ տեղը. կրկին ձեռք կ'առնէ պայուսակն ու կողովը : Փոզո կը նայի աքոռին) : *Աւելի՛ մօտ :* (Լաֆի վար կը դնէ պայուսակն ու կողովը, կ'առաջանայ, կը բանայ աքոռը, ետ տեղը կ'երթայ, կրկին ձեռք կ'առնէ պայուսակն ու կողովը : Փոզո կը

նստի, Լաֆիի կուրծքին կը դնէ մտրակին ծայրը եւ կը հրէ) : *Ե՛տ :* (Լաֆի կ'ընկրկի) : *Աւելի՛ :* (Լաֆի դարձեալ կ'ընկրկի) : *Կեցի՛ր :* (Լաֆի կանգ կ'առնէ : Վլատիմիրին եւ Էսքրակոնին) : *Ահա թէ ինչու, ձեր արտօնութեամբ, վայրկեան մը կ'ուզեմ ձեր մօտ մնալ, նախ քան աւելի առաջանալու :* (Լաֆիին) : *Կողմ՛վը :* (Լաֆի կ'առաջանայ, կու տայ կողովը, կը վերադառնայ իր տեղը) : *Թարմ օդը ախորժակ կը բանայ :* (Կը բանայ կողովը, անկէ կը հանէ կտոր մը հաւու միս, կտոր մը հաց եւ շիշ մը գինի : Լաֆիին) : *Կողմ՛վը :* (Լաֆի կ'առաջանայ, կ'առնէ կողովը, կը վերադառնայ իր տեղը) : *Աւելի՛ անդին :* (Լաֆի կ'ընկրկի) : *Հո՛ն :* (Լաֆի կանգ կ'առնէ) : *Կը հօտի՛ր :* (Կ'ըմպէ գինին ուղղակի շիշէն) : *Ուրախ օրեր :* (Շիշը վար կը դնէ եւ կը սկսի ուտել) :
 Լուսին : Էսքրակոն եւ Վլատիմիր քիչ առ քիչ համարձակութիւն ստանալով կը դառնան Լաֆիին շուրջ, գայն կը գնեն կողմերէն : Փոզո կը կրծէ իր հաւու միսը մեծ ախորժակով, եւ կը նետէ ոսկորները՝ գանոնք ծծելէ ետք : Լաֆի դանդաղօրէն վար կը հակի, մինչեւ որ պայուսակը գետին կը դպնայ, յանկարծօրէն կը շտկուի, կը սկսի նորէն վար հակիլ, ոտքի վրայ մնացած մարդու մը կշռոյթով :
ԷՍԹՐՍԿՈՆ. — Ի՞նչ ունի :
ՎԼԱՏԻՄԻՐ. — Յողնած կը թուի :
ԷՍԹՐՍԿՈՆ. — Ինչո՞ւ գետին չի դներ առարկաները :
ՎԼԱՏԻՄԻՐ. — Ես դիտե՞մ : (Աւելի կը մօտեմայ անոր) : Ուշադրութի՛ւն :
ԷՍԹՐՍԿՈՆ. — Ինչպէ՞ս կ'ըլլար, եթէ հետը խօսէինք :
ՎԼԱՏԻՄԻՐ. — Նայի՛ր :
ԷՍԹՐՍԿՈՆ. — Ի՞նչ բանի :
ՎԼԱՏԻՄԻՐ (մատնանշելով) . — Վիզին :

ԷՍԹՐԱԿՈՆ (նայելով վիզին) .— Ոչինչ

կը տեսնեմ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Հոս :

Էսքրակոն վլատիմիրին տեղը կ'առնէ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Սրգարեւ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Սկրաուք մը :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Պարանն է :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Քսուեղէն է .

ԷՍԹՐԱԿՈՆ .— Անկասկած :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Հանգոյցէն է :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ճակատագրական է :

Կ'աւարտեն իրենց բնութիւնը, կանգ կ'առնեն դէմքին վրայ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Գէչ չէ :

ԷՍԹՐԱԿՈՆ (վեր առնելով ուտերը, ծամածոնելով դէմքը) .— Կը կարծե՞ս :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Քիչ մը խղարարոյ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Լորձուքոտ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Ստիպուած է :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Լորձուքոտ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Թերեւս սպուշ մըն է :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Յիմար մը :

Վ.Ա.ՏԻՄԻՐ (գլուխը մտնեցնելով) .—

Վիզին ուս ունի :

ԷՍԹՐԱԿՈՆ (հոյն շարժումը) .— Որոշ չէ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Կը հեւայ :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Բնական է :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Եւ իր աչքերը :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ի՞նչ ունին :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Դուրս ցցուած են :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Ինձի համար պայթելու վրայ են :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Որոշ չէ : (Լաւթիւն) : Հարցում մը ըրէ իրեն :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Լաւ կ'ըլլամ՞ :

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Ի՞նչ կը վնասենք :

ԷՍԹՐԱԿՈՆ (երկչոտ) .— Պարո՞ն . . .

Վ.Ա.ՏԻՄԻՐ .— Ա.եղի՛ բարձր :

ԷՍԹՐԱԿՈՆ (աւելի բարձր) .— Պարո՞ն . . .

ՓՈԶԶՓ .— Հանգիստ ձգեցէք զինք : (Անոնք կը դառնան Փոզոյի կողմը, որ աւարտած ըլլալով ուտե-

լու արարողութիւնը, կը սրբէ բերանը ձեռքին երեսով) : Զէ՞ք տեսներ, որ կ'ուզէ հանգիստ ընել : (Կը հանէ ծխամորեք եւ կը սկսի լեցնել գայն : Էսքրակոն կը նշմարէ հաւուն ոսկորները գետնին վրայ, ակնարկը կը գամէ անոնց անյագաբար : Փոզոն կը հանէ լուցկի մը եւ կը սկսի վառել իր ծխամորեք) : Կողո՛վը : (Լաքին չի շարժիր, Փոզո ջղաշին շարժումով մը կը նետէ լուցկին եւ կը ցնցէ պարանը) : Կողո՛վը : (Լաքի գրեթէ գետնին կ'իյնայ, կը վերագտնէ ինքզինք, կ'առաջանայ, շիշը կը դնէ կողովին մէջ, կը վերադառնայ իր տեղը : Էսքրակոն սեւեռաբիր կը նայի ոսկորներուն, Փոզո կը հանէ երկրորդ լուցկի մը եւ կը վառէ ծխամորեք) : Ի՞նչ կ'ակնկալէք, ատիկա իր պարտականութիւնը չէ : (Ան կը ներծծէ ծուխը եւ կ'երկարէ սրունքները) : Ա՛հ, այդպէս աւելի լաւ է :

ԷՍԹՐԱԿՈՆ (երկչոտ) .— Պարոն . . .

ՓՈԶԶՓ .— Ի՞նչ է, սիրելիս :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Հը . . . չէ՞ք ուտեր . . . Հը . . . այլեւս պէտք չունի՞ք . . . ոսկորներուն . . . Պարոն . . .

Վ.Ա.ՏԻՄԻՐ (գայթակղած) .— Զէ՛ր կրնար սպասել :

ՓՈԶԶՓ .— Բայց ո՛չ, բայց ո՛չ, շատ բընական է : Ես պէտք ունիմ ոսկորներուն : (Զանոնք կը խառնչուին, մտրակին ծայրով) : Ո՛չ, անձնապէս պէտք չունիմ անոնց այլեւս : (Էսքրակոն քայլ մը կ'առնէ դէպի ոսկորները) : Բայց . . . (Էսքրակոն կանգ կ'առնէ) : Բայց սկզբունքով ոսկորները բեռնակրին իրաւունքն է : Հետեւաբար պէտք է իրեն հարցնել : (Էսքրակոն կը դառնայ Լաքիին, կը տատամսի) : Բայց հարցուցէք իրեն, մի՛ վախնաք, կը պատասխանէ ձեզի :

Էսքրակոն կ'ուղղուի դէպի Լաքին, կանգ կ'առնէ անոր առջեւ :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Պարոն... ներողութիւն,
Պարոն...

Լաֆի չի հակադդեր: Փոզգո կը
չաչեցնէ մարակը: Լաֆի կը
բարձրացնէ գլուխը:

ՓՈԶԶՕ.— Քեզի հեա կը խօսուի, խո՛ղ,
պատասխանէ: (Էսքրակոնին): Դար-
ձեալ փորձեցէք:

ՓՈԶԶՕ.— Ներողութիւն, Պարո՛ն, ու-
կորնեքուն պէտք ունի՞ք:

Լաֆի կը նայի էսքրակոնին եր-
կարօրէն:

ՓՈԶԶՕ (վերացած).— Պարո՛ն: (Լաֆի
կը խոնարհէ գլուխը): Պատասխա-
նէ՛. Կուղե՞ս գաննք թէ ոչ: (Լաֆի
լուսքիւն կը պահէ: Էսքրակոնին):
Քուկէ են: (Էսքրակոն կը նետուի
ուսկորներուն վրայ, կը հաւաքէ գա-
նոնք եւ կը սկսի կրծել): Սախայն
տարօրինակ է: Առաջին անգամն է,
որ սակորներ կը մերժէ: (Անձկու-
քեամբ կը նայի Լաֆիին): Յուսամ
հիւանդանալով բեռ մը պիտի չըլլայ
ինծի: (Շունն մը կը քաշէ ծխամոր-
նէն):

ՎԼԱՏԻՄԻՐ (բարկանայք).— Ամօ՛թ է:
Լուսքիւն: Էսքրակոն, ապուշ-
ցած, կը դադրի կրծելէ, յաջոր-
դաբար կը նայի Վլատիմիրին եւ
Փոզգոյին: Փոզգո չափազանց
հանդարտ: Վլատիմիր աւելի եւ
աւելի անձկալի:

ՓՈԶԶՕ (Վլատիմիրին).— Մասնաւոր
բանի՞ մը կ'ակնարկես:

ՎԼԱՏԻՄԻՐ (հաստատ եւ կմկմալով).—
Մարդու մը հեա վարուել (չարժում
մը դէպի Լաֆի) ա՛յս ձեռով... ես
ասիկա կը դռնեմ... մարդ էակ մը
... ո՛չ... ամօթ է:

ԷՍԹՐԱԿՈՆ (եա մնալ չուզելով).— Գոյ-
թակողութիւն է: (Կը վերսկսի կըր-
ծել):

ՓՈԶԶՕ.— Դաժան ես: (Վլատիմիրին):
Քանի՞ տարեկան ես, եթէ անպատեհ
չէ հարցնել: (Լուսքիւն): Վաթ-
սո՛ւն... Եօթանասո՛ւն: (Էսքրակո-
նին): Ի՞նչ տարիք կու տաս իրեն:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Իրեն հարցուր:

ՓՈԶԶՕ.— Անբարեկերթ եմ: (Ծխամոր-
նը կը պարպէ՝ գարնելով գայն մըր-
ակին. ոտքի կ'ելլէ): Պէտք է ճամ-
բայ ելլիմ: Շնորհակալ եմ, որ ինծի
ընկերացաք: (Կը մտածէ): Կամ ծը-
խամորձ մը եւս ծխեմ ձեզի հեա:
Ի՞նչ կ'ըսէք: (Անոնք ոչինչ կ'ըսեն):
Օ՛հ, ես պարզօրէն պղտիկ ծխող մըն
եմ, շա՛տ պղտիկ ծխող մը, երբեք
սովորութիւն չունիմ իրարու ետեւէ
երկու ծխամորձ ծխելու: (Ձեռքը կը
տանի սլոտի): Ասիկա սրտի տրո-
փիւն կը պատճառէ ինծի: (Լուս-
քիւն): Նիքթիինն է, դար մարդ կը
ներծօէ, հակառակ իր նախդրուչու-
թիւններուն: (Կը հառաչէ): Գիտէք
ինչպէս: (Լուսքիւն): Բայց դուք
թերեւս ծխող չէք: Այո՞: Ո՞չ: Յա-
մենաբոլէս, ասիկա մանրամաս-
նութիւն մըն է: (Լուսքիւն): Բայց
հիմա ինչպէ՞ս կրկին պիտի նստիմ
բնականօրէն, հիմա, որ սուքի եմ:
Առանց — ինչպէս ըսել — տեղի տա-
լու: (Վլատիմիրին): Ներողութի՞ւն:
Բա՞ն մը ըսիք: (Լուսքիւն): Թե-
րեւս ոչինչ ըսիք: (Լուսքիւն): Կա-
րեւոր չէ: Նայինք... (Կը մտածէ):

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ա՛հ: Ասանկ աւելի լու
է: (Կը նետ ոսկորները):

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մեկնի՛նք:

ԷՍԹՐԱԿՈՆ.— Այոքան չո՛ւտ:

ՓՈԶԶՕ.— Վայրկեան մը: (Կը ցնցէ պա-
րանը): Աթո՛րը: (Կը մատնանշէ
մտքակով: Լաֆի կը տեղափոխէ ա-
քոռը): Աւելի՛: Հո՛ն: (Կը նստի:
Լաֆի կը վերադառնայ տեղը, կ'առ-
նէ պայուսակը եւ կողովը): Ահաա-
սիկ վերահաստատուեցայ: (Կը սկսի
լեցնել իր ծխամորնը):

ՎԼԱՏԻՄԻՐ.— Մեկնի՛նք :

ՓՈԶԶՕ.— Յուսամ ես չեմ, որ ձեզ կը վտարեմ : Քիչ մը եւս սպասեցէք, չէք զըջար :

ԷՍԹՐԱԿՈՆ (ողորմելի կերպարանքով) .—

Ժամանակ ունի՛նք :

ՓՈԶԶՕ (վառած բլլալով ծխամորեք) .—

Երկրորդը միշտ նուազ համով է Վր հանէ ծխամորեք բերնէն, աչքէ կ'անցքնէ զայն), քան առաջինը, ըսել կ'ուզեմ (կը դնէ ծխամորեք բերանը), ամէն պարագայի՛ համով է :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ես կ'երթամ :

ՓՈԶԶՕ.— Ան այլեւս չի կրնար տա-

նիլ իմ ներկայութիւնս : Ես, անկասկած, քիչ մարդկային եմ, բայց ատիկա կրնա՞յ պատճառ մը ըլլալ իրեն : (Վլատիմիրին) : Անխոհեմութիւն մը դործելէ առաջ՝ լաւ մտածեցէք : Ենթադրենք, որ հիմա կ'երթաք, երբ ասկաւին ցերեկ է, որովհետեւ հակառակ ամէն բանի՛ ցերեկ է ասկաւին : (Անոնք երեքով կը նային երկինքին) : Լա՛ւ : Այդ պարագային՝ ի՛նչ կ'ըլլայ : (Կը հանէ ծխամորեք բերնէն, կը նայի անոր) : Ես մտած եմ : (Նորէն կը վառէ ծխամորեք) : Այդ պարագային... Այդ պարագային... Ի՞նչ կը պատահի այդ պարագային ձեր ժամադրութեան՝ այդ... Կոտէի... Կոտայի... Կոտէի... Հեա : (Լոուրին) : Ամէն պարագայի՛ պիտէք ուլ ըսել կ'ուզեմ, ա՛ն՝ որ ձեր աղապան ունի իր ձեռքերուն մէջ : (Լոուրին) : Աւնուազն ձեր անմիջական ապագան :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Իրաւունք ունի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ո՞վ ըսաւ ձեզի :

ՓՈԶԶՕ.— Ահաւաստիկ դարձեալ ինծի կ'ուզէ խօսքը. եթէ այսպէս շարունակուի՛ շուտով մօտիկ բարեկամներ պիտի ըլլանք :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչո՞ւ վար չի դներ իր աւարկաները :

ՓՈԶԶՕ.— Ես եւս ուրախ պիտի ըլլայի անոր հանդիպելով : Ո՛րքան աւելի շատ մարդոց հանդիպիմ՝ ա՛յնքան

աւելի երջանիկ կ'ըլլամ : Ամէնէն չնչին արարածի՛ն հեա անդամ մարդ կը զարգանայ, կը հարստանայ, աւելի կ'ըմբոշինէ իր երջանկութիւնը : Դուք եւս (Ան ուշադիր կերպով կը նայի Ե՛ւ մէկուն, Ե՛ւ միւսին, որպէսզի անոնք լաւ գիտնան, թէ իրենց կը նայի), դուք եւս, ո՞վ զիտէ, թերեւս բան մը բերած էք ինծի :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչո՞ւ վար չի դներ իր աւարկաները :

ՓՈԶԶՕ.— Ատիկա պիտի զարմացնէր զիս :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հարցո՞ւմ մը կ'ուզէին քեզի :

ՓՈԶԶՕ (հրեմուալիք) .— Հարցո՞ւմ մը : Ո՞վ : Ո՞րը : (Լոուրին) : Քիչ առաջ ինծի կ'ըսէք, Պարո՞ն, դողալով : Հիմա հարցում կ'ուզէք : Ասոր վերջը զէչ պիտի ըլլայ :

ՎԼԱՏԻՄԻՐ (Էսթրակոնին) .— Կը կարծեմ, որ մտիկ կ'ընէ քեզ :

ԷՍԹՐԱԿՈՆ (դառնալով Լաֆի շուրջը) .— Ի՞նչ :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կրնաս հիմա հարցնել իրեն. Աղբարբուած է :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Հարցնել իրեն ի՞նչ :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Բայց իրեն հարցուր, աե՛ս...

ՓՈԶԶՕ (որ հետեւած էր այս փոխապացուցիւններուն անկալից ուշադրութեամբ, վախճալով, որ հարցումը կը կորսուի) .— Կը հարցնէք ինծի ինչո՞ւ վար չի դներ իր աւարկաները, ինչպէս կ'ըսէք :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ճի՛շդ այդ :

ՓՈԶԶՕ (Էսթրակոնին) .— Դուք համաձայն էք :

ԷՍԹՐԱԿՈՆ (շարունակելով դառնալ Լաֆիին շուրջը) .— Փոկի մը պէս կը հեւայ :

ՓՈԶԶՕ.— Պիտի պատասխանեմ ձեզի : (Էսթրակոնին) : Բայց հանդարտեցէք, կ'ողաշեմ, կը ջղախոսեցէք զիս :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Հո՞ս եկուր :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ի՞նչ կայ :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Պիտի խօսի :

Արձանացած, մէկը միւսին դիմաց՝ կը սպասեն :

ՓՈԶԶՁ.— Սքանչելի : Ամէն ոք պատասխան է : Ամէն ոք կը նայի՞ ինծի : (Կը նայի Լաֆիին, կը ցնցէ պարանր : Լաֆի կը բարձրացնէ գլուխը) : Ինծի՛ նայէ, խո՛ղ : (Լաֆի իրեն կը նայի) : Սքանչելի : (Ծխամորնը կը դնէ գրպանը, դուրս կը հանէ անուշահոտի պտիկ սրուակ մը եւ կը սրսկէ կոկորդին : Սրուակը կրկին կը դնէ գրպանը, կը մաքրէ կոկորդը, կը քֆնէ, դարձեալ կը հանէ սրուակը, դարձեալ կը սրսկէ կոկորդին, դարձեալ կը դնէ գրպանը) : Ես պատասխան եմ : Ամէն մարդ զիս մտիկ կ'ընէ : (Կը նայի Լաֆիին, կը ցնցէ պարանր) : Օ՛ն : (Լաֆի կ'առաջանայ) : Հո՛ն : (Լաֆի կանգ կ'առնէ) : Ամէն մարդ պատրաստ է : (Ան կարգով կը նայի երեքին ալ, ետեւէն Լաֆի կը ցնցէ պարանր) : Ուրեմն ի՞նչ : (Լաֆի կը բարձրացնէ գլխակը) : Չե՞ս սիրեր խօսիլ պարապին մէջ : Լաւ : Նայինք : (Կը մտածէ) :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ես կ'երթամ :

ՓՈԶԶՁ.— Ճիշդ ի՞նչ էր ձեր հարցումը :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ինչո՞ւ ան...

ՓՈԶԶՁ (բարկութեամբ).— Մի՛ ընդմիջեր զիս : (Լուռօրէն : Աւելի պաղարիւն) : Եթէ ամէնքս միաժամանակ խօսինք, ոչ մէկ էլքի կը յանդինք : (Լուռօրէն) : Ի՞նչ կ'ըսէի : (Լուռօրէն : Աւելի բարձր) : Ի՞նչ կ'ըսէի :

Վլատիմիր կը կապկէ մէկը, որ ծանր բեռ մը կը կրէ : Փոզգո անոր կը նայի՝ առանց բան մը հասկնալու :

ԷՍԹՐԱԿՈՆ (հիգով).— Բեռնե՛րը : (Կը մատնանշէ Լաֆիին) : Ինչո՞ւ : Միշտ կրէի : (Վար կը հակի, հետեւելով) : Երբեք վար չգնէի : (Կը բանայ ձեռ-

քերը, կը շտկուի հանդարտած) : Ինչո՞ւ :

ՓՈԶԶՁ.— Հասկցայ : Ինչո՞ւ աւելի աստղ չըսիր ասիկա ինծի : Ինչո՞ւ աւելի հանդարտ չի պահեր ինքզինք : Փորձենք հարցը զիտել պայծառ անքով : Ասոր իրաւունքը չունի : Ունի՛ : Վստահարար : Ուրեմն ի՞նչ չ'ուզեր : Ահաւաստիկ պատճառաւորութիւն մը քեզի : Եւ ինչո՞ւ պիտի չուզէ : (Լուռօրէն) : Պարոնե՛ր, պատճառը պիտի ըսեմ ձեզի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Ուշադրութի՛ւն :

ՓՈԶԶՁ.— Կ'ուզէ ասպաւորութիւն ձեզի վրաս, որպէսզի պահեմ զինք :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ինչպէ՞ս :

ՓՈԶԶՁ.— Թերեւս լաւ չկրցայ բացատրել ինքզինքս : Կ'ուզէ գութա շարժել, որպէսզի հրաժարիմ իրմէ բաժնուելու մտքէս : Ո՛չ : Ճիշդը այդ է :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզես ձերբազատուի՞լ իրմէ :

ՓՈԶԶՁ.— Կ'ուզէ սեննալ զիս, բայց պիտի չյաջողի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզէք ձերբազատուի՞լ իրմէ :

ՓՈԶԶՁ.— Կ'երեւակայէ, որ երբ տեսնեմ, թէ լաւ բեռնակիր է՝ պիտի փորձուիմ զինք պահել այդ կարսպութեան համար :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ալ պէտք չունէի՞ք իրեն :

ՓՈԶԶՁ.— Իրականութեան մէջ խոզի մը պէս կը շալկէ : Ատիկա իր զործը չէ :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզէք ձերբազատուի՞լ իրմէ :

ՓՈԶԶՁ.— Կ'երեւակայէ, որ զինք անխոնջ տեսնելով՝ ես պիտի առնեմ որոշումս : Այսպէս է իր թշուառ հաշիւը : Կարծես թէ ես սարուկներու պէտք ունենայի : (Երեքը միասին կը նային Լաֆիին) : Աթլա՛ս, որդի՛ Արամազդի : (Լուռօրէն) : Ահաւաստիկ : Կարծեմ պատասխանեցի ձեր հարցումին : Ուրիշ հարցում ունի՞ք : (Բերնին անուշահոտ կը սրսկէ) :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզէք ձերբազատուի՞ր
իբժէ :

ՓՈԶԶՕ.— Նկատի տուէ՛ք, որ կրնայ այն-
պէս պատահիլ, թէ ես կրնայի իր
տեղը ըլլալ, եւ ինք՝ իմ, եթէ գիտ-
ւածը այլ կերպ անօրինած չըլլար :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզէք ձերբազատուի՞ր
իբժէ :

ՓՈԶԶՕ.— Ներսիսի թի՞ւն :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Կ'ուզէք ձերբազատուի՞ր
իբժէ :

ՓՈԶԶՕ.— Արդարեւ : Բայց մտնելու
փոխարէն՝ ինչպէս կրնայի ընել, ը-
սեւ կ'ուզեմ՝ փոխանակ յետոյքին
կից մը տալով պարզապէս դուրս
զնեւու զինք, իմ բարութեանս չը-
նորհիւ պիտի տանիմ Ս. Փրկիչի շու-
կան, որ կը յուսամ լաւ գինով ծա-
խել զինք : Իրականութեան մէջ, կա-
րելի չէ նման էակներ վտարել : Լա-
ւազոյնը պիտի ըլլար սպաննել գա-
նոնք :

Լաքի կու լայ :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ան կու լայ :

ՓՈԶԶՕ.— Ծեր շաները աւելի շատ
պատկառանք կ'ազգեն : (Կ'երկարէ
իր քաշկիմակը Էսթրակոնին) : Հան-
դարտեցուր զինք, քանի որ կը խրչ-
ճաս իրեն : (Էսթրակոն կը վարանի) :
Ան : (Էսթրակոն կ'առնէ քաշկիմա-
կը) : Սրբէ՛ արցունքները : Այգպէս
նուազ լքուած պիտի դառնայ ինքզինք :

Էսթրակոն միշտ կը վարանի :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Տուր, ես կ'ընեմ :

Էսթրակոն չ'ուզեր տալ քաշկի-
մակը : Մանկական շարժումնե-
ւեր :

ՓՈԶԶՕ.— Աճապարէ՛ : Հիմա՛ կը դադ-
րի լայէ : (Էսթրակոն կը մտնեայ
Լաքիին եւ կը պատրաստուի սրբել

անոր արցունքները : Լաքի կու տայ
վայրագ կից մը անոր սրունքին : Էս-
թրակոն կը նետէ քաշկիմակը, ետ
կ'երթայ, բեմին վրայ կը դառնայ
կազմի կապ, ունայով ցաւէն) : Թաշ-
կինա՛ կը : (Լաքի վար կը դնէ պա-
յուսակն ու կողովը, կը վերցնէ քաշ-
կիմակը, կ'առաջանայ, կու տայ գայն
Փոզզոյին, կը վերադառնայ իր տե-
ղը, կը վերցնէ պայուսակն ու կողո-
վը) :

ԷՍԹՐԱԿՈՆ.— Ազատ՛ուր : Կո՛ւլը : (Վեր
կ'առնէ տարատը) : Հաշմանդամ դար-
ձուց զիս :

ՓՈԶԶՕ.— Ըսի ձեզի, թէ օտարները չի
սիրեր :

ՎԼԱՏԻՄԻՐ (Էսթրակոնին).— Տոյց
տար : (Էսթրակոն ցայց կու տայ սը-
րունքը Փոզզոյին՝ բարկութեամբ) :
Կ'ուրիներ :

ՓՈԶԶՕ.— Լաւ նշան է :

ԷՍԹՐԱԿՈՆ (վիրաւոր սրունքը վեր ա-
ռած).— Այլեւս պիտի չկարենամ
քալել :

ՎԼԱՏԻՄԻՐ (քննչութեամբ).— Քեզ կը
չալիեմ : (Լռութիւն) : Եթէ պէտք ըլ-
լայ :

ՓՈԶԶՕ.— Այլեւս չի լար : (Էսթրակո-
նին) : Ձեռով մը փոխարինած ես
զինք : (Երազայնօրէն) : Աշխարհի
արցունքները անփոփոխ են : Երբ մէ-
կը սկսի լալ, այլ տեղ ուրիշ մը կը
դադրի լայէ : Նոյնն է ծիծաղի պա-
րագան : (Կը խնդայ) : Մեր ժամա-
նակաշրջանին մասին գէշ չխօսինք
ուրեմն, անիկա աւելի դժբախտ չէ,
քան նախորդները : (Լռութիւն) : Լաւ
բանե՛ր ալ չըսենք այդ մասին : (Լը-
ռութիւն) : Բնա՛ւ չխօսինք : (Լռու-
թիւն) : Ճիշդ է, որ բնակչութիւնը
աճած է :

ՎԼԱՏԻՄԻՐ.— Փորձէ քալել :

Էսթրակոն կադալէն քանի մը
քայլ կ'առնէ, կը կանգնի Լաքիի
գիմաց եւ կը քֆնէ վրան, ապա

կը նստի հոն, ուր նստած էր վա-
րագոյրին բարձրացած ատեն:

ՓՈԶԶՊ — Կրնա՞ք զխոնարհ, թէ ով սոր-
վեցուցած է ինձի այս զեզոյցիկ բա-
ները: (Լոուրիւն: Մատնանշելով
լափին): Ա՛հ:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր (նայելով երկինք) — Գիշե-
րը երբեք պիտի չզա՞ր:

ՓՈԶԶՊ — Իսոյց իրեն համար իմ բոլոր
մտածումներս ու բոլոր զգացումներս
ստիպարական բաներ են: Գիտէի, որ
զեզոյցիկս ինձ, չնորհ ու հիմնական
ճշմարտութիւն ինձմէ հետո բաներ
են: Հեռեւորար բնութ մը առի:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր (սքափելով երկինքը դիտե-
լէն) — Քննե՞ք մը:

ՓՈԶԶՊ — Նուստով փաթտուն սարի պիտի
ընէ, որ կը շարունակուի ասիկա...
(Մտովի կը հաշուէ)... այո՛, չու-
ստով փաթտուն սարի: (Հայարտօրէն
վեր բարձրանալով): Ինձի այդքան
սարիք չէք սար, չէ՞: (Վլատիմիր
կը նայի Լափին): Իրեն հետ բազ-
լատած՝ ես երիտասարդի մը երե-
ւոյթը ունիմ, այնպէս չէ՞: (Լոու-
րիւն: Լափին): Գլխա՛րկը: (Լափի
վար կը դնէ կողովը, կը հանէ գըլ-
խարկը: Առատ ու սպիտակ մագերը
կը քսիին դէմքին: Կ'առնէ գլխար-
կը անուրիւն տակ եւ կը վերցնէ կռ-
զովը): Հիմա նայեցէք: (Փոզո կը
հանէ իր գլխարկը: Ամբողջովին նա-
ղատ է: Կը դնէ գլխարկը): Տեսո՞ք:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Ի՞նչ ըսել է քնուք մը:

ՓՈԶԶՊ — Դուք այս կողմերէն չէք:
Միայն այս զարմուն կը պատկանիք:
Ժամանակին մարդիկ ծաղրածուներ
կ'ունենային: Հիմա՝ քնուքներ: Ա-
նոնք, որ թոյլ կու սան իրենց ա-
սիկա:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Եւ հիմա կը փոնան՞ք
զինք: Այսքա՞ն ծեր, այսքա՞ն հաւա-
տարիմ ծառայ մը:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ — Կեղաս'ա:

Փոզո աւելի եւ աւելի ջգագըր-
գիւ:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Ծծելէ ետք իր մէջ եղած
հիւթը՝ զայն կը նետէք ինչպէս...
(կը փնտռէ)... ինչպէս պանանի կե-
զեւ: Ոոստովանեցէք, որ...:

ՓՈԶԶՊ (հեկեկալէն, ձեռքերը գլխուն
տանելով) — Ձեմ կրնար այլեւս զի-
մանալ... չեմ կրնար տանիլ այլեւս
իր ըրածը... զուք չէ՞ք կրնար զիտ-
նալ... սահաւո՛ր է... սն պէտք է
երթայ: (Կը շարժէ ձեռքերը): Պի-
տի խենթացնէ զիս, չեմ կրնար այլ-
եւս, չե՛մ կրնար:

Լոուրիւն: Ամենքը կը նային
Փոզոյին: Լափի կը սարսուայ:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Ձի կրնար այլեւս:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ — Ահաւար է:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Կը խենթեմայ:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ — Գարչելի է:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր (Լափին) — Ինչպէ՞ս կը
համարձակիք: Ամօ՛թ է: Այսքա՞ն
բարի աէր մը: Ձայն այսպէս տա-
ռապեցնե՛լ: Այնքա՞ն տարիներ ետք:
Իսկապէ՞ս:

ՓՈԶԶՊ (հեկեկալով) — Ժամանակին...
այնքան աշխու էր... այնքան կ'օղ-
նէր ինձի, կ'ամօքէր ցաւերս, լուա-
զայնը կ'ընէր ինձի... հիմա... կը
սպաննէ զիս...:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ (Վլատիմիրին) — Արդեօք
կ'ուզէ փոխարինե՞լ զինք:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Ինչպէ՞ս:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ — Ձկրցայ հասկնալ, թէ
արդեօք կ'ուզէ փոխարինե՞լ զինք,
թէ այլեւս մէկը չ'ուզեր իրմէ ետք:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Ձեմ կարծեր:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ — Ինչպէ՞ս:

Վ.Ա.Ս.Ի.Մ.Ի.Ր — Ձեմ զիտեր:

Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ — Պէտք է իրեն հարցնել:

ՓՈԶԶՊ (հանդարտած) — Պարաններ,
չեմ զիտեր ինչ պատահեցաւ ինձի:
Ներեցէք: Մոռցէք այս բոլորը: (Ա-
ւելի եւ աւելի ինքզինք գտնելով):
Ձեմ յիշեր ճիշդ ինչ ըսի, բայց կըր-
նաք վստահ ըլլալ, թէ անոնց մէջ

բա՛ս մը իսկ ճշմարտութիւն չկար :
 (Կը շտկուի, կը գարնէ կուրծփին) :
 Ես կը նմանի՞մ մարդու մը, որ ըս-
 տեղծուած է տառապելու համար :
 Տեսէ՛ք : (Կը խուզարկէ գրպաննե-
 րը) : Ո՞ւր գրի ծխամորճո :

Փոզոնն ուսքի կ'ելլէ եւ կ'ուզը-
 ւի դէպի էսթրակոնը :

ԷՍԹՐԱԿՈՆ .— Նայէ՛ :
 ՓՈԶԶՕ .— Օ, բա՛, բա՛ :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Վերջացաւ :

ՎԼԱՏԻՄԻՐ .— Սքանչելի գիշեր :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Անտոսանալի :
 ՎԼԱՏԻՄԻՐ .— Եւ չէ աւարտած :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Ըստ երեւոյթին՝ ո՛չ :
 ՎԼԱՏԻՄԻՐ .— Դեռ նոր սկսած է :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Սարսափելի է :
 ՎԼԱՏԻՄԻՐ .— Կարծես հանդիսութեան
 մը մէջ կը գտնուինք :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Կրկէսի մը :
 ՎԼԱՏԻՄԻՐ .— Երգարահի մը :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Կրկէսի մը :
 ՓՈԶԶՕ .— Բայց ո՞ւր գրած եմ ծխամոր-
 ճոս :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Զուարճալի է : Կորսնցու-
 ցած է տուփը : (Բարձրաձայն կը
 խնդայ) :
 ՎԼԱՏԻՄԻՐ .— Շուտով կը վերադառ-
 նամ : (Կ'ուզողսի դէպի քուլիսները) :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Ներսնցքին խորքը, ձա-
 խին :
 ՎԼԱՏԻՄԻՐ .— Պահէ տեղը : (Դուրս կ'ել-
 լի) :
 ՓՈԶԶՕ .— Կորսնցուցած եմ իմ Ազգայն-
 րան :
 ԷՍԹՐԱԿՈՆ (գալարուելով) .— Պիտի մա-
 րինք խնդալէն :
 ՓՈԶԶՕ (զլուխը բարձրացնելով) .— Արդ-
 ևօք չտեսա՞ք : (Կը նկատէ Վլատի-
 միրի բացակայութիւնը : Յուսարեկ) :
 Օ՛հ, մեկնա՞ծ է : Առա՛նց ինձի ցտե-
 սութիւն ըսելու : Ատիկա բարեկիրթ
 ձեւ չէ : Դուք պէտք է վար գրած ըլ-
 լայիք գիշեր :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Կրնար ճաթիլ :
 ՓՈԶԶՕ .— Օ՛հ : (Լաւ քիւն) : Շատ կա-
 նուխ :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Հոս եկուր :
 ՓՈԶԶՕ .— Ինչո՞ւ :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Կը գիտնաս :
 ՓՈԶԶՕ .— Կ'ուզես, որ ոտքի՞ ելլեմ :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Եկուր . . . եկուր . . . շո՛ւտ :

Վլատիմիր կը վերադառնայ,
 տխուր, ուսով անդին կը հրէ
 Լափին, կիցով կը գարնէ աթո-
 ռին, կ'երթեւեկէ ջրագրգիտ :

ՓՈԶԶՕ .— Գոհ չէ՞ :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Հրաշալի բաներ կորսըն-
 ցուցիր : Մե՛ղք :

Վլատիմիր կանգ կ'առնէ, կը
 շտկէ աթոռը, կը վերսկսի եր-
 քեւեկել, աւելի հանդարտ :

ՓՈԶԶՕ .— Կը խաղաղի : (Դիտելով շուր-
 ջը) : Իրականութեան մէջ ամէն բան
 կը խաղաղի : Մեծ խաղաղութիւն մը
 կ'իջնէ : Մտի՛կ ըրէք (Կը բարձրացը-
 նէ ձեռքը) : Բնութիւնը կը քսանայ :
 ՎԼԱՏԻՄԻՐ (կանգ առնելով) .— Գիշերը
 երբե՞ք սիրտի չիջնէ :

Երեքը միասին կը նային եր-
 կինք :

ՓՈԶԶՕ .— Ատկէ առաջ չէ՞ք ուզեր մեկ-
 նիլ :
 ԷՍԹՐԱԿՈՆ .— Այսինքն . . . կը հասկը-
 նաք . . .

ՓՈԶԶՕ .— Բայց ատիկա շատ բնական է,
 շա՛տ բնական : Նոյնիսկ ես, ձեր կո-
 ցութեան մէջ, եթէ ժամադրութիւն
 ունենայի Կոսէնի . . . Կոսէի . . . Կո-
 տայի . . . հեռ, յամենայնուայնս, գի-
 տէ՛ք, թէ ով ըսել կ'ուզեմ, պիտի
 սպասէի մինչեւ խաւար գիշեր ըլլար՝
 յուսահատելէ առաջ : (Կը նայի ա-

թռուիմ) : Շատ պիտի ուզէի նորէն նստիլ, բայց չեմ գիտեր ինչպէս :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Կրնամ ձեզի օգնել :

ՓՈԶԶՕ. — Եթէ խնդրէիք ինձմէ, թե-
րեւս :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ի՞նչ :

ՓՈԶԶՕ. — Եթէ խնդրէիք ինձմէ նորէն նստիլ :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ատիկա օգնութի՞ւն մը պիտի բլար :

ՓՈԶԶՕ. — Այդպէս կ'ենթադրեմ :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Ուրեմն նստեցէք, Պարոն, խնդրեմ :

ՓՈԶԶՕ. — Ո՛չ, ո՛չ, չ'արժեր : (Լռութիւն : Յաժ ձայնով) . Պնդեցէ՛ք քիչ մը :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Դեհ, այդպէս ոտքի մի՛ կենաք, սրազ կ'առնէք :

ՓՈԶԶՕ. — Կը կարծէ՞ք :

ԷՍԹՐԱԿՈՆ. — Բայց ատիկա բացորոշ է :

ՓՈԶԶՕ. — Անկասկած իրաւունք ունիք : (Կը նստի) : Շնորհակալ եմ, սիրելիս : Ահաւասիկ վերահաստատուեցայ : (Կը նայի ժամացոյցին) : Բայց ժամանակն է, որ ձեզմէ բաժնուիմ, եթէ չեմ ուզեր ուշանալ :

ՎԼԱՏԻՄԻՐ. — Ժամանակը կանգ առած է :

ՓՈԶԶՕ (Ժամացոյցը մօտեցնելով ականջին) . — Մի՛ հաւատաք ատոր, Պարոն, մի՛ հաւատաք : (Ժամացոյցը դարձեալ կը դնէ գրպանը) : Ինչի

կ'ուզէք հաւատաքէք, բայց ո՛չ ատոր :

ԷՍԹՐԱԿՈՆ (Փոզոյի) . — Ամէն բան սեւ կը տեսնէ այսօր :

ՓՈԶԶՕ. — Բացի երկնակամարէն : (Կը խնդայ, գոհ՝ իր ըրած սրամտութեան) : Բայց ես դիտեմ պատճառը, որովհետեւ դուք այս կողմերէն չէք, դուք գեւ չէք դիտեր, թէ ինչեր կըրնան ընել մեր մթնշաղկերը : Կ'ուզէ՞ք, որ ըսեմ ձեզի : (Լռութիւն : Էսթրակոն եւ Վլատիմիր կը սկսին բնեղ. Էսթրակոն՝ իր կօշիկը, Վլատիմիր՝ իր գլխարկը : Լաֆիի գլխարկը կ'իյնայ, անկատ) : Շատ կ'ուզեմ դոհացում տալ ձեզի : (Անուշառտ կը սրբրսկէ բերնին) : Քիչ մը ուշադրութիւն, եթէ հաճիք : (Էսթրակոն եւ Վլատիմիր կը շարունակեն իրենց գրադումը, Լաֆին կէս մը կը բնայ : Փոզո կը շաչեցնէ մտրակը, որ շատ տկար ձայն մը կը հանէ) : Ի՞նչ ունի այս մտրակը : (Ոտքի կ'ելլէ եւ աւելի ուժգին կը շաչեցնէ գայն, վերջապէս յաջողելով : Լաֆի ուտում մը կ'ընէ : Վլատիմիրի գլխարկը եւ Էսթրակոնի կօշիկը կ'իյնան վար : Փոզո կը նետէ մտրակը) : Բան մը չ'արժեր այլեւս այս մտրակը : (Կը նայի Վլատիմիրին եւ Էսթրակոնին) : Ի՞նչ կ'ըսէի :

ՍՍՄՈՒԷԼ ՊԵՔԷԹ



Ի Վայական Շարժում

Յ. Պ Է Ր Պ Է Ր Ե Ա Ն

ԱՆԿԱՐՈՂՈՒԹԵԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

«Սպասելով Կառային» թատերախաղին թարգմանութեամբ «Բագին» վերստին կը բանայ Պեքէթի եւ մասնաւորաբար Կոտոյի բազմերես ու հեռաքրքրական թղթածրարը: Երբ 1966ին Պեքէթ կը ներկայացնէր երեսուն երկվայրկեաննոց «Թատերախաղ» մը, որ կը բաղկանար միակ ներշնչումէ ու արտաշնչումէ մը, կը կարծուէր, թէ վարպետը բաժն էր իր վերջին խօսքը, լռեցուցած լուսթեան հասնելու ճգամով: Ստիպյն անցեայ տարի իրմէ երկու դրքոյկներ կը հրատարակուէին, թատրոնի, ճայնասփիւռի կամ պատկերասփիւռի համար գրուած ութ կարճ կտորներու հաւաքածոն՝ «Վերջաւրաւ քիւններ ու տարօրինակութիւններ» խորագրով (անդլերէնով, 128 էջ) եւ 61 էջի սահմաններուն մէջ պարփակուած «Փափաւբներ»ը, նոյնպէս անգլերէնով գրուած եւ իր հիմնական հարցերուն շուրջ պարճող. ինչ որ կը նշանակէր, թէ Պեքէթ կրնար միշտ անահնկալներու տալեւ գնել աշխարհը:

ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽԱՆՏՈՒՄԸ

Պեքէթի թատերախաղերուն մէջ գրուած հարցերը ամէնէն աւելի ուժգնորէն գրեւորուած են հաւանաբար «Սպասելով Կառային» մէջ, որ ամէնէն աւելի ծանօթ ու ճանաչում պտած պորժը ըլլարով, մեզի տոյթ կու տայ հարցադրումները կեդրոնացնելու: Բայց եւ այնպէս, իր պորժին ամբողջութեան մէջէն զխեղով գայն, շատ մը կէտեր կրնան իրենց ամբողջական տարրուութեամբ հասկցուիլ: Թատերախաղին սկիզբէն իսկ հեղինակը կը զնէ արժէքներու խախտումին ու յարաբերականութեան պարագան, երբ Փրկիչին հետ խառնուող երկու ուսուցանողներուն պարագան կը սկսի Վլատիմիրի եւ Էսթրա-կանի միջեւ վիճաբանութեան նիւթ գամուլ:

- ՎԼԱՏԻՄԻՐ. — Եւ սակայն... (Լուսքիւն): Ինչպէ՞ս կ'ըլլայ որ... յուսամ չես ճանաչանար:
- ԷՍԹՐԱԿՈՆ. — Մտիկ չեմ ըներ:
- ՎԼԱՏԻՄԻՐ. — Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ չորս աւետարանիչներէն միայն մէկը կը

Խօսի աւագակի մը փրկուած ըլլալուն մասին, երբ չորսն ալ հոն էին — այսինքն՝ ոչ հետու տեղ մը: Եւ միայն մէկը կը խօսի փրկուած աւագակի մը մասին:

Այսինքն՝ աւետարանը, որ բացարձակ ճշմարտութիւններէն մէկը կը համարուի, կը սկսի հարցադրուիլ իր իսկ առեաններով եւ յատկանշականօրէն հարցի մը մասին, որ կը վերաբերի Կոտային սպասող այս երկու թափառաշրջիկներուն, իրենց փրկութեան... .

Ճշմարտութիւնը ենթակայական է եւ, հետեւաբար, յարաբերական, քանի որ նոյն դէպքին ներկայ գտնուած չորս վիճակներէն մէկը միայն կը խօսի հարցի մը մասին, որ շատ հաւանաբար, մնացեալ երեքին համար դոյւթիւն իսկ չունի. Տարբեր հարց, որ ակնարկութիւնը կ'երթայ աւետարանին կապուած միւս ճշմարտութեան, ուր նոյն եղելութիւնը կը պատմուի չորս տարբեր անձերու կողմէ, յաճախ տարբեր մեկնաբանութեամբ: Նման քայլուած քաղաքակրթութեան մը մէջ, որ աւանդաբար արեւմտաքրիստոնէական կը կոչուի եւ ուր այլեւս յասակ արժէքներ չկան, ամէն ինչ կարելի է եւ, միաժամանակ, ամէն ինչ անկարելի... .

Տարբեր չէր կրնար ըլլալ մասնաւոր Պեքէթի հերքսին պարտոյան, որ ընդհանրապէս միաք մըն է, որ ինքն իր շուրջ կը դառնայ:

Պեքէթի մտածողութեան ազդիւրները ծնունդ կ'առնեն Տեքարթէն ու Ժէ. դարէն, ուր մարդ էակը կը կասկածի իր դոյւթեան մասին եւ կը հարցադէր երեւութական աշխարհը: Ուաթ, Մոլլօ եւ Պեքէթի միւս վէպերուն կամ արձակներուն բոլոր արկարները կը մտածեն, սակայն կասկածելով մինչեւ իսկ իրենց մարմնին մէջ ըլլալու իրողութեան... .

Ճիշդ այս պատճառաւ, ենթակայական տիեզերքի մը առջեւ կը դըրւին, ուր արտաքին հաւասարակշռութիւնը, որ պարզապէս երեւութական է, ամբողջովին կը խախտի, մեզ դնելով վայրագ, ծիծաղելի ու անհեթեթ ամբողջութեան մը դիմաց:

ՖԼՈՐԵՆԹԻՆ ՊԵԼԱՔՈՒԱ ԿԱՄ ՊԵՔԷԹԻ ՆԱԽԱՏԻՊԱՐԸ

Պեքէթի արկարները այնպիսի՝ նմանութիւն մը ունին, որ այն ազդեցութիւնը կը ձգէ, թէ կարծէք իրարու վերայայանութիւնը ըլլային, տարբեր անուններու տակ, մասնաւոր մինչեւ 1949-50 ղրուած զործերը: Այսպէս, Մըրֆիէն մինչեւ Ուաթ, Մոլլօ, Մորան, Մալոն, Մերսիէ, Քամիէ, Էսայն, ամբողջութիւն մը կը կազմեն, որոնց պէտք է ծանօթանալ՝ հասկընալու համար Վրատիմիրի ու Էսթրակոնի պէս թափառաշրջիկները:

Հակառակ այս բոլոր անուններուն շուրջ տրուած մեկնաբանութիւններուն ու բազմաթիւ տարակարծութիւններուն, մեզի ծանօթ բոլոր քննադատներն ալ համաձայն են այն տեսակէտին շուրջ; Թէ Պեքէթի հերքսներուն նախաժողովը կը կազմէ Ֆլորէնթին Պելաքուան, որուն կը հանդիպինք Տանթէի «Քաւարան»ին չորրորդ հատուածին մէջ: Ուչ ապաշխարած ըլլալուն համար՝ Պելաքուա դատապարտուած է սպասելու բլուրի մը ստորոտը, մինչեւ զինք ներս առնելու ժամանակը յարմար տեսնուի: Հոն կ'երագէ ան, կը փորձէ պատկերացնել ինչ որ իրեն պիտի պատահի եւ գժոհ՝ չի թուիր իր կացութենէն... «Աւելի ծակիք՝ քան հարուածնիք» պատմուածքներու հաւաքածոյին մէջ, զոր մենք չենք տեսած, կ'ըսուի, թէ այս արկարը կը յայտնուի Պելաքուա Շուազ անունին տակ: Իսկ Մըրֆին կը նախընտրէ ոչինչ ը-

նեւ. պարզապէս ամբողջ օրը աթոռի մը վրայ մերկ նստած՝ կ'երայէ կամ կը մտածէ :

1942ին երբ կը գրուի «Ուաք»ը, որ կը հնչէ անդլերէն ինչի նման (What), մենք մեզ կը դանենք տարբեր ձեւի վէպի մը դիմաց, որ վէպ չէ, այլ՝ պարզապէս արձակ, որմէ ետք արդէն Պեքէթ յետպատերազմեան իր բեզուն հնգամեակը (1945-50) պիտի բուրդէ եւ Ֆրանսերէնով պիտի արտադրէ, դրելով՝ «Մերսիէ եւ Քամիէ», չհրատարակուած, որուն միայն կարգ մը քըննադատներ ծանօթ են եւ իրենց գործերուն մէջ հատուածներ կը մէջբերեն, «Նորավէպեր», «Էյոթ-Էրիա» թատերախաղ, ետպրոսթիւնը՝ «Մալլո», «Մալլան մեռած» եւ «Անանուանելի», սպա՝ «Սպասելով Կառոյի» ու «Իրուքիւններ» ոչինչի համար :

Չարմանալի չէ այն, որ երբ Մորանին պարտականութիւն կը տրուի Մոլլան հարածելու ու դանելու, Մորան կ'ըսէ, — «Ի՞նչ խոժան է գլխուս մէջ, ի՞նչ համաստեղութիւն մահամերձներու՝ Մըրֆին, Ուաքը, Երբքը, Մերսիէն եւ միւս բոլորը :

Նման ակնարկութիւններու այլուր եւս կը հանդիպինք, որոնք հեղինակին կողմէ յիշուած են պարզապէս տխարաներուն նմանութիւնը հաստատելու եւ հաւանաբար բսելու, թէ վերջ ի վերջոյ այս բոլորը մէկ գործ կը կազմեն :

Պեքէթի արձակի աշխարհէն եկած Մոլլան կամ Մորանը, իրբեւ ենթահոգ կամ իբրեւ կացութիւն, Կոտայի թափասաշրջիկներուն հետ ունին որոշ գուգահեսներ ու սարբերութիւններ, զորս հետաքրքրական պիտի ըլլար ընդգծել :

Ընդհանրապէս կայ սեղեւորութիւն մը կամ մեկնում մը : Ուաթ կ'երթայ Պր. Նոքսի մը մօտ աշխատելու. ինչպէ՞ս կատարուած է իրենց համաձայնութիւնը կամ ո՞ր է Պր. Նոքս, մինչեւ վերջ ալ խորհրդաւոր կը մնայ : Մոլլո կ'երթայ մօրը հանդիպելու : Մորանի պարտականութիւն կը տրուի, խորհրդաւոր եւ երկիւզալի Իւտիին կողմէ, Մոլլան դանելու : Մերսիէ եւ Գամմիէ մեզի անձանօթ սեղեւորութեան մը ելած են : Անոնց մեկնումէն ետք՝ Մոլլո, որ տարիքով բաւական յառաջացած է, ու մէկ ոտքը անդամաւորած, շուտով կը կորսնցնէ իր հին հեծանիւր եւ ստեն մը անորոշ տան մը մէջ՝ վարմանուելէ ետք, կը փախչի եւ երկար շարձարանքներէ ետք խորհրդաւոր կերպով իր սենեակը կը վերադարձուի (կամ ծերերու ապաստանարան մը) : Մորան, որ զակին հետ ճամբայ կ'ելլէ եւ շատ բնական քաղաքացի մը կը թուի, հեղհեաէ ցաւեր կը զգայ, որուն պատճառաւ մէկ ոտքը կ'անդամաւորւծուի եւ տղան կը զրկէ հեծանիւ մը գնելու եւ անով կը շարունակեն ճամբորդութիւնը մինչեւ ա'յն ստեն, որ տղան կը փախչի հեծիկին հետ եւ ինք եւս կը վերածռի փորին վրայ սողալով յառաջացող խրեակի մը : Մերսիէ եւ Գամմիէ մեծ հաճոյքով կը խօսին իրենց հեծանիւն մասին, զոր կորսնցուցած են : «Ուաք»ի սկզբնաւորութեան կը հանդիպինք երեք անձերու, որոնք մանրամասնօրէն կը նկարագրեն Ուաթի քալելու շատ տարօրինակ ձեւը, իսկ այս վերջինը, Պր. Նոքսին մօտ չմտած եւ ձգելէն անմիջապէս ետք հեծանիւնով անձ մը կը տեսնէ, որ իր առջեւէն կ'անցնի...

Մեկնարանութիւնները այլազան են անշուշտ :

ԱՆՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՍԸ

Որոշ աւարկաներու՝ ինչպէս վերոյիշեալ հաստուածին մէջ յիշուած հեծանիւններուն կամ գլխարկներու ներկայութիւնը, չի վրիպիր ընթերցող-

ներու ուշադրութեան: Մա'նաւանդ՝ երբ անոնց յաշորդական ներկայութիւնը կը սկսի խորհրդանշական իմաստ ստանալ:

Օրինակ, ամէնէն յատկանշականը անշուշտ, Պարնարա, հեծանիւր կը նկատէ իբրև խորհրդանշանը ներքին բնագոյներու ու կիրքերու ամբողջութեան (1) (Ֆրէճօյտեան սահմանումով՝ Իձին), որ աւանդականօրէն կը ներկայացուէր ձիերով... եւ կը նկատէ, թէ ամէն անգամ որ անոնք իրենց հեծանիւններուն հետ չեն, կը պարպուին իրենց կիրքերէն, կամ աւելի ճիշդ՝ կարծէք աւելի հանդարտ կը դառնան:

Մինչդեռ Հրէճ Քէննըր իր «Սամուէլ Պեֆէր» անուն հրաշալի ուսումնասիրութեան էջերուն շատ աւելի լայն ծիրի մը մէջ կը դնէ հարցը(2): Իրեն համար Պեքէթի աշխարհը, քորթիցեան աշխարհ մըն է, ուր մարդը առանց հեծանիւի կը նմանի մաքի մը, կապուած՝ մեանող կենդանիի մը: Իսկ ինչպէս յոյները ունէին մարդաձիերը, քորթիցեան մարդու ձգտումին մէջ կար մարդը հեծանիւին վրայ, որ իր Ֆիզիքական թերութիւնը պիտի դա՛յ սրբադրելու եւ դիմք ամբողջացնելու: Սակայն բոլոր այս թափառաշրջիկները թուարանական համեմատութիւններու կամ թիւերու մասին կը մտածեն, աւելի նշաններու՝ ինչպէս փայլը (22/7), զոր յստակ թիւերով կարելի չէ ներկայացնել եւ որ անվերջ կոտորակներու կ'երթայ, իրենց անտարամարանական կացութեան նման: Սակայն ինչ որ կը դառննք՝ հին, խարխլած ու դունաթափ հեծանիւններ են... ինչ որ, իրեն համար ակզ մը կը նշանակէ ժէ. դարու երազ մը, որ խախտած է այլեւս(3): Գուցէ եղբայրացիներով, որ այդ պատճառաւ իսկ Կոտոն այլեւս չ'երեւիր:

Ճիշդ է, որ «Սպասելով Կոտոյին» թատերախաղին մէջ չենք հանդիպիր հեծանիւի եւ հոն գտնուող մտասեւեռումն ու մթնոլորտը որոշ տարբերութիւններ ունի արձակի մթնոլորտէն (եթէ վերի նկատողութիւնը անտեսենք, որ մեկնաբանութիւն մըն է սպարդապէս), սակայն նոյն մտածող-թափառաշրջիկներուն է, որ կը հանդիպինք: Սակայն թատերախաղին մէջ ուրիշ տարր մը աւելցած է, հոն գիտեն, թէ կը սպասեն մէկու մը, որ պիտի գայ... Վէպերուն մէջ նման բան չկայ եւ զուր չէ, երբ Վլադիմիր կը բացազանչէ ՎԼԱՏԻՄԻՐ. — Ի՞նչ կ'ընեմք հոս, այս է հարցը. եւ մեմօ օրինաւ եմք, որ գիտեմք պատասխանը: Այո՛, այս համառարած շիտթիմ մէջ, միայն մէկ բան յստակ է: Կը սպասեմք Կոտոյին, որ գայ:

Յլլուր պիտի ըսէ. թէ իրենք սուրբեր չեն, սակայն հոն են ու կը սպասեն: Այս է հիմնական տարբերութիւնը, որ կացութեան տարբեր գունաւորում մը կու սայ:

ԱՆԿԱՐՈՎՈՒԹԵԱՆ ՊԵՂՈՒՄԸ

Իր շատ հազուադէպ հանրային հանդիպումներէն մէկուն, Քէննըրի կողմէ յիշատակուած հարցազրոյցի մը մէջ՝ Պեքէթ կ'ըսէ.

«Ես կ'աշխատիմ անկարուքեան ու տգիտութեան վրայ: Ձեմ կարծեր, որ անկարութիւնը օգտագործուած [քննարկուած. Յ. Պ.] է անցեալին»(4):

Եւ խորքին մէջ իր տկարները հտպիտներ կամ թափառաշրջիկներ են իրենց անկարողութիւնը վերլուծող: Ուաթ կամ Վլադիմիր, Մոլլօ կամ Մորան, Մալլոն կամ Էսթրակոն, ոչինչ կրնան ընել իրենց վիճակէն դուրս դալու համար: Գիտեն սպարդապէս, թէ կ'երթան կամ կը սպասեն: Շարժումի մէջ են՝ Ֆիզիքապէս կամ մտային ձեւով: Պարզապէս, երբ իրենց հեծանիւր կը կորսնցնեն, կը շարունակեն շարժիլ, սողալով, քաշկռտելով իրենք գլրենք կամ այլ ձեւի մը մասին մտածելով, հակառակ անոր, որ իրենց ընթաց-

քը ուղիղ չէ, այլ՝ ընդհանրապէս շրջանակներ կը դժէ ու իրենք նոյն տեղը կը վերագտնան։

Փուլէջ պատկերը անասնէլի կամ սարսափելի է այնքան, որ Լաքիի պատկերացուցած ճերմակ մօրուքով Աստուածը, որ սրոշ բացառութիւններով կը սիրէ բոլորս... երբեք ալ այն ամենատես, ամենաարդար ու զթափառ աստուածը չէ։ Աստիճին արարի վերջաւորութեան, երբ Վլատիմիր իր տիրոջ մասին Կոտոյի պատգամաբեր տղուն հարց կու տայ, այս վերջինը կ'ըսէ, թէ Կոտոն, որ նոյնպէս ճերմակ մօրուք ունի, իր եղբայրը կը ծեծէ։ Ամենազօր ու խորհրդաւոր Պր. Նոքսը («Ուաք»ի մէջ), գրական յատկանիչներ չի ցուցաբերեր։ Իսկ Մորան կը մտնայ Բուրի հրահանգները անտեսելէ, ա՛յն նրկիւզով, թէ կրնայ պատժուիլ։ Արդեօք բարբարոս աստուծոյ մը հե՞տ է մեր գործը։

Ասկէ անդին ինչ որ կը մնայ, իրենց գոյութեան մասին մտածող եւ տեղ մը դանդաղ թափառաշրջիկներ են, շատ բնականօրէն իրարու նմանող կամ սրեւէ անուն կրող, քանի որ գոյութեանական նոյն վիճակին մէջ դանդաղ կը նշանակէ ուղեւս պատրանաթափ եւ գիտակից բլլալ իրենց անկարողութեան։

Վերագտնալով ու կեդրոնանալով Կոտոյին վրայ, անշուշտ կրնանք բանալ պանագան մեկնաբանութիւններու թղթածրարը, սակայն մէկ կէտ միշտ պիտի ցցուի մեր գէժ, հեղինակին գիտակցութիւնը իր կատարած արարքին։ Պեքէթ չի կրնար խուսափիլ այն գիտակցութենէն, որ գրականութիւն կ'ընէ... Լաքի կու գայ «դուրեմայնելու» Վլատիմիրն ու էսթրակոնը, սակայն միաժամանակ հանդիտական է, զոր կը դրադեցնէ Փոպոյի մուտքը նոյնպէս շեշտուածօրէն թատերական է։ Իսկ ինչպէ՞ս կարելի է թարգմանել Վլատիմիրի ու էսթրակոնի այս խօսակցութիւնը.

- Վ.Լ.Ս.Ի.Մ.Ի. — Սփանչելի գիշեր։
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ. — Անմտամալի։
- Վ.Լ.Ս.Ի.Մ.Ի. — Եւ չէ աւարտած։
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ. — Ըստ երեւոյթիմ՝ ո՛չ։
- Վ.Լ.Ս.Ի.Մ.Ի. — Դեռ նոք սկսած է։
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ. — Սարսափելի է։
- Վ.Լ.Ս.Ի.Մ.Ի. — Կարծես հանդիտութեան մը մէջ կը գտնուիմք։
- Վ.Լ.Ս.Ի.Մ.Ի. — Կրկէսի մը։
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՆ. — Երգաբանի մը։
- Վ.Լ.Ս.Ի.Մ.Ի. — Կրկէսի։

Սպասելու միջոցին, ժամանակ սպաննող այս երկու թափառաշրջիկները, նաեւ հանդիտականին կ'օրհեն ժամանակ անցընելու եւ թատերախաղը առաջ կը տանին... Խաղ՝ խաղի մէջ. տարօրինա՞կ է։ Նախընթացը կայ՝ Մալլոն, որ անկողինին մէջ ինքն իրեն պատմութիւններ կը պատմէ կամ կը գրէ, Մորան, որ տեղեկագիրներ կու տայ... Մոլլոն, որ նոյնպէս կը գրէ, եւայլն. եւ այս բոլորը Պեքէթի բնորոշիչ աշխարհը կը կազմեն։ Ինք երբեք ալ չի կրնար մոռնալ, թէ գրականութիւն կ'ընէ։

Մեկնաբանութիւններու շարքին մէջ, առաջինը՝ որ համապարփակ տեսութենէ մը կու գայ, Պարնարինն է։ Այս վերջինը, Պեքէթի տիպարները կը բացատրէ իբրեւ Սիգոֆրէնիայէ բռնուած անհատներ(Յ), հիմնուած ա՛յն ենթադրութեան վրայ, որ Պեքէթ երբ 1933-35 Լոնտոն կը դանդաղէր, յաճախ Պէթլէմ թագաւորական հիւանդանոցը կ'այցելէր բարեկամ բժիշկի մը հետ եւ շատ հաւանաբար ծանօթ էր նման պարագաներու։ Իսկ աւելի մասնաւորուած

կերպով, ձէյմս ձոյսի աղջիկը, որ ասեն մը սիրահարուած էր իրեն, հոգեբանական նման կացութեան մը հասած էր...

Ճիշդ է, որ Պեքէթի տիպարներուն քալած ձեւը կամ մտածելակերպի տարօրինակութիւնները շատ մը մանրամասնութիւններու մէջ ճիշդ այս ձեւով տրուած են ու կը համապատասխանեն իր վարկածին: Սակայն անհեթեթ պիտի ըլլար մտածել, թէ Պեքէթ սիգնիֆիկանտ զոհեր կը նկարագուրէ: Գուցէ այս մէկը հոգեբանական բացատրութեան մը փնտռուածքը կրնայ ըլլալ տըրեալ կացութիւնը հասկնալու:

Այս մօտեցումով, անձնական փորձառութիւն մը եւս կը յաւակնինք մտցնել: Իտրեկամ մը, որ ինքնաշարժի ուժեղ հարուած մը անցուցած էր, իր կրած ցնցումին հետեւանքով կորսնցուցած էր ժամանակի զգայնութիւնը եւ ինչ որ այդ ժամանակաշրջանին կը հարցընէր կամ իսկն կը ստատահէր, չէր կրնար յիշել... Այսպէս, իր հարցումներու կրկնութիւնը, ուր լինելու անդոհանքը, բազմանքները, եւայլն, շատ յատկանշականօրէն պեքէթեան հերոսներուն խօսակցութիւնը կը յիշեցնէին: Ձեռք կրնար ըլլալ, որ հաւաքական ցնցումէ մը դուրս եկած մարդկութեան մը իրականութեան կամ փորձառութեան զրմաց կը զբուխնք, մանաւանդ՝ որ այս դործերը Երկրորդ Աշխարհամարտէն անմըջապէս ետք կը զբուխն:

Իր հոգեբանական մօտեցումով՝ Պարնարա Խսթրակոնն ու Վլատիմիրը կը նկատէ անհատի ներքին ետին բաժանումը(6): Խսթրակոն, որ բանաստեղծ եղած է՝ ներքին ետը կը ներկայացնէ, հարածախտի նախանշաններ ցոյց կու տայ եւ ներքին տուայտանքներ կ'ունենայ: Վլատիմիր արտաքին ետը ըլլալով, յարափոփոխ հոգեվիճակներու ենթակայ է, սակայն նաեւ առաջինէն աւելի դործնական է: Նոյն ձեւով, Լաքի կը ներկայացնէ Փողոյրի երեւակայական անցեալը, որ ներքին ետին մէջ բանտարկուած է: Նոյն ձեւով, Մորան սակաւ կը վերածուի Մուլլոյի: Փոպո երկրորդ արարին կը կորսնցնէ իր արտաքին անհատականութիւնը, կոյր կը դառնայ եւ Լաքին է, որ կը սկսի զինք առաջնորդել:

Իսկ Ժողէֆին Ժաքըպսըն Կոտոն կը նկատէ հակաթեղը պարսպութեան(7): Քանի որ եթէ Կոտոն չըլլայ, ամբողջովին պիտի կորսուին ոչընթեան մէջ եւ սղասելու կամ կառչելու համար ոչինչ պիտի ունենան:

Այս կացութեան զրմաց անկարողութիւնը բան մը ընելու, նոյնքան անկարողութեան դատապարտուած դործիքով մը՝ լեզուով, որ միակ միջոցն է սակայն հաղորդակցութեան, վերջին հաշուով կը միաձուլէ կամ կը միացնէ հեղինակն ու դործը նոյն դրութեան մէջ: Պեքէթի կը մնայ առ իր փորձառութիւնը ամբողջութեամբ, ինչ որ կը կատարէ արձակի, թատրոնի, բանաստեղծութեան եւ, վերջապէս, ձայնափիւռային ձայներու միջոցաւ: Եւ այսպիսով կը պեղէ անկարողութեան դաշտը:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

(1) Ճ. Ս. Պարնարտ, Սամուէլ Պեքէթ — Նոր մօտեցում մը. Լոնտոն, 1970, էջ 40:
(2) Հիւն Բեննըր, Սամուէլ Պեքէթ. Նիւ Եորք, Կրով Հրատ. 1961:
(3) Հետաքրքրական է նշել թէ Բեննընի հետ ունեցած հարցազրոյսի մը ընթացքին՝ Պեքէթ կ'ըսէ, թէ ֆանչցած է Կոտո անունով ժողովրդականութիւն գտած հեծելաճորդ մը, որ մեծ քիւով մրցումներ ու մրցամակներ շահած է:
(4) Պեքէթ, էջ 33:
(5) Պարնարտ, էջ 7:
(6) Նոյն տեղը, էջ 89-100:
(7) Ժ. Ժաքըպսըն եւ Ու. Մոկելըր, Սամուէլ Պեքէթի հաւատամքը, Լոնտոն, Ֆէյ-պըր Հրատ. 1966:

Լ. Մ Կ Ր Տ Չ Ե Ա Ն

«ԿՈՆՏԻՆԵՆՏ» ՀԱՆԴԵՍԻ ԴԵՐԸ

1974 թուականից ի վեր Արևմտեան Եւրոպայում լոյս է տեսնում «Կոնտինենտ» («Մայրցամաք») տնօրէնով եռամսեայ հանդէսը, միաժամանակ ուսեսերէն եւ այլ լեզուներով: Այդ հանդամանքը շեշտում է հանդէսի թէ՛ ուսական եւ թէ՛ միջազգային բնոյթը, սրայմանաւորում նրա գերն ու նշանակութիւնը արդի աշխարհի հասարակական ու, մա՛նաւանդ՝ մշակութային կեանքում, չհաշւած նրա յարուցած ու յարուցելիք մեծ ու փոքր հետեւանքները ազգային համար:

Հանդէսի հրատարակութեան գաղափարը սրահանում է Խորհրդային Միութիւնից դուրս եկած արձակագիր Վլադիմիր Մաքարիմովին: Հրատարակութիւնը սկզբից ի վեր ստանձնել է արեւմտաեւրոպական նշանաւոր հրատարակիչ Ակտել Ծպրինդերը, յատկապէս չհամապատասխան դրամական միջոցներ՝ իբրեւ կանխաձեռն: Նոյն հրատարակչութիւնն էլ («Ուլտայն») պայմանագրեր է կրնքում արեւմտաեւրոպական եւ այլ երկրներէ որոշ հրատարակչութիւնների հետ՝ հանդէսի ալրայեզու հրատարակչութիւնների իրապորժման դժով: Իսկ հանդէսի բուն խմբագրութիւնը գտնուում է Փարիզում:

Այս առիւրը դրելու պահին հրատարակի վրայ է հանդէսի ուսեսերէն հրատարակութեան Նարդ համարը: Եւ սէտք է նշել, որ ընդամէնը երեք տարում արդէն իսկ նկատելի են նրա յաջողութիւնները: Առայժմ մի կողմ գրած բովանդակութիւնը, յաջողութիւնը երեւում է թէկուզ հենց արտաքին մի շարք տուեալների մէջ: Հանդէսը սկզբից եւեթ լոյս

էր տեսնում հինգ լեզուներով՝ ուսեսերէն, գերմաներէն, Ֆրանսերէն, իտալերէն եւ անգլերէն: Ի հարկէ, դրանք անպայման մէկը միտի ամբողջական ու անխորտիս պատճէնը չեն, այլ՝ դուզահետ հրատարակութիւններ, մայր օրինակից՝ ուսեսերէնից կատարուած ընտրողական թարգմանութիւնների հիման վրայ: Ներկայումս այդ հինգ լեզուներին աւելացել են եւս չորսը (հոլանդերէն, յունարէն, իտալաներէն եւ սլոուակալերէն), այդ լեզուներով խօսող սպիերի համար:

Եթէ «Կոնտինենտ»ի ուսեսերէն հրատարակութիւնը ճանապարհ է ընկել գերայից եւ պարտքով, այժմ հանդէսը ո՛չ միայն հանարար է մճարում, ընդունուած կարգով, իր աշխատակիցներին, այլեւ ինքնապահ է պարճել եւ նոր ծրագրեր է մշակում: Իս հնարաւոր պարճու միայն նրա սպաքանակի աւելացման եւ միաժամանակ օտար բաղմաթիւ լեզուների թարգմանուելու ու սարածուելու շնորհիւ: Տպաքանակը աւելացու, որովհետեւ Խորհրդային Միութիւնից դուրս եկան մեծ թւով ուսատիտ ու դրատէր ընթերցողներ: Եւ, ըստ հաւաստի տուեալների, հանդէսը արատահամուծ լոյս տեսնող ուսեսերէն բոլոր հանդէսների շարքում այժմ ամենամեծ տպաքանակն ունի: Ուրեմն, կարճ ժամանակում ժողովրդականութիւն ձեռք բերելը տկնյայտ է:

Հանդէսի ոմբապնդման նշան է եւ սարբերտարար այսպէս ատած «Սմբարդրական կոլեկիայի ընդլայնուած նիտս», փաստօրէն համաժողով հրաւիրելու ծրարայիրը: Այդ իմաստով առաջին բաղմամարդ նիտը տեղի ունեցու 1977 թ. Նո-

յեմբերի 5-7ը Արեւմտեան Բեռլինում, որտեղ որոշուեց յաջորդը կազմակերպել երկու տարի անց, իսկ յետոյ էլ՝ դանկ տարին մէկ անգամ: Դա որոշ մասաւոր շարժում սկսելու նախանշան է:

Յաստիանշական է եւ «խմբադրական կոլեգիայի» կազմը, որ տարեցատարի աճել եւ այժմ անցնում է 30ից: Ինքնին հասկանալի է, որ հանդէսի խմբադրման ու ստեղծման բուն աշխատանքը ծանրացած է սակաւաթիւ անձանց ուսերին, իսկ միւսները «մասնակցութիւնը» զուտ պայմանական է, «անտէր միացներ» բարեացակամութեան նշան: Բայց այսպիսի դէպքերում «անտէր միացներ» էլ մեծ բան է նշանակում, եթէ այդ անունները կըլին ունեն թէ՛ իրենց եւ թէ՛ հասարակութեան աչքում: Այսպէս, «Կոմսիոնետ»-ի պարագայում խորհրդանշականից աւելի իմաստ են ձեռք բերում մանաւանդ Ռայմոն Արոնի, Միլովան Ջիլասի, էոթէն Իոնեսքոյի, Արթուր Քէսլերի, Անդրէյ Սախարովի, Իգնացիօ Միլոնէի անունները:

Արոնք հանդէսի ամբապնդման արտաքին նշաններն են: Բայց կան նաեւ ներքին ամբապնդման, բովանդակութեան հետ կապուած նշաններ, որոնք պայմանաւորուած են հանդէսի առաջադրանքներով:

Արդէն ասուեց, որ «Կոմսիոնետ»-ն ունի միաժամանակ թէ՛ ուսուսական եւ թէ՛ միջնադպրոցի բնոյթ: Նախ տեսնենք ուսուսական կողմը:

Յայտնի է, թէ ինչ կայութիւն է տիրում Խորհրդային Ռուսաստանում եւ առհասարակ Խորհրդային Միութեան մէջ: Միակուսակցական իշխանութեան հաստատած պայմաններում անտանկի վիճակ է ստեղծուել նաեւ հողեմտաւոր գործունէութեան, գիտութեան, գրականութեան ու արուեստի իսկական զարգացման համար: Մշակութային կեանքի ընթացքը դրուել է միանդամայն կեղծ ճանապարհի վրայ: Այդ իրողութիւնը թայանի է շատերի, մտահոգում ու տառապեցնում է շատերի, որոնք, սակայն, անզօր են միայն իրենց ուժերով բարեկա-

ւերու ընդհանուր կայութիւնը բռնապահութեան պայմաններում: Ուրեմն, հոգեմտաւոր գործունէութեան սրեւէ անկախ ու ազատ բեմ է հարկաւոր, որը այսօր կարող է գոյութիւն ունենալ միայն արտասահմանում:

Արտասահմանում, անցեալ բոլոր ատանամեակների ընթացքում, հրատարակուել ու հրատարակում են ուսուսական այլազան թերթեր ու հանդէսներ, որոնք իրենց համապատասխան դերն են կատարել ու կատարում: Բայց դրանք մեծ մասամբ, փոքրիկ բացառութիւններով, սոցաարկիկ են բացառապէս կամ աւաւեկապէս «արտասահմանցիներին»՝ մտաբանելու ուսուսներին, տեղ տալով արտասահմանեան հեղինակների ստեղծագործութիւններին, յուշերին եւ ուսումնասիրութիւններին: Իսկ «Մայր երկիրը» ինքնաբերաբար բացակայել է: Այդպէս էր կայութիւնը ո՛չ թէ՛ տեւէ մէկի անհասկացողութեան կամ ծուռ դիտաւորութեան հետեւանքով, այլ իրերի ճշնշման տակ: Քանզի մինչեւ հիմա «Մայր երկրի» վիճակն էլ տարբեր էր. տասնամեակներ շարունակ չկային այսօրուայ «այլախոհական» բացայայտ արամադրութիւններն ու խմորումները, ազատասէր ուժերը կատարեալ լուութեան էին մատնուած, «երկաթեայ վարագոյրը» աւելի քան դաժան իրականութիւն էր, միանգամայն բացակայում էր միջերկրային մարդկային երթեւեկութիւնը, անհնարին էր սրեւէ գրուած թղթի կտոր խորհրդային երկրից դուրս հանել, եւայլն, եւայլն: Այդ ասպարէզում, ինչպէս յայտնի է, որոշ ժամանակից ի վեր եւ, մանաւանդ՝ ներկայումս զբալի ու նշանակալի փոփոխութիւններ են տեղի ունեցել, որոնք, այսպէս թէ՛ այնպէս, նւպատաւոր հոգ են ստեղծել ազատ մաքի պտուղները պահպանելու եւ տարածելու, ատապոզոդների ու բռնութեան դէմ ըմբոստացողների ձայներին արձագանգելու, նրանց գոյութեան մասին աշխարհին տեղեակ պահելու համար:

Ահա այդ իմաստով որոշակի առաքելութիւն է ստանձնում «Կոմսիոնետ»

Հանդէսը: Նրա նպատակն է նախ հրատարակել իրերի բերմամբ աստիճանաբար խորհրդային երկրից դուրս ելնող գրողների ու մտաւարականների երկերն ու ուսումնասիրութիւնները: Նմանապէս՝ հրատարակել գեոսեւս կամ ընդմիջտ այնտեղ ապրող ու ստեղծագործող այն գրողների երկերը, որոնք գրաքրննական ճնշման պատճառով ի վիճակի չեն իրենց ստեղծագործութիւններն ընթերցողներին հասցնել: Յատուկ ուշադրութիւն է դարձուում երիտասարդ ու ասիական անանուն հեղինակները վրայ, որոնք որեւէ ձեւով կարող են իրենց գրուածքները արտասահման հասցնել: Ինականաբար, պարտք է համարուում լոյս ընծայել նաեւ այն անտալ կամ հազուադիւրս երկերը, որոնց հեղինակները ողջ չեն եւ ստեղծագործել են աւելի վաղ՝ 1920ական, 30ական եւ այլ թուականներին, կոմունիստական իշխանութեան ներքոյ:

Բայց «Կոնտրինետ»ի առաքելութիւնն ու դերը նշանակալից է ո՛չ միայն արդիական, այլեւ պատմական իմաստով: Ռուսերէն լեզուով առաջին բուն առումով վտարանդիական հանդէսը լոյս է տեսել աւելի քան հարիւր տարի առաջ Լոնդոնում, որը հսկայական աղբեղութիւն է գործել իր փամփանակի ուսական հասարակական – մշակութային կեանքի վրայ եւ իր խաղաղած պատմական դերով եզակի տեղ է բռնում ու նոյնպիսի խորհրդանշան հանդիսանում: Դա Ալեքսանդր Գրեցենի եւ իր գաղափարակիցների «Կոլոկոլ» («Ջանգ») հանդէսն էր:

Ի՞նչ նմանութիւն կամ տարբերութիւն կայ «Կոնտրինետ»ի եւ «Կոլոկոլ»ի միջեւ: Այդ կէտի վրայ յատուկ ուշադրութիւն է դարձուում «Կոնտրինետ»ի առաջին իսկ համարում, «Խմբագրութեան կողմից» ձեւակերպուած բացատրական խօսքում: Երկուսն էլ նման են՝ արտասահմանից մայր երկրի կեանքին եռանդով մասնակցելու առաքելութեամբ, ազատութեան գաղափարները արծարծելու եւ տարածելու իմաստով: Բայց նրանք տարբեր են պատմական տարբեր պայմաններում գործելու իրողութեամբ

իսկ: Թէ՛ 19րդ դարի եւ թէ՛ այսօրուայ Ռուսաստանում բռնատիրական կարգերն են իշխում: Բայց այդ բռնատիրութիւններն իրենց ձեւով, ծաւալով, բնոյթով, էութեամբ, համաշխարհային կշռով այնքան են տարբեր, որ անմիջական համեմատութեան եզր անգամ դժուար է դրանել: Գրանից էլ բխում է հին ու նոր բռնատիրութիւնների օրօք գործող վտանգի իսկան հանդէսների պարունակութեան, առաջադրանքների ու առաքելութեան անխուսափելի տարբերութիւնը:

Բայց «Կոլոկոլ»ի եւ «Կոնտրինետ»ի հիմնական տարբերութիւնը այն է, որ առաջինը առաւելապէս քաղաքական–հրապարակախօսական բովանդակութիւն ունէր, իսկ երկրորդը՝ ըստ էութեան գրական հանդէս է: «Կոլոկոլ»ը ազդել է ուսական գրականութեան վրայ, նոյնիսկ որոշ առումով կողմնորոշել դեր կատարել, բայց ինքը առաջնակարգ գրականութիւն չի ստեղծել, այսինքն՝ գրական երկեր չի սպել, աչքի բնկնող դիմադրի ունենալու չափ: Մինչդեռ «Կոնտրինետ»ը առաւելապէս գրականութեանն է նուիրւած: Ի հարկէ, նրա մէջ եւս կայ քաղաքական ու հասարակագիտական հրապարակախօսութիւն, գրականագիտութիւն, արուեստաբանութիւն, վաստագրութիւն, եւ այլն, բայց հիմնական աեղը յատկացւում է արձակ ու չափածոյ դեղարուեստական գրականութեանը: Առայժմ այդպէս է: Հաւանաբար այդ դիւծը շարունակուի նաեւ հետագայում, ու միշտ, քանի որ խմբագրական հանդանակի տղանքն է կազմում: Թերեւս դա այդպէս է, որովհետեւ հանդէսը կեանքի կոչողներն իրենք գրողներ են եւ կապուած են առաւելապէս գրական շրջաններին:

«Կոնտրինետ»ը կոչւում է «Գրական, հասարակական–քաղաքական եւ կրօնական հանդէս»: Գրականի եւ հասարակական–քաղաքականի կողքին նաեւ անպայման կրօնականը յիշատակելն ու շեշտելը նոյնպէս հանդէսի բնորոշ գծերից մէկն է: Այդ պարագան նկատելի է սկզբից ի վեր, առաջին իսկ համարից, որի մէջ ձե-

ւակերպուած էին հանդէսի «նպատակներն ու սկզբունքները»:

Արդ՝ խմբադրութիւնը իր համար առաջ էր քաշուած այդպիսի չորս «նպատակներ ու սկզբունքներ»: Դրանք են. «անպայման կրօնական իդէալիզմը», «անպայման հակաամբողջատիրականութիւնը», «անպայման ժողովրդավարականութիւնը» եւ «անպայման անկուսակցականութիւնը»:

Անկախ այս ամէնից կամ այս ամէնով հանդերձ, եթէ «Կոնտիկնետ»ը լոյս տեսնէր միայն ուսուերէն, ապա, ինչպիսի առաջադրանքների հետ էլ որ կապուած լինէր իր գոյութիւնը, չէր տարբերուի ուսուսական միւս հանդէսներից եւ նրա դերը միակողմանի, «տեղական» կը լինէր: Մինչդեռ հանդէսի մեծազոյն դերը միջազգային է: Այդ են վկայում միւս այլալեզու հրատարակութիւնները եւ ներանց յարուցած արձագանքները: Դրանով էլ դիւրանում են հանդէսի միւս առաջադրանքները, որոնք արատուսական տարրութիւն ունեն:

Արդ՝ «Կոնտիկնետ»ի նպատակն է ո՛չ միայն արատաստմանն ազատ բեմ ծառայել ընդհանուր ազգերի ազատաստճ մտաւորականութեան համար, այլեւ կապող օղակ հանդիսանալ այդ մտաւորականութեան եւ արեւելա-եւրոպական բոլոր ազգերի նոյնպիսի մտաւորականութեան, իսկ աւելի լայն մակարդակով՝ ժողովուրդների միջեւ: Աւելի՛ն. հանդէսի նպատակն է հոգեպէս իրար կապել նաեւ Արեւմտեան ու Արեւելեան Եւրոպայի ժողովուրդներին — որից էլ ծագում է իր անունը — եւ այդ ճանապարհով էլ՝ աշխարհի ըստ հնարաւորին բոլոր ժողովուրդներին: Սա՝ սկզբունքային նպատակն է եւ կարող է իրագործուել միայն աստիճանարար, ըստ հանդամանքների դատաւորման: Իայց այսօր եւ միշտ՝ հանդէսի գործունէութեան հիմնական դաշարը Արեւելեան Եւրոպան է, դրանից բխող անելիքներով:

Խորհրդային երկրի ազատաստճ հատարականութեանը բաղմատտիճան մե-

կուսացումից դուրս հոնելու եւ աշխարհին կապելու ճանապարհը անցնում է առաջին հերթին արեւելա-եւրոպական երկրներով: Ահա թէ ինչու «Կոնտիկնետ»ը նախաձեռնուեց ու իրագործուեց նաեւ արեւելա-եւրոպական ազգերի վտարանգի որոշակի խաւերի, մտաւոր եռանգուն ուժերի համամտութեամբ ու ջանքով: Արեւմտեան Եւրոպայում այդ ազգերի լեզուներով սրու ժամանակից ի վեր, ամէն կարգի պարբերական հրատարակութիւնների շարքում, լոյս են տեսնում եւ գրական-հասարակական ներկայանալի հանդէսներ: Իայց դրանք, իրբեւ կանոն, մնում են նեղ, աղբային շքրջանակում եւ հարկ եղած չափով միջազգային արձագանդ չեն դտնում: Այժմ, «Կոնտիկնետ»ի հետ այս կամ այն ձեւով գործակցելով, կամ համաձայնութեան դալով, նրանք կարող են իրենց գործունէութիւնն աւելի արժեցնել եւ համաեւրոպական ձեռնարկների ձայնակցել:

Արեւմտեան Եւրոպայում արեւելա-եւրոպական ազգերի լեզուներով լոյս տեսնող հանդէսների շարքում առաջին տեղն է բռնում, անկասկած, լեհական «Կուլտուրա»ն («Մշակոյթ»): 1947 թըւից ի վեր անընդհատ լոյս է տեսնում Փարիզում եւ արժմ ունի 7 հազար ազաքանակ: Ամսադրին աղբթեր, 1953ից սկսած, հրատարակում են «Պատմական տետրակներ»ը («Ձեշխտի հիտտրիչնէ»), որտեղ տպւում են փաստաթղթեր ու հետադօտութիւններ՝ Լեհաստանի նորագոյն պատմութեան վերաբերեալ: Իայց այդ, գոյութիւն ունի «Կուլտուրա»յի դրագարանը, որի մասենաշարով մինչեւ հիմա տպուել են աւելի քան 275 դրքեր, լեհական հայրենիքում եւ դրսում ազրող լեհ գրողների երկերից: Հանդէսն իր հրատարակութիւններով, որքան յայտնի է, մեծ դեր է խաղում լեհական կեանքում:

Նոյնպէս Փարիզում հրատարակւում է չեխոսլովակեան «Սվիդեցտվի» («Վկայութիւններ») եռամսեայ հանդէսը: Գոյութիւն ունեն հուգարերէն «Իրողալմի ուշագ» («Գրական հանդէս») եւ բուլղա-

բերէն «Ֆրդեշէ» («Ապագայ») հանդէսները: Անուրանայի է դրանց եւ նման պարբերականների կատարած ազդային գերը: Բայց այսօր եւս, ինչպէս միշտ, ազդային մշակույթի շահերը, պաշտպանելու եւ արձագանգ գտնելու համար, կարիք ունեն իսկական միջազգային կապերի ու համադորձակցութեան: Եւ ահա «Կոմսոխնետ»ը ջանում է համաձայնութեան հիմքեր մշակել յիշեալ կամ այլ գրական հանդէսների հետ՝ խորհրդային ու արեւելք-եւրոպական ազգերի մշակույթների փոխադարձ ճանաչման ու մերձեցման, զարգացման ու հասարակական դործօն դարձնելու համար: Հենց միայն այն իրողութիւնը, որ «Կոմսոխնետ»ը հետեւողականօրէն նիւթեր ու տեղեկութիւններ է տպում եւ դրեթէ աշխարհով մէկ տարածում՝ արեւելք-եւրոպական երկրների հասարակական ու մշակութային կացութեան մասին, քիչ բան չի նշանակում: Այսպէս, օրինակ, հանդէսի ընթերցողն ի միջի այլոց իմանում է, որ Չեխոսլովակիայում դոյութիւն ունի ինքնահրատարակչութեան մի ինքնատիպ ձեւ՝ «Պետլիցէ» (չեխերէն՝ «կախովի կողպէֆի կախողակ») անունով եւ որ հենց միայն սկզբից՝ 1973ից մինչև 1975ի ամառը այդ եղանակով լոյս են տեսել 46 ձեռագիր դրքեր: Կամ իմանում է, թէ Լեհաստանում ինչ սկզբունքներով է դործում իրաւապաշտպանական շարժումը, Սլովակիայում ինչպէս է իրողործում հակաիրօնական քաղաքականութիւնը: Եւ այլն: Այդ մասին տեղեկութիւններ կարող են հազարել նաեւ, ի հարկէ, սովորական լրագրական ճանապարհով կամ սահմանափակ ապաքանակ ունեցող հրատարակչութիւնների միջոցով: Բայց այդ տեղեկութիւնները միանգամայն այլ կշիռ ու հնչեցութիւն ունեն, երբ արձանագրում ու համաշխարհային հասարակայնութեան դիտակցութեանն են հասցւում համակարգուած ու նպատակաւոր ձեւով, հարցի էական կողմերի հիմնաւոր լուսարանման սկզբունքով:

«Կոմսոխնետ» հանդէսի դործունէութեան

թեան ծանրութեան կենտրոնը, բնակատարար, խորհրդային իրականութիւնն է: Այդ իրականութիւնից ելած մարդիկ են ստեղծում ամառային ամբողջութեամբ, այդ իրականութեան մէջ ապրած ու աղբորդ մարդիկ են նիւթեր տրամադրում հրատարակման համար: Նրանց կարողութիւնները, ձգտումներն ու նախասիրութիւնները իրենց դործն են դնում հանդէսի բովանդակութեան վրայ:

Հանդէսի դործունէութեան վրայ իր դործն է դնում եւ գլխաւոր խմբագրի անձնաւորութիւնը: Այս կէտը շեշտելը տեղին է մանաւանդ նրա համար, որ հանդէսի գոյութիւնը առաջին հերթին նրա դադափորն է, յղացումը, նրա նախաձեռնութեան արդիւնք: Վլադիմիր Մարքիմովը քանիցս յայտարարել է, որ Խորհրդային Միութիւնից 1974ի սկզբին դուրս է եկել՝ մի ինքնատիպ գրական հանդէս հրատարակելու սեւեռուն մըտքով: Ի հարկէ, ամենալու դադափարը եւ իրողործուելու համար նիւթական, գրամական միջոցների կարիք ունի, որոնք Մարքիմովը չունէր եւ չէր էլ կարող ունենալ: Բայց նրա նպատակասլացութեան, ձեռնբեղցութեան եւ յամառ ջանքերի շնորհիւ հնարաւոր եղաւ շարժման մէջ դնել տրամադրելի միջոցները եւ, ինչ որ ամէնից կարեւորն է, դրանք կարճ ժամանակի մէջ արդիւնաւորել՝ գրական, դադափորական ու հասարակական մակարդակներով:

Ահա թէ ինչու, թէեւ այս յօդուածի կենտրոնական նպատակը «Կոմսոխնետ» հանդէսի դերի բացայայտումն է, աւելորդ չեմ համարում ներկայացնել նաեւ Մարքիմովի կեանքի ու գործունէութեան հիմնական կողմերը: Թէ՛ նրա համար, որ նա «Կոմսոխնետ»ի բովանդակային գոյութիւնը երաշխաւորող գլխաւոր խմբագիրն է եւ թէ՛ որովհետեւ նրա կեանքն ինքնին մի յատկանշական պարագայ է առանձին վերցրած:

Վլադիմիր Եմելեանովիչ Մարքիմովը (բուն անունով՝ Լեւ Ալեքսեւիչ Սամսոնովը) ծնուել է 1932 թ. Դեկտեմբերի 9ին, Մոսկուայում, գիւղացիական դեր-



ՎԼԱՏՈՒՄԻՐ ՄԱՔՍԻՄՈՎ

դաստանից ելած բանուորի ընտանիքում: Մէկ տարեկանից որբ էր, որովհետեւ հայրը ձերբակալուեց 1933ին: Անկանոն ու անուրախ մանկութեան հետեւանք սէտք է համարել այն, որ 13-18 տարեկան հասակում, 1945-50 թուականներին, Մաքսիմովը դառնուել է ուղղիչ տներում եւ անչափահաս յանցագործների համար սահմանուած վայրերում: «Յանցագործութիւնն», անշուշտ, աղեղ է հնչում, բայց զա յատուկ իմաստ ունի խորհրդային երկրում պարբերաբար զոյացած անհամար որբերի բանակների պարադայում:

Ազատուելուց յետոյ Մաքսիմովը մի քանի տարի աշխատել է խորհրդային երկրի տարբեր վայրերում՝ կոլտնտեսութիւններում եւ շինարարական կառոյցներում: 1952ին Հիւսիսային Կովկասում՝ Կուրանի թերթերից մէկում սկսեց իր գրական գործունէութիւնը՝ բանաստեղ-

ծութիւններով: Քնարական ստեղծագործութիւնների առաջին ժողովածուն, որը 1954ին շարուած էր սպարանում, կուսակցական մարմինների ցուցումով ոչընչացուեց: Երկրորդ փորձը՝ «Սերունդը ժամապահ» («Պակուլենիէ նա չասախ») 1956ին մեծ արձագանդ չդուստ: Այնուհետեւ Մաքսիմովը տեղափոխուեց Մուկուա, զբաղուելով պատահական գրական աշխատանքներով, մինչեւ որ արժանացաւ մեծանուն դրող Կոնստանտին Պատուտովսկու բարեացակամ ուշադրութեանը, որը 1961ին իր «Տարուսեան էջեր» ադատախոհական ժողովածուում գետեցեց նրա «Մեմբ բնակելի եմբ դարձրնում երկիրը» («Մի օրժիվաէմ գեմլիւ») վիպակը: Աւելի ուշադրութեան արժանացաւ 1962ին «Օկտեաբր» ամսագրում տպուած «Ողջ է մարդը» («Ժիվ չելովեկ») երկը, որը 1965ին թատերականացուեց եւ յաջողութիւն վայելեց:

Մաքսիմովը 1963 թուից խորհրդային դրողների միութեան անդամ էր: Այնուհետեւ «Օկտեաբր» ամսագրում հրատարակեց մի թատերգութիւն (1964 թ.) ու պատմուածքներ (1964 եւ 1967 թ.թ.), իսկ 1967ի Հոկտեմբերից մինչեւ 1968ի Օգոստոսը նոյնիսկ այդ ամսագրի խմբագրական մարմնի անդամ էր: Նրա «Արարչուրեան եօթ օրերը» («Սեմ դնէյ տորեմիա») վերնագրով առաջին վէպը (1971 թ.) անկարելի եղաւ հրատարակել խորհրդային երկրում, խորհրդային իրականութեան անսքող ու անողոք պատկերման եւ, դրան գումարած, քրիստոնէական միտումներ արտայայտելու պատճառով: Երբ այդ երկը արտասահմանում տպուեց ռուսերէն եւ այլալեզու թարգմանութիւններով ու խորապէս դրնահատուեց, իսկ նոյն հեղինակի երկրորդ վէպը՝ «Կարանտինը» (1973 թ.) տարածուեց ինքնահրատարակչութեան ճանապարհով, — 1973ի Յուլիոսի 26ին Մաքսիմովը հեռացուեց դրողների միութիւնից: Համաշխարհային հասարակայնութեան համապատասխան բողոքների շնորհիւ, Մաքսիմովը, որ երկու անգամ բռնութեամբ «հոգեբուժարան» էր ու-

ղարկուել, կարողացաւ արտասահման անցնել 1974 թուականի Փետրուարի վերջին եւ ապա իրաւործել իր երազը դրական հանդէսի կապակցութեամբ: Գրողի երրորդ վէպը՝ «Հրաժեշտ ոչ մի տեղից» («Պրոշչանիէ իգ նիտսկուդա») դրուել է մասամբ Մոսկուայում, մասամբ էլ Փարիզում:

Մաքսիմովի երկերում ներկայացւում են կեանքի հարուածներին ենթարկւած դեռահաս ու չափահաս մարդիկ: Ներկայացուած են նաեւ բուն աշխատւորութեան իսկական ներկայացուցիչներ, որոնք կործանման են դատապարտւում կոմունիստական իշխանութեան ներքոյ, սերնդէ-սերունդ, մի խօսքով՝ խաբւած ու շահագործուող պրոլետարիատն է խօսում նրա որոշ երկերում: Մաքսիմովի համար յատկանշական է եւ կեանքի քրիստոնէական ըմբռնումը, քրիստոնէական պատուիրաններին փարուելու խոր ձգտումը: Ընդունուած է համարել, թէ նա դտնւում է Գոստոյեւսկու ազդեցութեան տակ: Ընդունուած է կարծել նաեւ, որ Մաքսիմովի երկերի ուժն ու հմայքը պայմանաւորուած է ո՛չ թէ հեղինակի գրական վարպետութեամբ, այլ նրա հարուստ կենսափորձով, անկեղծութեամբ եւ հանրային ու դադափարական պատասխանատուութեան բարձր զգացումով:

«Կոնտիմենտ» հանդէսում հրատարակ եկող հեղինակները նոյն իրականութեան ծնունդ են, որից բխել է եւ գլխաւոր խմբադիրը, նրա սերնդակիցները կամ աւագ ու կրտսեր գրչակիցները: Նրանք ունեն տարիքային ու գրական փորձի տարբեր մակարդակներ, գրելաձևեր, բայց բախտակից են, որովհետեւ ճաշակել են նոյն իրականութեան պատճառած դառնութիւնները, զրկանքներ կրել նոյն պատճառներով ու այժմ հանդիպում են մի նոր յարկի տակ:

Արձակագիրներին ու բանաստեղծներին ոմանք խորհրդային երկրում արդէն յայտնի դէմքեր էին, նոյնիսկ պարզեւի արժանացածներ: Ուրիշները, թէեւ այնտեղ են սկսել իրենց դործունէութիւնը,

հիմա՛ են գիմագիծ ձեռք բերում ու ամբանում: Իսկ աւելի շատերը նոր են ապարէզ մտնում, իրական կամ կեղծ ստորագրութիւններով: Հանդէսի հեղինակական կազմը մշտական լրացման ու թարմացման ընթացքի մէջ է գտնւում, բայց այժմ իսկ կարելի է տեսնել, որ հանդէսի գիմագիծը որոշում են ներկայանալի պրոզները:

«Կոնտիմենտ»ի մինչայժմեան համարներում կարելի է հանդիպել այնպիսի արձակագիրներին անունների, ինչպիսիք են՝ Ալեքսանդր Սոլժենիցինը, Վլադիմիր Մաքսիմովը, Վիկտոր Նեկրասովը, Վլադիմիր Վոյնովիչը, Անատոլի Գլազլինը, Վասիլի Գրոսմանը, Վլադիմիր Կոռնիլովը, Վլադիմիր Մարամզինը: Բանաստեղծների շարքում աչքի է ընկնում Իոսիֆ Բրոդսկին: Մինչեւ իր մահը շարունակում էր գրել Ալեքսանդր Դալլը: Նաում Կորժալինը, չափածոյ ստեղծագործութիւններից բացի, հանդէս է դալիս եւ գրականագիտական ուսումնասիրութիւններով: Ներկայ է նաեւ բանաստեղծ ու թարգմանիչ Վասիլի Բետակին: Բետակին Խորհրդային Միութեան մէջ գտնուած ժամանակ զգալի թւով թարգմանութիւններ է կատարել հայաստանեան բանաստեղծութիւնից ու նոյնիսկ քրդականից:

Օրանք առաւել աչքի ընկնող անուններն են, բազմաթիւ ուրիշների շարքում: Կան նաեւ «տարագիրների երկրորդ սերնդի»՝ Երկրորդ Աշխարհամարտի հետեւանքով արտասահման ընկած հեղինակները: Կան նաեւ արեւելա-եւրոպական զանազան երկրների գրական ներկայացուցիչներ, անուանի կամ դեռ ոչ անւանի, որոնք լրացնում են «Կոնտիմենտ»ի գրական համայնապատկերը:

«Կոնտիմենտ»ում զգալի տեղ է բռնում եւ հրատարակախօսութիւնը՝ պատմական կամ ընթացիկ իրադարձութիւնների կապակցութեամբ: Զետեղում են բանավիճակային կարգի յօդուածներ՝ մաքերի փոխանակութեան կարգով: Հետեւողականօրէն կազմակերպւում են հարցազրոյցներ՝ աչքի ընկնող անձնաւորու-

թիւնները հետ : Հրապարակում են փաստաթղթային նիւթեր եւ պատմական հանդուցային դէպքերի վերաբերեալ կիսողեղարուեստական կամ հրապարակաթուական հետազոտութիւններ : Նկատելի տեղ է բռնում գրախօսականների բաժինը : Կցում են նաեւ յաւելումական հրատապ նիւթեր ու վկայութիւններ :

Հրապարակախօսական, գրականագիտական, արուեստաբանական բնօթ կրող յօդուածները հեղինակների շարքում տեղին է յիշել Միխայիլ Ազուրբակու, Իզոր Դոլմաշտի, Դորոգորի Պոմբրանցի, Աբրամ Տերցի (Անդրէյ Սինեաւսկու), Անդրէյ Ամալրիկի, Յֆիմ Էտկինդի անունները, որոնք նոյնպէս խորհրդային երկրից նոր ելած հեղինակներ են :

«Կոնտիկնետ»ում առանձնապատուկ նշանակութիւն ունեն «Արբիւրներ» խորագրով բաժնի կամ յարակից յուշագրական եւ փաստագրական նիւթերը : Այնտեղ սպարուէլ են, օրինակ, հունգար հոգեւորական կարգինալ Մինցենու եւ չեխ հանրային գործիչ Յոգեֆ Սմրկովսկու յուշերը : Ռուսաստանի նորագոյն պատմութեան վերաբերեալ կարելի է կարգաւ անմիջական վկայութիւններ 1921 թուի Կրոնշտադտի ապստամբութեան հանդամանքների մասին, 1923-25 թուականներին Ստալինի անձնական ու նաեւ միաժամանակ Քաղբիւրոյի քարտուղար եղած Իորիս Բաժանովի յուշերից հատուածներ, եւայն : Յատուկ հետաքրքրութիւն է ներկայացնում Սոլժենիցինի դատած ու հանդէսի խմբագրութեանը տրամագրուած գրքոյից, որը տպուէլ է 1918 թուին Պետրոգրադում (այժմեան Լենինգրադում) եւ իրենից ներկայացնում է «Պետրոգրադ քաղաքի ֆարքիկաների ու գործարանների լիագործների արտակարգ ժողովի» սղագրական արձանագրութիւնը, որով ինքնաբերաբար հերքում են մի շարք ընթացիկ

ատուագրեր, այդ օրերի կացութեան վերաբերեալ, որոնք չըջանառութեան մէջ են դրուէլ կոմունիստական իշխանութիւնների կողմից : Ուշագրաւ են նրմանապէս անվրայի նիկոլաս Բեաւիլի պատրաստած ուսումնասիրութիւնները՝ 1944-47 թուականներին Արեւմուտքում գտնուած խորհրդային ռազմաղերիններին բռնութեամբ խորհրդային իշխանութիւններին յանձնելու վերաբերեալ, ինչպէս եւ, մի այլ բաժնի մէջ, 1940 թուի լեհ սպաների սպանդի՝ Կառլինեան ողբերգութեան վերաբերեալ : Այդ խմաստով, իր տեսակի յայտնագործութիւն կարելի է համարել եւ ուկրաինացի գրող ու շարժանկարային գործիչ Գեղի Սնեդիրեւի «Մայրի՛կ իմ, մայրի՛կ...» վերնագրով ընդարձակ «քնարա-հրապարակախօսական հետազոտութիւնը», շատ տասնամեակներ առաջ ուկրաինական հայրենասէրների նկատմամբ սարքուած մի խորհրդային դատաւարութեան մասին :

Իբրեւ եզրակացութիւն, կարելի է յիշել ու կրկնել մինչեւ հիմա ասուածը «Կոնտիկնետ»ի պատմական առաքելութեան ու գերի մասին : Հանդէսը ո՛չ միայն անկախ ու ազատ բեմ է խորհրդային երկրում գործունէութեան պատշաճ առարկէց չունեցող եւ հալածուող գրողների ու մտաւորականների համար, այլեւ խորհրդային երկրի ազգերին մշակութային, հասարակական ու բարոյական մեկուսացումից հանելու գործօն, նրանց արեւելա-եւրոպական, արեւմտա-եւրոպական եւ միւս ազգերին հոգեպէս հաղորդակից դարձնելու ազգակ, միաւորող ուժ : Հանդէսի սկզբնաւորումից մինչեւ հիմա անցած երեք տարիները իրաւունք են տալիս խօսելու նրա նկատելի յաջողութիւնների ու ամբապնդման մասին : Մնացեալը կը տեսնենք կամ կը տեսնուի հետագայում :

Լ. ՄԿՐՏՁԵԱՆ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ի Տ Ե Ա Ն

ԱՐԴԻ ԳՐԱՎԱՆՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՀԱՐՑԱԳՐԷ ԼԵԶՈՒԻՆ ԵՒ
ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Որպէսզի թիւրիմացութեան տեղի չտանք, Քրտներէն langage եւ langue բառերը պիտի փոխարինենք հայերէն լեզու եւ բարբառ բառերով:

Լեզուն նշաննեթու գրութիւն մըն է, որ կը ծառայէ արտայայտելու միտք մը կամ գաղափար մը: Այս իմաստով կայ գոյներու լեզուն, բոյրերու լեզուն, աստղերու լեզուն, խուլ-համբերու լեզուն: Իսկ բարբառը ձայնային գրութիւն մըն է, որ կը ծառայէ իբր հազորդակցութեան միջոց մարդկային որոշ զանգուածի մը: Բարբառը կարելի է նաեւ փոխանցել գրաւոր նշաններով:

Սակայն հարց է, թէ այդ լեզուն որքանով կը կատարէ իր պաշտօնը եւ ի՞նչ ճշգրտութեամբ կը թարգմանէ մեր գրացումները եւ գաղափարները:

Կարգ մը փիլիսոփաներ կ'ըսեն, որ լեզուն կամ բառը գոյութիւն ունէր գաղափարէն առաջ, ինչ որ արամարանական չէ: Ըստ ուրիշներու, լեզուն ծնած է գաղափարէն: Ըստ լեզուաբաններու լեզուին կազմութիւնը անցած է երեք հանգրուաններէ:

Առաջին հանգրուանին, նախամարդը, որուն ներկայ տիպարը մանուկն է, տարկայ մը կամ կենդանի մը անուանելու համար բառի վերածած է անոնց արտաբերած ձայնը: Եւ այսօր իսկ գոյութիւն ունին այդպիսի նմանաձայնութիւններ բոլոր բարբառներու մէջ, — սուլել, Քշշալ, սոնալ, որոտայ, եւայլն:

Երկրորդ հանգրուանին բառեր ստեղծուած են գործողութեան մը ընկերանալու կամ գործողութիւն մը կանխելու համար. օրինակի համար, սպայի մը արձակած հրամանները:

Երրորդ հանգրուանին բառերու ծնունդը եղած է արուեստական եւ լեզուն դարձած է անկախ եւ գործածուած է իբրեւ վերացական բաներ արտայայտելու միջոց:

Ուրեմն կրնանք հաստատել, որ լեզուն ծնած է միտքէն եւ ոչ թէ միտքը լեզուէն, զանէ սկզբնական շրջաններուն:

Հարցը կը փոխուի, եթէ նկատի առնենք քաղաքակրթուած ընկերութիւն մը: Այս պարագային կրնանք ըսել, որ լեզուն ծնունդ կու տայ մտքին եւ գաղափարին: Մինչեւ որոշ տարիք մը, մանուկը կը կրկնէ իր լսած բառերը՝ առանց անգրագատնալու անոնց իմաստին: Հետագային այդ բառերը գոյութիւն կու տան իրերու, գրացումներու եւ գաղափարներու: Մեր լսած լեռաքանչիւր նոր բառը կը ստեղծէ նոր առարկայ մը կամ նոր գաղափար մը: Նկատուած է, որ այն մարդիկը, որոնք տարիներով առանձնացած կ'ապրին, հետագային շատ զժուար կ'արտայայտուին եւ կ'առնեն ապուշի երեւոյթ մը: Ուրեմն լեզուն ո՛չ միայն արտայայտութեան միջոց է, այլեւ վերաշխուժա-

դընող եւ ստեղծադործող ուժ: Այս տեսակէտէն կրնանք ըսել, որ նոր դրահանութիւնը լեզուին կու տայ ա՛յն արժէքը, որ ունէր Աստուածաշունչի էջերուն մէջ. Ի սկզբանէ էր Բանը եւ Բանը ստեղծեց աշխարհը:

Համաշխարհային Երկրորդ պատերազմի աւարտէն ի վեր, դրահանութիւնը տաղնապի մէջ է, այն իմաստով, որ ո՛չ միայն կը հարցադրուին դրահան աւանդական ձեւերը, այլեւ՝ դրահանութեան իսկ սկզբունքը:

Գրահանութիւնը ունի իր պատմական տիպիկտիկան, որ սեղմումներու եւ ազատագրումներու իրարայայտող շղթայ մըն է:

Դարերու ընթացքին, մարդիկ արձանագրած են իրենց երազները եւ պատրանքները, իրենց արարքներն ու խղճերը, ջանալով իրահանութիւնը պատկերացնել հարապատօրէն: Երկու հազար տարի շարունակ, Արիստոտելէն մինչեւ ԺՄ. դարու կէսերը, դրահանութիւնը կը նկատուէր մոզական արարք մը, որ բառերու ճարտար շարահիւսութեամբ մը ընթերցողին կը հայթայթէր աստուածներու եւ անձանթիւն հետ հաղորդակցելու միջոցը. դրահանութիւնը էր նաեւ հեղինակին եւ մարդոց միջեւ հաղորդակցութեան միջոց մը, նաեւ ինքնայայտութիւն մը, երբ հեղինակը իր ընտրած բառերուն եւ ստեղծած նախադասութիւններուն եւ պատկերներուն մէջէն կը ծանօթանար իր իսկ ինքնութեան, իր մզձաւանջներուն, տառապանքին, հաճոյքներուն: Գրուած էջը երեւան կը հանէր մարդ արարածին երկուութիւնը, որ շօշափելի նշաններու մեկնաբանութեամբ կը ստեղծէր երեւակայական աշխարհ մը:

Սահմանափակուած հոետորական կանոններու մէջ, որոնք օրինակուած են ընութեան անյեղի ներդաշնակութեան վրայ, որ ըստ Արիստոտելի համայնական է եւ կատարեալ, այսինքն՝ համամարդկային, դրահանութիւնը, լեզուն եւ բառերը ձուլուած էին կաղապարներու մէջ, որոնց նշանակութիւնը նոյնը չէր հեղինակին եւ ընթերցողին համար: Այսինքն՝ հեղինակը եւ ընթերցողը նոյն ձեւով չէին պատկերացներ բառերուն ու նախադասութիւններուն արտայայտած պաշարները: Մէկ խօսքով՝ դրահանութիւնը դրելու դործողութիւնը չէր միայն, այլ ճառ մը, նկարագրութիւն մը, յորդոր մը կամ քնարեբանութիւն մը:

ԺԹ. դարու կէսերուն դրահանութիւնը արդէն բոլորած է կեանքը եւ տիեզերքը վերարտադրելու իր շրջանը: Աշխարհ մը ստեղծելու եւ բացատրելու իր դադարիարին կը յաջորդէ մոզական աշխարհին մասնակցելու մղում մը: Բանաստեղծը այլեւս չէ նախկին յտակատես եւ տրամաբանող արարածը, այլ՝ դինովցած քուրմ մը, որ կը մասնակցի խորհրդաւոր արարողութիւններու: Այս շարժումին պիտաւոր ներկայացուցիչները կը կոչուին Հէօլտէրլին, Լօթրէամոն, Ռեմպօ եւ Մալարմէ:

Հետտորութեան աւանդական ձեւերը կ'անտեսուին, քերթուածը եւ արձակը կ'եղբայրակցին եւ ծնունդ կ'աննէ նոր դրելածեւ մը: Գրահանութիւնը կը դադրի աշխարհը բացատրելու կամ երգելու իր պաշտօնէն եւ կը դառնայ ինքնաբաւ դործունէութիւն, որուն հում նիւթը լեզուն է, բառերն են՝ իբր դոյլութիւն եւ ո՛չ նշանակութիւն:

Թ. Էս. Իլիոթ հետեւեալ տողերուն մէջ կը բանաձեւէ արդի բանաստեղծին առաքելութիւնը.

«Բանաստեղծը պէտք չէ արտայայտէ իր անձնականութիւնը, այլ՝ իր արուեստին էութիւնը եւ միջոցները: Բանաստեղծը կ'անցնի ներմակ թուղթին առջեւ ո՛չ քէ արտայայտուելու համար, այլ ստեղծելու համար նոր խօսք մը՝ մեկնելով իր ժառանգած լեզուին եւ հետտորութեան տուեալներէն: Բա-

նաստեղծութիւնը սրտի ապագակը չէ, այլ՝ տրամա մը, ձայներու եւ ժես-
քերու կառոյց մը, կեցուածքներու եւ ձեւերու *տիարեկատիկա* մը» :

Գերերապաշտները, որոնք դասականներէն, վիպապաշտներէն, իրա-
պաշտներէն եւ խորհրդապաշտներէն ետք ստեղծեցին գրական համաշխար-
հային վերջին շարժումը, ո՛չ միայն ուղեցին խորտակել լեզուն դարաւոր
պատնէշը, այլեւ իրենց աշաղբուծիւնը կեդրոնացուցին ներաշխարհին տա-
րօրինակութիւններուն եւ անհեթեթութիւններուն վրայ եւ, շարահիւսութեան
բանակին կոնոնաւոր շարքերը խորտակելով՝ բառերը վերածեցին արձակա-
գէններու, որոնց անիշխանական դործունէութիւնը շուարումի եւ զարմանքի
կը մատնէր ընթերցողը :

Գերերապաշտներուն համար գրել կը նշանակէր արտայայտել երազը,
կեղծ կամ իրաւ խելագարութիւնը եւ անաստանի աշխարհին երեւոյթները :
Գերերապաշտ գրադէտին նպատակը չէ արտայայտել տիեզերքին էութիւնը,
այլ փնտռել իր ներաշխարհին խորհրդաւոր դետակին հոտանքը եւ ահլը :

Մակայն գերերապաշտներու կողմէ ազատագրուած լեզուն պիտի շեշ-
տէր իր անկախ գոյութեան իրաւունքը, ինչպէս վերացական (abstrait) նը-
կարչութիւնը հրաժարած էր մրցիլ բնութեան հետ եւ գոյները, ձեւերը եւ
դիժերը կը մէկտեղէր ըստ կամքի. ինչպէս մանուկները գունաւոր քարերով
խաղեր կը սարքեն մանկապարտէզներու սրահներուն մէջ, գրականութիւնն
ալ առարկաներուն փոխարէն կը զործածէ բառեր եւ կ'ուղէ տիեզերքը գե-
տեղել բառերու մէջ՝ համակարգիչ մեքենայի մը ճշգրտութեամբ եւ անտար-
բերութեամբ :

Ըստ Ծան Ռոքարտուի, «գրի չի նշանակիր փոխանցել նախապէս բաղ-
ւած տեղիութիւն մը, այլ հետախուզել լեզուն իբրեւ ինֆնուրոյն իրականու-
թիւն եւ անջրպետ» :

Ուրեմն լեզուն կը դադրի միջոց մը ըլլալու իր հանգամանքէն եւ կը
դառնայ նպատակ : Ուրիկէ Ռոլան Պարթի այն սահմանումը, սր «գրող կը նը-
կատուի այն մէկը, որ տեղեկութիւններ կը հազորդէ եւ գրագէտ այն մէկը,
որ գրականութիւն կ'ընէ» :

Լեզունն տրուած տեղը, հարկաւ, առաջնակարգ գէր մը կը սահմանէ
լեզուաբանին, որուն համար լեզուն կը վերարտադրէ իրականութիւնը : Լեզ-
ւաբանը գրական գործը կը նկատէ տեսակ մը մեռելաքաղաք, որուն մէջ լեզ-
ւաբանը կը չրջի ուսումնասիրելու համար իւրաքանչիւր բառին դիրքը եւ ուղ-
ղութիւնը՝ միւս բառերուն նկատմամբ, առանց թափանցելու գործին նշա-
նակութեան :

Եւ այս բուրբէն ծնունդ կ'առնէ գրական նոր մօտեցում մը, զոր Քլօտ
Մօրիսը կ'անուանէ հակագրականութիւն, ինչպէս կայ հակաբանաստեղծու-
թիւնը, հակափէպը եւ հակաթատրոնը : Ո՛չ միայն այս շրջանի գրադէտները,
Պեքէթէն մինչեւ Ռոպ-Կրիշէ կը հարցադրեն ու կ'ամբաստանեն ետը, վիպա-
սանը, վէպը, մէկ խօսքով՝ հեղինակը, այլեւ՝ ներշնչումը : Այս հեղինակ-
ները կը մերժեն ստեղծագործ ըլլալու հանգամանքը, որովհետեւ, ըստ Սօ-
սիւրի՝ պոեմը կը ծնի քելադրող բառէ մը, որուն շուրջ ինքնաբերաբար կը
շարունակուին ուրիշ բառեր՝ լեցնելու համար միջոցային պարապը : Ստեղծագոր-
ծութիւնը չի հետեւիր ո՛չ մէկ օրէնքի եւ ոչ մէկ տիպարի, այլ կը դառնայ
անիշխանական : Գրական սեռերու դասաւորումը այլեւս ոչ մէկ իմաստ ու-
նի. վէպը, պոեմը, ուսումնասիրութիւնը կամ թատերադրութիւնը նշանակու-
թենէ զուրկ ասացուածքներ են :

Գրադէտը պէտք է իր սեզանին առջեւ նստի կոյս ներաշխարհով եւ

կոյս մտքով եւ պէտք չէ ազգուի գինք կանխող հեղինակներուն զործերէն : Անդիտութիւնը պէտք է ըլլայ գրադէտին զլիաւոր յատկութիւնը : Նոր վէպի ծանօթ ներկայացուցչներէն Մարկըրիթ Տիւրաս իր «Մոսկաթօ ֆանթապիլէ» զործի յառաջարանին մէջ կը պարծենայ, որ մինչեւ քառասուն տարեկան մնացած էր ագէտ, այսինքն՝ միաքը խճողուած չէր գրական մեծ գործերու յիշատակներով եւ սրտակերներով, շատ քիչ կարգացած էր եւ չուսով մոռցած էր իր կարգացածը : Այս պայմաններու մէջ միայն զործը կրնայ նըկատուիլ մարդու մը անկեղծ արտայայտութիւնը :

Եւ դարմանալին հոն է, որ կ'իրականանայ Լա Պրելէյէրի այն հաստատումը, թէ՛ «Ամէն բան ըսուած է արդէն» : Եւ ինչ որ այսօր մենք կը կարծենք քայարճակ գիււս ու նորարարութիւն, պարզապէս կրկնութիւնն է անցեալին արտայայտուած ճշմարտութիւններուն : Քսաներորդ դարու երկրորդ կէսի գրողները մեզի կ'առաջարկեն իրականութեան նոր լեզուն, որ կապ չունենայ գեղեցկագիտական եւ բարոյական ոչ մէկ աստիճանաչափի հետ, թէ՛ մարդը յարափոխիս զոյուլութիւն մըն է եւ կարելի չէ, որ մեզմէ իւրաքանչիւրը իրաւունք ունենայ խօսելու ընդհանրութեան անունով, թէ՛ իւրաքանչիւր մարդ արարած անջատ աշխարհ մըն է, որ կրնայ խօսիլ իր աշխարհի մասին միայն՝ առանց սահմանութիւններ ընելու ուրիշներու սահմաններէն ներս :

Հիմա տեսնենք, թէ ինչ կ'ըսէ 1400ական թուականներուն ապրած Նիքոլա ար Գուէս անունով անձանօթ մը .

«Մարդ արարածը չի կրնար փնտռել իր բնութեան գուրս եղող կատարելութիւն մը : Ոչ մէկ մարդ արարած կը նմանի ուրիշի մը եւ տարբեր է անոնց զգայարանքը, երեւակայութիւնը, իմացականութիւնը . . . » :

Մարդ արարածին ինքնուրոյնութիւնը հիմը կը հանդիսանայ արդի բանաստեղծութեան եւ գրականութեան, ինչ որ իմանիսք մօտեցում մըն է, թէեւ այս բար կատարութեան փրփուրը կը բերէ խնդրոյ առարկայ գրողներուն շրթներուն վրայ : Բայց եթէ ուշադրութեամբ կարգանք փրփուլէ Լեմպերթօ Պորկիւսի «Իմանիսթ» բառին առած սահմանումը, այն տեսնելը հասկնանք, որ վերագարձած ենք ԺՁ. դարու սկիզբները, որ իւմանիզմի սկիզբարն է . Լեմպերթօ Պորկիւս կը գրէ .

«Իւմանիսթը ան է, որ կ'ուզէ ազատագրուիլ վերացականութեան ազդեցութեան, որ կը յայտնուէր աստուածային շնորհին եւ բնութեան գոյգլուծի տակ եւ կ'ուզէր ազատօրէն ներկայանալ իբր ստեղծագործ կեդրոն եւ աշխարհի շինարար» :

Սակայն տարբերութիւնը այն է, որ ԺՁ. դարու իւմանիսթներուն շարժումը ծնունդ տուաւ հաղորդակցութեան լեզուի մը, մինչդեռ գրականութեան նոր անստեղծները գրականութիւնը կը մզեն անելի :

Այս երեւոյթը Ժորժ Մուսէն կ'որակէ մտաւարական իլլիրդ մը եւ անդրադառնալով բազմաազանգ գրադէտ Մօրլա Պլանչոյի մօտեցումին՝ կը գրէ .

«Հաղորդակցականութեան հանդէպ կատարի ատելութիւն մը : Պլանչօ կը պնդէ, որ մարդիկ պէտք չէ, որ հաղորդակցին իրարու հետ, որովհետեւ այս վարուելակերպը պիտի ֆանդէր իր կտուցած դրութիւնը . դրութիւն մը, որ կտուցած է քերեւս արդարացիելու համար հաղորդակցութեան մարզին մէջ իր կրած ձախողութիւնները, յուսախարութիւնները եւ ակրնկալութիւնները» :

Ուրեմն ըստ նոր անստեղծեան, գրական եւ արուեստի գործ մը պէտք է

ըլլայ կղզիացած, մեկուսացած, ապահուստորական եւ անիշխանական:

Եւ այս բոլորին մէջ ի՞նչ է ընթերցողին կարծիքը: Մօրիս լոպէ հետեւեալ նախադասութեան մէջ կը պատկերացնէ ներկայ գրականութեան վիճակը.

«Վէպը՝ առանց վիպականութեան, պոեմը՝ առանց բանաստեղծութեան, աստուածաբանութիւնը՝ առանց հաւատփի, եւ իւմանիզմ մը, ուրկէ մարդը բացակայ է: Եւ այս պարապութեան մէջ գրականութիւնը կ'ենթարկւի նոր ձեւափոխութեան մը, կը դառնայ գերբնականութիւն մը, բացարձակին գիտութիւնը»:

Պէտք է մոռնալ, որ այս գրականութիւնը կը բաւարարուի եւ կը բաւականանայ սեղմ շրջանակի մը ցուցարեբաժ հետաքրքրութեամբ, բայց անոր հանած ազմուկին արձագանդները կը լեցնեն անհատնում հրատարակութիւններու էջերը: Կացութիւնը է այսօր ա'յն՝ ինչ որ էր ներկայ դարուն սկիզբը, երբ Վալերի կը գրէր.

«Գրականութիւնը կը վիստայ անձերով, որոնք չեն գիտեր իրենց ըսելիքը, բայց կը պնդեն գրելու անհրաժեշտութեան վրայ»:

Այսօր դիրքը դադրած է գաղափարներու եւ գլխացումներու պարունակ մը ըլլալէ եւ գարձած է հոետորութեան մարզադաշտ, ա'յն հոետորութիւնը, որուն անունը չեն ուզեր լսել անոնք, որոնք արուեստը կ'ուզեն վերածել բառախաղի:

Պէտք է կարծել սակայն, որ մեռած է բուն գրականութիւնը, որուն մէջ մարդ արարածը կը փնտռէ իր ճակատագիրը բազատրոդ պատասխաններ եւ ասրբեր կեանքերու եւ աշխարհներու դադանիքը:

Ո՞րն է արդեօք գրականութեան բուն առաքելութիւնը, ա՞յն՝ որ կը շարունակուի երկու հազար տարիներէ ի վեր, թէ այն՝ որ կ'ուզեն պարտադրել մերօրեայ նորարարները, որոնք լեզուն կը նկատեն անոր բազարձակ եւ անփոխարինելի հում նիւթը: Որեւէ շարժում, որեւէ տեսութիւն ի վիճակի չէ փոխելու գրականութեան վարթամ եւ վիթխարի դետը, այլ կրնայ աշխուժացնել անոր հոտանքը եւ նոր երանգ մը խառնել անոր բազմազոյն ջուրերուն:

ՆՈՒՊԱՐ ՉԱՐԽՈՒՏԵԱՆ

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿՔԱՇԼԵԱՆ

ՍԵՐՈՒՄ

Գրական խոր բխումներու սուրճ տուած հոգեկան փոխարարութեան ամօրին մէջ յասկանչական է եղբայրութեան, արութեան եւ սիրոյ երգիչ Մկրտիչ Պէշիկթաշեանի սօրած վէպը, որ լայն կտուի մը վրայ արձանագրուած չէ տակաւին եւ անձանօթ է դարձեալ լայն հասարակութեան:

Որքան ծանօթ է մեզի, Սրբուհի Վահանեանի շուքին եղբարարաբան բանաստեղծին սօրած այդ մեծ արամը նիւթ դարձուց ժայ Յակոբեան, հինգ արարնոց թատերախաղի մը մէջ, «Սիրերգ՝ մերձի մահ» անունով, որուն հինգերորդ արարէն երկու հասուածներ լոյս տեսան «Ալօս»ի յիսուածական թուականներու թիւերուն մէջ, բայց ամբողջութիւնը մնաց անձանօթ:

Մկրտիչ Պէշիկթաշեանի եւ անոր զեղեցկագոյն կատրնէրը ներշնչող Սրբուհի Վահանեանի մասին ամէնէն ստոյգ տեղեկութիւնը Օշականի «Հայ գրականութիւն» հատորին մէջ արձանագրուած կարճատեղ ակնարկն է, ու աւելի հիմնականը բանաստեղծին մահէն ետք անոր բարձին անկ գտնուած «Յետին կառուցներ» բանաստեղծութիւնը, որ էր հրեզնէ իրաւութեամբ կը հանդիսանայ մէկը հայ բանաստեղծութեան գոհարներէն:

Ստորև ընթերցողին ուշադրութեան կը յանձն-



Նենք թէ՛ այդ բանաստեղծութիւնը եւ թէ՛ անոր մասին տուած Օշականի վկայութիւնը:



«Բանաստեղծը սիրահարուած էր իրմէն դաստնող Սրբուհի վահանեան օրիորդին, այն՝ որ յետոյ տիկին Տիւսաբք պիտի ըլլար արեւմտահայ գրականութեան: Օրիորդ վահանեան, Պոլսոյ ազնուական դասակարգէն, օտար կրթութեամբ սնած, յոր արիւմարիանք մը ունեցած էր իր մայրենի լեզուին եւ գրականութեան կանգնէր: Պէշիկթաշեանի ազդեցութեամբ տակ այդ արիւմարիանքը կը վերածուի գորաւոր սիրոյ: Ուսուցչի եւ աշակերտի այս յարաբերութիւնները կը յանգին յուսահատ սիրոյ մը, որմէ անտեղեակ է բոլորովին օրիորդ վահանեան: Օրիորդ վահանեանի նշանուիլը լայն կը բանայ յուսահատութեան դռները Պէշիկթաշեանի հոգիին առջեւ. այդ նշանին խզումը, տարիներ ետքը, ծընունդ կու տայ ուրիշ պատրանքներու, ու այս իրադարձութեանց ընթացքին, բանաստեղծը կը մօտենայ իր մտնուան (օրիորդ վահանեան, բանաստեղծին մահէն յետոյ պիտի ամուսնանար Տիւսաբք փաշայի հետ, որ պալատի նուագախումբին պետն էր): «Յետին հասուցներ»ու այս սողորդ պէտք է ընդունիլ գրական իմաստով մը, այսինքն՝ երեւակայուած ազատութեան մը, կառուցականութեան մը քեյադրանքը իբրեւ:»

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՅԵՏԻՆ ՀԱՌԱՁՆԵՐ

Ինչպէս մէկն օրհասական՝ ցաւերուն իր անկողինէն
 Կը բըսցընէ վերջին ողջոյնն ու կարօտներն՝ արփույն լոյսին,
 Ծովուն, արօտներուն, դաշտավայրին եւ հովիտին,
 Անտառներու ըստուերներուն, ու վըտակին գովութեան,
 Փայլող, հնչող, ու նուագող ու խնդացող բաներուն,
 Նման անոր, իմ ալ ողջոյնն ու կարօտներն հըրատոչոյր
 Կը սըլանան դէպի ինձ, ո՛վ կոյս, թոյլ տուր ինձի վերջին անգամ
 Նայիլ ինձի, պշուպ դէմքիդ, լողալ լոյսին մէջ աչքերուդ,
 Խոսքայներուդ մէջ ծածանիլ, նման անոնց այտերդ ի վար,
 Եւ հեռանալ վերջն անոնցմէ, սրտակըտուր գատուիլ ինձի,
 Ոտներուդ տակ լըքելով պըսակն ալ իմ երջանկութեան՝
 Ընդունեցի գոր ես ինձու ճու ձեռքերդ ու գորովդ,
 Զոր պահեցի սրտիս կրակով, աչքիս ցողովն ոռոգեցի .
 Եւ որ հիմա՝ թափու՛ր՝ գեղէն, լուսափըթիթ իր թերթերէն :
 Ա՛ն . . . ինչպէ՛ք էր ընծան : Տե՛ս ինձի տուա՞ծդ է անիկա :
 Կը հեռանամ ինձի, ու դուն չես տար նայուածքդ ինձի յուզակ,
 Տեսնել թէ ո՛ր ան կը դիմէ, որք ու պանդուխտ ու դակիսաւթ .
 Կ՛երթամ ինձի, ու դուն գըլուխդ աղանակերպ շարժելով
 Զես արձակեր իմ ետեւէս վուվուդ թէ «ո՛ր՝ ով թշուառիկ» :

.

Լսէ, Հրանոյշ, բարձր անկեր՝ խաւար թելով սեւ նիւաղներ,
 Պարբայեցիին շուրջը լուսնին, ու լըտութիւնն աներերուն
 Տուաւ տեղի հոծ խաւարին . հողապատեան կայանս էր ցուրտ .
 Ու թօթուելով հողը շիրմիս, եկայ փնտտել ինձ, Հրանոյշ .
 Զի ո՛չ մահուան երեսը ժանտ, ոչ գերեզմանն անդնդափոս,
 Վեց չկրցան կորգել երբեք տաճուկ գրկէն իմ հոգիին . . .
 Յաւիտեանին խորքերն իսկ ոչ զիս գատեցին երբեք ինձի :
 Թըռաւ արեւն իմ օրերուս, գարնուած ինկայ երիտասարդ :
 Այլ ունէի պինդ սէրը քու, հետս էր քու սէրդ երբ իջուցին
 Զիս մուք աշխարհն ստուերներու, մոռացութեան, աղջամուղջի .
 Ըսէ՛, Հրանոյշ . ինչո՞ւ չես տար նըստ գայնին իմ պատասխան .
 Կեանքանի չեմ : Ինչո՞ւ փակել աչքերդ զիս չըտեսնելու .
 Կեանքանի չեմ : Ինչո՞ւ խոժոռ կը դարձնես դէմքդ անդին :
 Զեմ եկեր գիշերազբօս ձեր գգուանքին դնել կրնիմ,
 Ոչ ալ համայն գորութեամբք մեռելութեան եւ դամբանին,
 Անբաւութեան փոխան սիրոյս, ինձ քու սէրը պահանջել :
 Ինչ որ ողջոցս գըլացար ինձ, շնորհե՞ս պիտի իմ մեռելիս . . .
 Լսէ՛, Հրանոյշ, կու գամ հարցնել .— ալ գո՞հ ես դուն եւ երջանիկ .

Բոցատերեւ եռանդն ու խանդը կը ծաղկի՞ն դեռ քու դէմքին .
 Խնծիդ, գուարքուքիւն, կը փայլակե՞ն դեռ քու դէմքին .
 Ինձ դիպելէ գերծ քու աչքեր կը շողշողա՞ն աւելի ջինջ .
 Տերեւիկն ալ չորաբեկ յիշատակիս քու սրտիկէդ
 Վանեցի՛ր դուն որպէսզի մուտք տաս անարգել ու ընդարձակ
 Նոր իզմերու որ քեզ եկան համբաներէն գերեզմանիս . . .
 Անհամբեր ցատկեցի՞ր դուն, անկէ վագել ծոցն ուրիշին .
 Ու կենդանի, մոռցա՞ր դուն գայն որ մահուան մէջն իսկ կ'յիշէ քեզ :
 Այո՛, Հրանոյշ, քեզ կը յիշեմ, հոգիս սիրովդ է խարուկուած,
 Սէրը պատեց գայն քեւերուն անմահութեան իր ներքեւ .
 Ձի հանդարտիք մշտատոչոր բոցին ահեղ բռնութեանէն .
 Արագագոյն աստղերը քան ու սայլը քան հրաշէկ գնդին,
 Ան կ'արշաւէ անուրտ ասպարէզէն տիեզերքին,
 Իր սրլացքին մէջ աւելի բոցն այն վառուած կը բորբոքի :
 Այո՛, Հրանոյշ, քեզ կը յիշեմ, ու հետը մօրս ուրուականին,
 Կը խօսիմ միշտ քու վրայով . կ'ըսեմ իրեն աստնք ամէնն .
 «Ներէ՛ ինձ, մա՛յր, որ որբացած քեզմէ՛ կրցայ ես դեռ ապրիլ,
 Բայց գերեզման ինկար արեւս երբ մընացի որբ ես իրմէ . . .
 Ըսմանչեւի, կոյսն այն էր մա՛յր, «Բան զամենայն ըսքանչեւիս»,
 Ինչ որ երկինք ու բռնութիւն ունին զարդեր ու լոյս ու գեղ,
 Ամփոփ կային բիբին, դէմքին .— կը ցոլային անկէ ինծի :
 Մագն ու շրթները ունէին մեզը, սրտի բոլոր խոց-վէրքերուն .
 Կարծես քէ, մա՛յր, անդարձ ինձմէ հըրածեշտի քու վայրկեանին,
 Դուն խնդրեցիր երկինքէն, զրկել ինծի ամէնէն
 Տարփելի ու գգուելի ու մանկագոյնն ու զըւարթունն
 Որ ըլլար փոխան քըրոջ, փոխան մօրկանս ու սիրտանքի . . .
 Սիրոյ հրեշտակ ես կարծեցի, մա՛յր, հրեշտակ էր ան մահուան» :

Մ . ՊԵՇԵԿԹԱՇԼԵԱՆ

Թարգմ . զրաբարէ

Յ . ՕՇԱԿԱՆ



ՍԿՍՈՂ ԵՒ ՎԵՐՍԿՍՈՂ

ՄԱՐՄԻՆ ԵՒ ԱՐԻՒՆ
(Կարո Արմենեան)

Եթէ ընդունինք, որ բանաստեղծի մը յաջորդական երկերը միամբողջութեան մը կը ձգտին, ապա՝ Կարո Արմենեանի վերջերս լոյս տեսած «Մարմին եւ արիւն»ը շարունակութիւնն է «Անկան»ի մտտեղանշարով 1970ին հրատարակ ելած իր «Մարմին եւ արիւն»ին: Այսքան բնորոշ. ո՛չ տարբեր խորագիր, ո՛չ՝ հատոր երկրորդ: Տեղ մը Լուի Չուքովսկի կ'ըսէ. «Մեմֆ մեր բովանդակ կեանքի ընթացքին մէկ բանաստեղծութիւն կը գրեմք»: Մէկ շարունակական գրութիւն, չընդհատուող դործողութիւն մը: Բանաստեղծութեան դոյաթիւնը ստորեայ կեանքին մէջ, կեանքի անջատ իրողութիւնները կը փորձէ տալ լեզուին: Եւ բանաստեղծութիւնը կը դառնայ մաս մը աշխարհէն, որովհետեւ բանաստեղծը ինքը, ամէնուն հետ, աշխարհն է, այսինքն՝ մարմինը. եւ իր քերթողութիւնը՝ զէպքը, այսինքն՝ արիւնը:

Անհրաժեշտ է տալ բանաստեղծին ստանձնանքնորումը սրտելու, թէ ի՛նչ հող կ'ուզէ մշակել. Արմենեան յաջողապէս կը մշակէ մարմինը եւ արիւնը: Հոս կան տարբեր, որ ընթացիկ հայ բանաստեղծութիւնը չի տար: Նախ՝ արեւմտահայերէնի ճշգրտութիւն եւ ճոխութիւն, ապա՝ մտածում, ներթափանցում յստակութեան հետ, անհարկի կէտադրութեան եւ գլխադիրներու զանցում: Տիրապետումը՝ ոճին, պոռթկուն հակադրումին, թերատակերս սողերուն, ինքնաձեւ եւ անթերիօրէն կըտութաւոր խօսքին, զիչ մըն ալ մտրդարէական աղաբարութեան: Մեր բանաստեղծութեան մէջ չկար մարմինը իրբեւ ամբողջութիւն. ան պարզապէս սրտի անօթ, կամ ուղեղ, կամ սեռային դործարան պարփակող պարունակ մըն էր. հոս մարմինը իր լինելութեան հոլովոյթը կ'ապրի՝ Նկատուելի է իր լեզուն. Արմենեան զուրս է բեղմնավոր զարձած բառերէն, որոնք սիւղապանծ կը բազմին մեր թերթերու եւ դիրքերու չսակարկող էջերուն մէջ, Գարնեանի օրերէն ի վեր: Ան իր սեփական բառամթերքը ունի եւ սողերու իր ոչ-աժան երաժըշտականութիւնը:

Քերթողապիրքը բանաստեղծութիւն մըն է

ստանձաններու եւ խորութեան, խորապէս սովորականին: Կը սկսի հարցով մը, դոյաթեան անբուժելիութեան հարցով, «Ինքն իր գլխուն, նըրբին ու սպորինի խող մը կը յօրինէ»: Ու այսպէս կը շարունակուի. անբուժելիութիւն՝ անհատին, բնազդին, ընկերութեան՝ իր բոլոր խողերով, «մատներն իրենց յետոյ կրնան մահեր դուժել մէկզմէկու»: Գործը կը յենի չորս սիւներու՝ «Մատուղօրհնութիւն», «Գիշերալիմ ժամ», «Արմնչութիւն», «Կոչում»: Ընդհանրական նոյնութիւն մը, որ երբեմն կը ձգտի նսեմացնել տարբերութիւնները զանազան կտորներու, թերեւս այս ազդեցութիւնը բազկացուցիչ է հեղինակին մտադրութեան, իր հաւաքածոյին ձեւի միաւորում մը տալու: Գործը ամբողջութեամբ կ'օղնէ մեղի ապրելու յոխորտ, մահացու եւ տիրապետող էքս-ին հետ, որ բանաստեղծութիւնն է: Հետաքրքրական է հեղինակին բազմահար հեռացումը իր ցաւէն: Տանջուած է մարմինը, բայց արիւնը արցունք չունի: Իր բառերով՝ լուս ու չոր կաթիլներ են, որ տառապանքով կը ծորին:

Բառերը ուժի դաշտեր են: Իւրաքանչիւր բառինք իր ուժն է, եւ իւրաքանչիւր բառնորմով բանաստեղծութիւնը կը կառուցուի իբրեւ մարմին, լեզուէն անդին է: Ան փրէժնիս է: Գրելը չի պարունակեր լեզուն, ան լեզուն իսկ է: Իսկ լեզուն, որ ինք իրեն համար կը խօսի՝ բանաստեղծութիւնն է: Հեղինակը մէջն է ներկային, փոխուստու կամ ժամանակի հարց չունի: Կեանքը յարակիցը մըն է. բազմաթիւ տեղեր ինքզինք վերբուսին կեանքի կոչելու փորձը կայ:

սիւս արդէմ
մարմին մը նոր
իրաշխով
մարմինն իր հին կը լքէ խոռվալոժ արմուճին
եւ կը քալէ կը քալէ ոգեմբմունք ու լսին
դէպի բացերը ծովուն

Եթէ ծովը անասմանն է, անժամանակը:

Սկիզբը եւ վերանորոգում. յետոյ անխուսափելին՝
զատանդանքի պէս.

Էւ ափն այն ափն այն ափն այն այն ափն
ափն այն որոններ
որուն կարօտէն
հուրն այս ամենի
խելայեղուրեամբ խելայեղուրեամբ
կը հանէ ոտքի
սերմերն արիւնքի

Ընթերցողը յանկարծ կը սկսի շարժիլ: Կար-
ծես չարժու՞մը աղատօրէն կարդալու տօնակառա-
րութիւնն է: Մեկուսացած, յուսարեկ եւ ունայ-
նաւար երգիչ մը չէ Արմէնեան: Ան ունի կու տայ
աշխարհի ձայնին եւ կ'աղբի յարատեւ գոյու-
թեան հրճուանքը: Գործը՝ տեսակ մը Ֆիզիքս-
կան եւ հոգեկան սքիսական, ուր մարմինը գո-
յութիւնն ունի իրբն վերային ստեղծագործու-
թիւն: Այստեղ՝ կը սկսի բախումը, հակընդդիմու-
թիւնը՝ երեսակայութեան եւ փորձառութեան, եւ
մարմինը կը խօսեցնէ իր փորձառութիւնները.

Ույնն ծէսերուն միաւորօրէն տրամադիր
վեհանձնօրէն սպասարկու
պիտի սիրէ պիտի դողայ շիրքամէքն պիտի շիկնի
շիրքամէքն պիտի ցանկայ

Հետաքրքրուած է նաեւ, թէ ի՞նչ կը պա-
տահի այդ փորձառութեան, երբ կը զրէ անոր
մտտին, «Էւ ափերով խորխափաղին կը սփռանցէ
մբունենջները հիւլէնիբուզ»: Սմբողջ զերթոյգու-
ղէրքը կը յենի այս ճիւղին վրայ, վերստեղծելու
եւ զիւսանելու: (exorcise) իր սեփական մարմ-
նին (կեանքին) բրտութիւնը եւ վերստեղծելու իր
տրեան խաղը (գրութիւնը), զարձեւալ բրտու-
թեան եւ դուրի միջեւ տեղ մը: Ընթերցողին աչ-
քը չի կրնար աննկատ անցնիլ այն յուզիչ մար-
դասիրութիւնէն, որ կը տրոփէ «պիտի կրնա՞ս
սպասել» եւ «Էւ երբեմն ես կանգ կ'առնեմ դէմ
յանքիման այս մարդուն» տողերով սկսող զերթը-
ւածներուն մէջ:

Երբեմն բաներու դուրսը կը ստանանչէ իր-
բեւ ուժ մը, որ միշտ անդին է, բայց սակաւին
անձկօրէն եւ անողբելիօրէն կրկնաւոր: Դէպ-
քին մէջ կ'աղբի իր ջիւղերու լման կազմով, յե-
տոյ յանկարծ վարպետօրէն դուրս կու գայ ու կը
լուսանկարէ.

ոսկի կու տամ
ոսկի կ'առնեմ
կը գոււմարեմ
ու կը գարնեմ չորսուկէտով
ու կը մնամ ափիքերան
ոսկին իմկաւ
Հանի Պարգեւ
հող գնեցէք

Տեղ-տեղ գերիրատաշտ ստուամներ կ'ընէ.
«Ինչպէս սաքերը նրբին ու զմայքոտ, ստլափայ-
տին շրթնահեղեր երբ կը թողուն»: «Նւ մենք
արտմութեամբ շրթունքէ շրթունք թոյնի լեզու-
ներ ախտահանեցինք»: «Ու մարմինն իս կլուսեցաւ
ինքն իր մութէն»:

Վե՛րջնապէս հայ բանաստեղծ մը, որուն հա-
մար կինը հրեշտակ կամ երազային քոյր չէ: Կայ
կնոջ մարմինը, մխտվ-սակարով, իրմէ դուրս ուր
կ'ուզէ ինքը ըլլալ. Վերապրումի շեշտը զարձեւալ:

Կայ նաեւ հողի մարմնի եւ սեփական մարմնի
մտերմութիւնը: «Աւարջնաքիւն» եւ «Սալվատանան»
կատրոնները, օրինակի համար: Կը պարփակեն տե-
սուցութիւնը եւ զգայաբանները իրենք զիրենք կը
քաշեն դէպի միայն: Խոհումը կ'երկարի մինչեւ
կը հասնի խաղաղութեան, որ յանկարծ իր ճառագայ-
թը կ'ուզէ այս քերթուածներու ամբողջ երկայն-
քին:

«Կոչում»ը, սքիսականի վերջին հանգրուանը,
մարդու եւ հայու տեսակ մը ինքնակենսագրու-
թիւն: Այստեղ՝ Սփիւռքը, որ ձերբազատուած իր
կարօտի հիւսնակութեանէն, ինքզինքը կը մտտէ, որ
«վերստին ու նոր, վերստին ու նոր, սեմին կը
հասնի»: Բայց ի՞նչ է սեմը իրեն համար, այդ
հետեւն է, անորո՞ջը, թէ՛ տեսանելին եւ, ու-
րեմն՝ ներկան: Հետաքրքրական է այս բանաս-
տեղծութեան մէջ ստանց հարցադրումի ծագած
հարցերու շեշտը: Բանաստեղծութիւն մը, ուր ե-
րաժշտական կատրի պէս վարկուր հեղահետէ կը
բարձրանայ.

Էւ դուն որ գիտես ընդմիջտ լուխու անպատու-
քիւնը եւ դուն որ կրնաս յարիտեօրէն
սերնդագործել գաղութներ դժխեմ եւ ապօրինի

Հարուստ է իրբեւ հայաշխարհիկ թեմա, եւ
անջատօրէն վարպետ՝ իր բանաստեղծութիւնը
տալու տիրական ու թաւ ձայնով.

Էւ դուն որ նորէն ամէն իրիկուն կը քնուի հեռուն
եւ տաժանելի տարագրութիւնդ
ծայրէն կը սկսի

Այստեղ է նուաճումը: Ինքնատիպ անկախու-
թիւնը, հեռացումը, աւանդայիններու մտերմու-
թիւնէն ետք: Էջըք՝ ոչ թէ ընդունուած, այլ՝ սե-
փական փորձառութեան մէջ, որ իրեն կու տայ
ցայաքը սեփական ձայնին եւ լեզուին: Ինչպէս
որ սիխուքահայ բանաստեղծութիւնը եզաւ Եղևու-
նէն ետք՝ ինք իր մէջ չի փակուի, այլ՝ կը բաց-
ւի. չի պտտներ՝ կը խօսի, սրբօհեանեւ իր դե-
մաց կայ բան մը, որ հայելի չէ, ալըմային
պտտմութիւն չէ, մարմին մըն է, մշտակա՛յ, ու-
րուն բարձրագոյնութեան հետ իր մտերմութիւնը
ունի այս հեղինակը, իր կերպը, ատելութիւնը
եւ դուրթը. բանաստեղծութեան հարցը բանաս-
տեղծին, նաեւ հայութեան հարցը Սփիւռքին:

Այլևս անհրաժեշտ է, որ զբողը ճանկերով քեր-
 ծէ գանկլու գէժքը իրտկանութեան, գեղին մատ-
 ներով արտահանէ առ ինքնամուղ սղբասացու-
 թիւնը որ յետեզեանեան մեր կեանքին մէջ կոչ-
 ւեցաւ՝ զբարկամութիւն: Աբարքը՝ զէջ մը յետո-
 մնաց քաղաքսիրթութեան մարդը յիշեցնող, որ
 իր փորձառութիւններու թոյնին խառնած է իր
 անցած ու գալիք ճանապարհներուն նկատմամբ
 թերեւս զարմացող ինքնավստահութիւն մը: Ըսի,
 որ ընթերցողը կը շարժի, որովհետեւ կը շարժի

այս զերթողազիրքը: Արևան պէս, որ կը շրջա-
 դայի մարմնին մէջ, բանաստեղծութիւնը կը շրջի
 Արմենեան բանաստեղծին մէջ: Կը հպի փորձա-
 ռութեան բերս ու նրբազգաց բարբ Երակներուն
 և հեղհեղ իր ճամբան կը բանայ: Այսինքն՝
 կ'երթայ սկիզբին՝ որ Բանն է, նոր սկիզբի մը
 համար:

Այսպէս է, որ անապարս Արլունը կը մերուի
 էկենտիկոս՝ Մարմնին:

ՎԵ ՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Կ. Ա Ր Մ Ե Ն Ե Ա Ն

Կ Ո Ջ Ո Ի Մ

եւ
 փաղափայլին
 այս բռնաբարուած աշխարհագրութեան

շիներ եմ տունն
 տուներու կազմին
 հիւսեր եմ պատեր
 փաշեր եմ սահման
 դռներս կղպեր
 բացեր պատուհան
 կը նայիմ հեռուն
 կը նայիմ երկրին
 ու կը կարօտնամ

ով գարմանալի կարօտի ընկեր
 մեմֆ ծնանֆ այսպէս
 կաթիլին խորէն
 ուր կը դղրդի երկիր մը քաճուն
 ուր կը գայրանայ գրկանֆին հիւլէն
 ուր կը մայրանայ արգանդը հողին
 հին մեռելներուն
 անանուն սովէն

երբ կոպը կոպին կը խրեմֆ ամուր
 լուսամուտները կը խցեմֆ
 ներսէն
 ալճոյն անանուն մեր մարմիններուն
 կը կաթի հողին

գաղութներն են հին
 որոնք կ'արքննան խորերէն մթին
 ու կը բզաւեն
 մեր բուռերուն մէջ ցանկեր կան վայրի
 որոնք կը գծեն արիւնի հետքեր
 մեր արիւնին մէջ համեր կան կծու
 որոնք կը լողան բիրտ հոսանքն ի վեր
 մեր մորքը կ'այրի
 աղերէն սիրոյ
 բոյրեր ամենի մեզ կը խոշտանգեն
 մենք կու լանք լոին
 մենք կ'երգենք խապոս
 Եւ որտորնդոստ մեր պարը վայրի
 լանջեր լանջերու կը կպէ հուժկու
 զգոյշ վատորդի
 մեր լեզուին վրայ քոյներ կան հատու

կը հասնինք բեզի կաթիլին խորէն
 երբ կոպը կոպին կծկուի ամուր
 երբ մոայլօրէն
 ժանտախտը դեղին մատները խրէ
 Բու հին ջուրերուդ գաղտնի ակունքին
 Եւ ոխերմօրէն
 սերմեր կատաղի ներսդ գրոհեն

մենք ցեղն ենք լոին
 մեզմէ կը ծնի ողբերգութիւնը
 անհամբերութեան խաւար ջուրերուն ամբարտակ կանգնող
 համբերութիւնը
 արիւնն ենք մենք բիրտ
 արիւնն ենք մենք լուռ
 կուռ գօրութիւնն ենք
 մեզի մատուցուած ողորմութիւնը
 հրեր ենք մէկդի
 ձեր եղեմները տուեր ոտքի տակ
 հանգրուանները այրեր ենք բոյոր

Եւ հասեր սեմին

հասեր ենք սեմին
 կեցեր ենք տխուր
 կը նայինք վախով բուռերուն մեր հին
 բուռերն այս մահուր
 բուռերն այս մեկին

ինչու
 Աստուած իմ
 բուժումն այս լկտի
 եւ աղերսագին
 մարմինն այս մոլոր ինչու կ'ափսոսայ
 բռնութիւնն ահեղ
 իր հին արիւնին
 ինչու կը մոռնայ պոռթկումն իր լոին
 ինչու կ'աղերսէ ելին այս մեղաւոր
 եւ կը յօրինէ եզրեր տաղտկալի մետասաներորդ
 անհարկի ժամուն

եւ դեռ կը սիրէ
 սիրով կաթոցին
 որդին իր օտար որդին իր գաղտնի
 որուն կարօտէն
 ամէն իրիկուն
 եղեմ եւ դժոխք մատնելով սուգի կեանքէն մատուցուած
 ողորմութիւնը ոտքի տակ տալով
 կանգնելով ոտքի
 վերստին ու հոր վերստին ու հոր
 սեմին կը հասնի

ով զարմանալի կարօտի ընկեր
 որ գիտես խոցել մարմինդ ոխով
 որ գիտես մղել անարիւն կռիւ
 որ գիտես մղուիլ տենչերէն խռով
 եւ գիտես տոկալ
 եւ գիտես ապրիլ
 եւ դեռ զայրութեամբ անըմբռնելի
 հաւատարմութեան երդումներ պոկել
 ու նաեւ կրնաս
 ինչ մեծ դիւրութեամբ
 ըլլալ անտրտունջ կիրթ քաղաքացին
 այս փսմնելի աշխարհագրութեան
 եւ դեռ հեշտութեամբ
 մարմինդ յուզել
 եւ դեռ յօրինել ուտայններ նրբին
 ձեռնհասութեամբ զգեստաւորել մարմինդ տկլոր

եւ կրնաս անհուն անպարագրելի անձնասիրութեամբ
 ֆու հին տաղտկալի մարմինդ շոյել
 արքունիքով տրտում

ամէն իրիկուն
 յուսահատօրէն
 եւ կը փնտռեմ խարխալ մը տակուն

եւ կը զարնուիմ

բարափին այս հին

խոհ մը կը ծնի խորերէն մեկին
 խոհեր կը խուժեն ուղեղիս մթին
 կածաններն ի վեր
 եւ կը սարսամ բնագդէն լռին

ան կրնայ մէկէն արթննալ խռով
 կրնայ խորտակել թումբերն արիւնին
 դուրս կրնայ հրել մարմինն իր հունէն
 եւ աղանդամով
 պատերն այս լացի
 կրնայ ուրանալ

ու քանդել հիմէն

դուն քաղաքացին այս անկարելի աշխարհագրութեան
 որ դեռ կը յիշես հեղումն անօրէն
 անասնաբարոյ
 քու հին արիւնիդ եւ դեռ կը մղուիս
 նախնի արիւնէն

եւ կը կարօտնաս կոչումն անկրօն

եւ դեռ գաղտնօրէն
 ամէն իրիկուն
 կը նայիս դէմքիդ

արթնցիր քունէդ
 արթնցիր քունէդ
 բարութեան շուներ կը յարալիգեն ներքաններդ գէջ
 եւ դուն

որ գիտես ընդմիշտ լռելու անպատուութիւնը
 եւ դուն որ կրնաս յաւիտենօրէն

սերնդագործել գաղութներ դժխեմ եւ ապօրինի

եւ դուն որ նորէն ամէն իրիկուն կը բշուխ հեռուն
 եւ տաժանելի տարագրութիւնդ
 ծայրէն կ'ըսկսի

դեւերն արիւնիդ այժմ կը լռեն
 դրանդ հտին
 դեւերն արիւնիդ այժմ կ'ըսպասեն
 դաւադիր
 ջղուտ

դեւերն արիւնիդ իջեր են փողոց
 քեզ կը փնտասեն

գիշերուան մութին

արթնցիր բունէդ արթնցիր բունէդ

դեւերն արիւնիդ պիտի տապալեն մարմինդ բունէն
 բոցերն արիւնիդ պիտի կլանեն
 պատուհան ու դուռ
 կարօտդ լուծուի տարբերուն իր հին
 տարբերն արիւնիդ պիտի հրնուին
 մերկութեամբ մը նոր

եւ ցեղն այս լռին
 շարտած մէկդի հղեմներն իր սին
 ցեղն այս ահաւոր
 սահմոկած
 սեմին

պիտի վերջապէս
 բուռերն իր այրէ
 եւ դաշինքն իր կիրք խզելով անփոյթ
 իր տանիքներէն
 իր քաղաքներուն անցքերէն գաղտնի
 եւ հին լեռներէն

պիտի վերջապէս
 ափունքին կռուի
 մարմինն իր նետէ

ԿԱՐՕ ԱՐՄԵՆԵԱՆ

«Պ Է Պ Է Ք Ս»

Բեմադրութիւն՝ ԶՕՀՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆԻ

«Պէպէտս» խողը կը ներկայացնէ երկատարը զոչպի մը փոխյարարեցութիւնները, որոնք կառուցուած են անվստահութեան ու սուտին ստեղծած իրերայաջորդ դէպքերու վրայ: Սուտի մը կը յաջորդէ ուրիշ եւ աւելի մեծ սուտերու շարան մը, ծածկելու համար առաջինը: Արդարեւ, կինը՝ Քեթի լարեկամի մը հետ դադանօրէն եղած է ճաշարանի մը մէջ, ճաշարանատէրը՝ Հէրի ճանչցած է զինք, եւ լուրը հասցուցած անոր տմուսնոյն, Ուիլեմըմի, որ խարուած ամուսինն է: Ուիլեմը բարկացած՝ կը լքէ տունը: Քեթի իր բարեկամուհիին՝ Մէկիլի հետ համախորհուրդ, գոնացուն հնարքներու կը դիմեն, Ուիլեմը տուն բերելու համար: Նամակներ կ'ուղարկուին ամուսնոյն, ուր Քեթի անուղղակիօրէն կը հասկըցընէ, թէ «պէպէտք» մը կը սպասէ: Զաւակի մը ծնունդը (կրկին սուտ) միակ գրաւականն է ամուսինը տուն վերադարձնելու:

Սակայն Քեթի, Մէկիլ եւ Ճիմի եռեակին համար կը ստեղծուի դժուար կացութիւն մը, երբ հեռագրերը կը հաղորդէ ամուսնոյն վերադարձը չակնկալուած պահու մը, այսինքն՝ նոյն գիշերը: Մինչ մանկամտուրի անօրէնուհին խոստացած է որդեգրուելիք նորածինը յանձնել յաջորդ առուօտուն միայն: Հարկ է ամէն գնով ապահովել «պէպէտք»ը, Ուիլեմի ժամանումէն առաջ: Երկու կիներու որոշումով այս պարտականութիւնը կը յանձնուի Ճիմիի, որուն հետ Քեթի ճաշած էր ճաշարանին մէջ, եւ որ Քեթիի սպառնալիքներուն տակ՝ ակամայ կը ստիպուի «տոնւանդակ» խոստացուած նորածինը մանկամտուրէն, որպէսզի Ճիմիի կինը չիմանայ, թէ իր ամուսնոյն հետ ճաշած է Քեթին:

Մինչեւ հոս դէպքերը կ'ընթանան այնպէս՝ ինչպէս դժած էին երկու մանկամարդուհիները, սակայն Ուիլեմի կանուր ժամանումով կը փոխուի կացութիւնը եւ այլեւս Քեթի, Մէկիլ եւ Ճիմի ձեռով մը իրենք կ'իյնան իրենց պատրաստած ծուղակին մէջ: Ծիծաղաշարժ դէպքեր ու անանկակներ իրարու կը յաջորդեն, մէկի փոխարէն երեք երկխոսներ կը բերուին տուն: Կը հասնի նաեւ մանկամտուրի անօրէնուհին, որ կը սպառնայ օրինական միջոցներու դիմել, որովհետեւ կարելի չէ եղած առաջին նորածինի վերադարձը ապահովել մանկամտուր: Այս շփոթ կացութեան վերջ կու տայ Ճիմի, պատմելով եղբւրեւորները խարուած ամուսնոյն եւ յայտնելով անոր այն «խաբերակ»ին անունը, որուն հետ ճաշած էր իր կինը:

Գիրաւհատուրդ եւ բուրբին մատչելի նիւթ մը,

որ յաղեցած չէ դէպքերու զարգացումով ու անկնկալներու յաջորդական կառուցով, կուտայ իր ներկայացումով հանդիսատեսը դնելու ջշարգրի ու ձանձրացնող մթնոլորտի մը մէջ: Երկարաձիգ, միպաղաղ ու դանդաղ ընթացք մը, ուր ենթադրեալ անկնկալներ կու գան շեշտուած ու բռնագրօսիկ խնդուքներով, չափազանցեալ դիմախոզերով ըողարկել խողէն չթելադրուող ուժականութիւնը: Քեթի եւ Ուիլեմը՝ խոռուածքային իրենց տկար կէտերով խողին սկիզբէն արդէն երկու այն լծակներն են, որոնց վրայ կ'ապրելով հանդիսատեսը, որ յենի «կատակերգութեան» վախճանը: Քեթի իր սուտ խօսելու անվարժութեամբ, եւ Ուիլեմը իր «թէ՛ գաւակ մը ունեցած ըլլայինք» նախապատեթեան յայտարարութեամբ՝ կը պատրաստեն հանդիսատեսին միտքը դէպի այն վախճանը, ուր այս զոչպը դատապարտուած է ապրել իր կացութիւնը, մէկը՝ սըտելու իր դժբախտութեամբ, միւսը՝ գաւակի մը գոյութենէն զրկուած ըլլալու դժբախտութեամբ կրկին:

Պէտք է ըսել, որ իր օգտադրած ուժերով բեմադրիչ Զօհրայ Եագուպեան փորձած էր դուրս բերել խողը իր երկարաձիգ ու թոյլ մթնոլորտէն: Գերակատարները փորձեցին ցուցաբերել աշխոժտութիւն, հաղորդականութիւն եւ արագ խողարկութիւն, օգտադրածելով չափազանցեալ եւ շեշտուած քաճքահներ, լարիանութիւն եւ դիմախոզ:

Արդարեւ, Սիլվա Ֆրանքեան (Քեթի) իր համարձակ շարժումներով ու տրիպան ներկայութեամբ մինչեւ խողին աւարտ յաջողեցաւ մարմնաւորել ճարպիկ կնոջ տիպարը, առանց ընկրկելու ու ապրելու պարտուողի կամ յանցաւորի հոգեբանութիւնը, միշտ ամուսնոյն սրտին մէջ գողտրիկ անկիւն մը գրաւելու հաստատ որոշումով:

Յուլինէ Յակոբեան (Մէկիլ), թէեւ ապաւորիչ իր բեմական ներկայութեամբ, սակայն նուազ համողիչ կերպով ներկայացուց իր բեմական կարգութիւնները, եւ յաճախ ինքզինք զբսեւորելու համար դիմեց դիմախոզին ու զլսու շարժումներու օգտադրման:

Երկչոտ ու լալիան սպասուհիի դերով հանդէս եկաւ Մեխակ Եագուպեան (Չոյ), որ կուտայ իր տանտիրուհիին հաշտոյն, երբ այր ու կին կը հակադրուին իրարու: Խումբին նախորդ երկու խողերուն մէջ իր վերցուցած դերերով շահած փորձառութեամբ, կ'անկախուէր, որ Մեխակ Եագուպեան աւելի ղոհացուցիչ խողարկութիւն

ցուցաբերէր եւ ինքզինք հրկնելու վիճակէն զուրս գար, ամենապէս խաղին զարդացումին ու անարտին հետ, շատ ինքնարուիւ լսցի հեղումով մը, երբ կը յայտարարէր «ես ալ պէպէք կ'ուզեմ»:

Վերջին արարին մէջ երկու կարճ դերերով բեմ բարձրացող Միրա Աստուերեան (Մոս), եւ Այտա Փրանքեան (Մլա Փիթինիթըն) զոյգէն առաջինը յաջողեցաւ աշակէս կոչուած «անմխ» ոպատուէի ախարը մարմնաւորել յաջողութեամբ ու ընկանութեամբ, ամէն հարցումի միշտ նոյն պատասխանը առնող իր «հապօ», հապօ»ներով: Իսկ Այտա Փրանքեան, մանկամտերի անօրէնուհին, մնաց բռնադուրսիկ բարկութեան ու ջղաջըլդիւ միջնուրտի մը մէջ, իր բառերը չեղան հարտրատ արձագանգը մանկամտերի անօրէնուհի մը պատասխանատուութիւնը զրոնւորող ասօնապի մը, նորածինին առեւանդումին հետեւնըսով, բացի զէմքի խոթոս արաայայուեթենէն, որ հաշտ էր իր վերցուցած դերին:

Ինչ կը վերաբերի միւս դերակատարներուն, իր երկչոտ, կրասորական, զլւրահաւան աղամարդու մարմնաւորած դերով մնայուն ներկայութիւն էր Վաչէ Ասաքեան (Ճիմի): Մէկ կայութեան միւսը անցնելու արող ընդունակութեամբ, որ իրեն վստահուած դերը յաղթահարելու յատկանիւն էր: Իրբեւ առաջին անգամ պատասխանատու դերով մը հանդէս եկող դերակատար, ան ցուցաբերեց լաւ խաղարկութիւն: Սակայն վերջնական դնահատում մը ընելու համար պէտք է զինք տեսնել քանի մը ալ խաղերու մէջ եւս, ուր թերեւս իր կարողութիւնները կարենան դրսեւորուիլ աւելի ամբողջական տիպարներու մէջ:

Գէորգ Նալպանեանի (Ուելերմ) արտասանած «ստախօս» բառով կը բացուի խաղը: Բարկացած ու միաթամանակ խարսած ամուսինն է ան, կտակածամիտ՝ կնոջ նկատմամբ: Ուելերմի երկրորդ ու թաքուն մէկ երեսը՝ իր բարութիւնն ու տածած սէրն է մանուկներու եւ երեխաներու նկատմամբ, որուն զրեւորման մէջ աւելի բնա-

կան եւ հեղատահ էր իր խաղարկութիւնը, քան զայրոյթի պահերուն:

Զօհրայ Եաղուպեան (Հէնրի) այս խաղին մէջ նուազապէս իջեցուցած էր իր բաժինը, երեւնալով մէկ անգամ միայն, ճարպիկ ու ճկուն ճաշարանատէրի դերի մը մէջ: Արաղութիւն, ճկունութիւն, զլմխաղ եւ ճայնի ելեւէջ եկան յաջողութեամբ պտակելու Հէնրիի ախարը: Պարզ է, որ Զօհրայ Եաղուպեան, այս խաղին դժով, իր ժամանակը առաւելարար արտադրած է բեմադրութեան պահանջած աշխատանքներուն:

Վերջին արարին մէջ ոստիկանի կարճ դերով մը բեմ եկաւ նաեւ Տիգրան Մանուկեան, որ չկրցաւ խաղին ընդհանուր միջնուրտին մէջ մըտնել եւ յաւելեալ վալլ մը տալ անոր: Ան իր բաժինը ներկայացուց քանի մը նախադասութիւններու պարզ արտասանութեամբ:

Նման պարտադաներու, աշինքն՝ երբ հարցը կը վերաբերի թարգմանուած խաղ մը ներկայացնելու, կը ծայլին երկու հիմնական հարցեր: Առաջինը՝ նիւթին ընարութիւնն է: Օտար դարձ մը հայերէնի թարգմանելով, բեմադրիչը ի՛նչ չափանիւններով ճամբայ կ'ելլէ արդեօք, նոր ո՞ճ մը կ'ուղէ ներմուծել հայ բեմէն ներս, դատական դարձ մը հրամցնել հանդիսատեսին, թէ ալ բան:

Մեր կարծիքով, «Պէպէքս» խաղին տիւթով կարելի չէ նման հոտատուած մը ընել, որովհետեւ ոչ մէկ տուեալով կ'արդարանայ անոր ընարութիւնը: Նոյն ուժերով եւ թատերական ալ կտարի մը բեմադրութեամբ՝ Զօհրայ Եաղուպեան վստահարար պիտի կարենար հրամցնել աւելի յաջող դարձ մը:

Ինչ կը վերաբերի երկրորդ հարցին, տիւկա թարգմանական աշխատանքն է, բա՛ն մը, որ թարգմանութեան աւելին ըլլայ, կտարին հայացումը ըլլայ: Գծբախտարար հոս հրամցուածը զուրկ էր ալ արժանիքէն:

ԷԼՕ ՍԱՐԱՃԵԱՆ



ՄԻԱՏԵՍԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Հաւանաբար ամէն հայ առանձին հրձուանք մը կ'ապրի, երբ հայրենիքի մէջ թէ հոս՝ Մեծառքանչին նոյն բառը նոյն հնչիւնով կ'արտասանենք եւ կը դրենք նոյն ուղղագրութեամբ: Հայաստանի «դեկրետերէն»էն ետք մանաւանդ ճշգրտած իւրաքանչիւր միատեսակութիւն յազթանակի մը պէս կը հնչէ: Երբեմն կը հանդիպինք նոյնիսկ զարմանք պատճառով ու հարցումներու գուռ բացող միատեսակութիւններու, ինչպէս է պարապան, օրինակ, հետեւեալ բառերուն:

Մենք կը գործածենք սառնարան, պատշգամ, բաղնիք, իսկ արեւելահայերը անոնց փոխարէն ունին սառցարան, պատշգամբ, բաղանիք տարբերակները, բայց կը պատահի նաեւ, որ ճիշդ մեր ձեւերով ուղղագրեն նոյն բառերը: Օրինակ, էլի Ստեփանեան գործածած է սառնարան ձեւը («Գարուն», 1974 էջ 50), Սարգիս Մելիքաէթեան՝ պատշգամ («Մտերմական Շիրվանգադէ»ն էջ 19), իսկ Նորենց՝ բաղնիքը («Յուշեր եւ արձագանգներ», էջ 213):

Արդ, հայրենի մեր գրողներուն զրշին տակ վրիպակ պէտք է հաշուել վերոյիշեալ բառերուն արեւմտահայ կառուցը, թէ պիտի ընդունինք, «որ երկուսն էլ միանգամայն եւ հաւասարապէս ճիշդ են»:

Հայրենի մեր մամուլին մէջ երկու ձեւերով յաճախակիօրէն գործածուող բառերէն մէկն ալ օգանաւակայան-օղակայանն է: Առաջ, որքան ծանօթ է մեզի, միայն առաջինը կը գործածէին, իսկ վաթսուական թուականներէն ետք սկսան տեղ տալ թէ՛ մէկուն եւ թէ՛ միւսին: Կը թուի, թէ այս բառը առանձին նւթ զարծած է նաեւ մայրենի լեզուով շահագրգիռ մաւառականներու շրջանակին մէջ: «Սովետական գրականութիւն» ամսագրի 1968 տարեշրջանի Ապրիլի համարին մէջ՝ Գվիգոն Վահանեան կը գրէ.

«Եթէ այսօր տերուրոմը քարգմանում է օգանաւակայան, ապա պիտի եմքադրիլ, որ հետագայում դրանից ծնունդ է առնելու օղակայան բառը, որը չի նշանակում օդի կայան, այլ օդի հետ կապ ունեցող կայան կամ կարելի է հասկանալ օգանաւակայան՝ կրնատ ձեւով»:

Պէտք է ըսել, որ Գվիգոն Վահանեանի պատճառաբանութենէն շատ առաջ, նոյն «Սովետական գրականութիւն» ամսագրին մէջ, Արփա-Սեւան ջրատարին մասին գրուած ու Յարութիւն Մարջանեան ու Վարդգէս Ռուսաստանի գիտնականներուն միացեալ ստորագրութիւնը կրող մէկ յօդուածին մէջ արդէն կիրարկուած է խնդրոյ առարկայ բառին կրճատ ձեւը՝ օղակայան:

«Իսկ ջրամբարի պատուարով կ'անցնի նոր պողոտան՝ կապիլով առողջարանն օղակայանի եւ նոր կառուցուող աւանի հետ» (1963, թիւ 7, էջ 111):

Այս նոյն ձեւը որդեգրած են նաեւ Խաթակ Գիւլնազարեան, Կարէն Ա. Սիմոնեան, Ռաֆայէլ Աւագեան եւ ուրիշներ: Կը թուի սակայն, որ «Սովետական գրականութիւն»ը դեռ չէ կողմնորոշուած այս բառին հանդէպ եւ ա-

դատ ձգած է իր աշխատակիցները դործածելու ե՛լ մէկ, ե՛լ միւս ձեւը, այն-
քան ազատ, որ Անարէյ Իետովէն Ռաֆայէլ Աւաղեանի թարգմանած «Հա-
յաստանի դասերը» ակնարկին մէջ (1970, թիւ 10) թոյլատրած է թէ՛ օգի
կայանը եւ թէ՛ օգտնուելի կայանը. «Ես քայլեցի դէպի օգակայանի շէնքը եւ
տեսայ, որ...» (էջ 3) «Ես պէտք է, ինչպէս Մոսկուայում ինձ ասել էին,
Արարատը տեսնէի անմիջապէս օդանավայանից» (էջ 24) :

Այս բտտակազմութիւնները կրնան երկուքն ալ ճիշդ պատկերացնել ի-
րենց վստահուած միտքը, կը մնայ ընարել գեղեցիկը եւ պարզ է, որ գեղե-
ցիկը կրճատ ձեւն է, օգակայանը, որ արդէն կը դռնուել ընդհանրացման
ճամբուն վրայ :

Օգտնուելի կայանին պէս չարչարալից կազմութիւն մը ունի նաեւ հե-
ռուսացոյց բառը, որուն գիմաց մենք ունինք ձայնասփիւռին օրինակով
կազմուած պատկերասփիւռը : Տարակոյս չկայ, որ այս վերջինը թէ՛ իմաս-
տային տեսակէտով եւ թէ՛ հնչականութեամբ աւելի նպատակայարմար է,
քան հեռուստացոյցը :

Այս բառին դէմ մէկ դանդաա լած ենք միայն, «Սովետական գրակա-
նութիւն» ամսագրին (1968) մէջ լոյս ընծայուած Ռուբէն Զարեանի «Վեր-
ջին հանդիպում» անուն դրութեան էջերուն, Վահրամ Փափազեանի բերնով .

«Նա ասում է, որ հանդէս գամ հեռուստատեսութեամբ : Շատ երկար
բառ է, չէ՞, կարծում եմ, որ հարկաւոր է կրճատել, քերեւս հեռացո՞յց կամ
հեռատեսիլ՞ . յաւ, դբա մտաիմ քոզ ուրիշները մտածեն» :

Տասնամեակ մը անցաւ, բայց ոչ ոք մտածեց հայ ընթերցողը ազա-
տել իր լսողութիւնը վերաւորոզ այդ բառին բարդ ու բարդածանց բեռնե-
րէն : Օր մը պիտի մտածեն հարկաւ եւ Ռաֆայէլ Իշխանեան վերջիններէն
մէկը պիտի չըլլայ անտարակոյս :

Երկակենցող ձեւ մը ունի նաեւ ընդհակառակն կամ ընդհակառակը
չաղկապը : Մենք առաւելաբար կը դործածենք աստջին ձեւը, ընդհակառակն,
իսկ հայրենիքին մէջ՝ երկրորդը, ընդհակառակը : Չմոռնանք բռելու, որ
նոյն բառը երկու տեսակ գրելու մեր պարագան պէտք չէ զարմանալի թուել,
մենք հիմա Սփիւռք ենք ու Ատտուած պահէ մեզ ու լեզուական մեր անիշխա-
նութիւնը, բայց հայրենիքի մէջ, ուր բազմալի միատեսակութիւնը ախրա-
կան երեւոյթ է, պղտիկ չեղում մը ակնբախ կը դառնայ իսկոյն : Հոն ընդ-
հանրացած ընդհակառակը ձեւէն ահաւաստիկ քանի մը չեզումներ, յայտնի
մտաւորականներու գրչին ասկ .

Վ. ՆՈՐԵՆՅ

Այդ ոչմարտութիւնը մագաչափ չի նսեմացնում հայ միւս տաղանդա-
ւոր բանաստեղծների անհատականութիւնն ու կատարած գործը եւ նրանցից
ամէն մէկի տեղը հայ գրականութեան մէջ : Ընդհակառակն, այդ ցոյց է տա-
լիս, թէ ինչպիսի՛ հօգոր ու կենսահաստատ ակունքներից է գալիս մեր բա-
նաստեղծութիւնը եւ ինչպիսի՛ հարստութեամբ է գնում դէպի նոր կատա-
րելագործութիւն :

(«Յուշեր եւ արձագանգներ», էջ 184)

Ս. ԱՅՎԱԶԵԱՆ

...Աստղածորում փոխանակ պայքարելու «հին մնացուկների» դէմ,

ընդհակառակն, իր պաշտպանութեան տակ է առել «մոլի կղերական» Տէր Սրապեանին :

(«Տուր ձեռքդ կեանք», էջ 325)

էԴ. ԱՂԱՅԵԱՆ

...Ընդհակառակն, դրանք գրողին հնարաւորութիւն են տալիս գրանելու եւ ընտրելու լաւը, գեղեցիկը, կենսունակը, ճշգրիտը, մի խօսքով՝ տուեալ ստեղծագործութեան բովանդակութիւնը, տուեալ կերպարին, դրութեանը, նկարագրուող երեւոյթին համապատասխան ձեւաւորումը :

(«Սովետական գրականութիւն», 1963, թիւ 6, էջ 111)

Ու նորէն նոյն հարցումը, — այս ձեւերէն մէ՞կը միայն ճիշդ է, թէ «երկուսն էլ միանգամայն եւ հաւասարապէս ճիշդ են» :

Լուծման կարօտ ուրիշ խնդիր եւս :

Մենք նրբութիւն մը գրած ենք գուրկ եւ գերծ ստորոգելիներուն միջեւ եւ կը ջանանք բծախնդրօրէն հաւատարիմ մնալ անոնց նրբերանդներուն : Զուրկը կը գործածենք գրականի պարադային, եւ զերծը՝ բացասականի : Կ'ըսենք, օրինակ, ան գուրկ է լեզուական հայրենասիրութեան եւ այն միւսը գերծ է օտարամոլութեան ախտերէն :

Հայրենի մեր գրողները վերոյիշեալ նրբերանդներուն արժէք չեն տար : Երկու օրինակ .

«Բայց ինչպէս բերուած քէկուզ եւ մէկ օրինակից տեսանք, այդ գործերը գերծ չեն նաեւ «կենսական նիւթի վաւերականութիւնից» :

(«Սովետական գրականութիւն», 1968, թիւ 18, էջ 23)

«Յաւօք, մեր շատ դասագրքեր գերծ են այս կարեւոր յատկութիւններէն» :

(Ս. Տ. Հախումեան «Գարուն», 1975, թիւ 1, էջ 66)

Մեր իմացումով՝ «կենսական նիւթի վաւերականութիւնը» եւ «կարեւոր յատկութիւնները» ազնիւ արժանիքներ են, որոնցմէ տուեալ պահու մը զուրկ կարելի է մնալ միայն եւ ոչ թէ զերծ :

Ո՞ր մէկին է հիմա ճիշդը, մեր բծախնդրութիւնը, թէ իրենց անսովորութիւնը :

Անշուշտ «մեր»ը եւ «իրենց»ը հոս կը գործածուին պայմանական ձեւով, մերը եւ ձերը չկայ, հարցը կը վերաբերի ամէնուս պատկանող սրբութեան մը նրբերանդներուն հաստատման :

Վերջապէս, այդ մասին ու Աճառեանի կապուած եւ իրազեկի մը կողմէ գրի առնուած հետեւեալ մանրագէտով .

«Մի անգամ, իր օգնականներից պատմութեան քանգարանի այսօրւայ տնօրէն «գիտութեան քեկնածու» Կարօ Ղաֆատարեանը հարցնում է, քէ ինչո՞ւ Անտեանը գրում է արեւելահայերէն, բայց խօսում արեւմտահայերէն, ինչո՞ւ «մեր լեզուով» չի խօսում» :

«Ծօ ապուշ, յիմար, մեր ու ձեր լեզուն ո՞րն է : Միայն եւ միմիայն մի հայ լեզու կայ, — կատաղած պատասխանում է Անտեանը» :

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

Հ. Յ. Գ. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆ (խորհրդածուր-իւններ), Ռուբէն, Պէյրութ,
1978:

ԲԱՆԱՍՏԵՎԾՈՒԹԻՒՆՆԵՐ, Հարփիկ Թամրազեան, Թեհրան, 1978:



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Յ. ԳԵՂԱՐԴ

ՍԻՐՈՅ ԵՒ ՄԵՂՔԻ ՀԱՄԱՆՈՒԱԳ

(ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐ)

ԼԻԲԱՆԱՆ 50 Լ. ՈՍԿԻ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ 27 ՏՈԼԱՐ

ՀԱՏԱՎԱՅԱՌ 5 Լ. ՈՍԿԻ

پاکین

مجلة شهرية ، ادبية وفنية علمية
مدير المسؤول
السيد ارتين كارنيك قزائجيان

PAKINE

REVUE MENSUELLE
LITTÉRAIRE & ARTISTIQUE

Propriétaire

Dr. A. KAZANDJIAN

Բ Ա Գ Ի Ն

ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

ԽՄԲԱԳԻՐ

Գ. ՍՆԱԳԻԱՆ

Հեռագրային՝ 296898